

ՀԱՅԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԽՆԱՏԻՑՈՒՄ

ՓՐԻԿ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ԼԿԸ
679



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ՃՐԱՎԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՅԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Միջնադարի հայկական խոռորագույն բանաստեղծ Քրիկի բանաստեղծությունների ժողովածու նույտարակելու մասին Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահությունը 1937 թ. մայիսի 4-ին ընդունեց հետևյալ վորոշումը.

1. Հանձնարարել Պատմության յեզ Գրականության ինստիտուտին՝ պատրաստել հրատարակման համար միջնադարի խոչորագույն հայկական աշխարհիկ դեմոկրատական բանաստեղծ Ֆրիկի բանաստեղծությունների ժողովածուն, ամփոփելով այդ ժողովածվի մեջ բոլոր յեղած՝ թե հրատարակված և թե չհրատարակված բանաստեղծությունները, վորոնց թվում՝ նայել արտասահմանում յիշածները.

2. Առաջարկել Պետհրատին՝ ապահովել Ֆրիկի բանաստեղծությունների գրքի բարձրորակ հրատարակումը 1937 թ., կցելով այդ գրքին նախաբան և գիտական մեկնաբանություններ:

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Ֆրիկը, վորին նվիրված և այս ժողովածուն, միջնադարյան մեր
աշխարհիկ պոեզիայի նշանավոր գելոկրատ ներկայացուցիչներից մեկն
է, վորը բուրժուական նացիոնալիստների վաստարարական գործունեյու-
թյան հետեանքով շատ բիշ և ծանոթ մեր ընթերցող հասարակությանը:
Բուրժուազիան և նրա գաղափարախոսները, դիմավորյալ կերպով ար-
դելք են հանդիսացել ուսումնամասիրելու վոչ միարն Ֆրիկի, այլև դրեթե
մեր բոլոր զեմոկրատ գրողների ստեղծագործությունները, վորովհետեւ
այդ գրողները իրենց յերկերում մերկացնում են ժամանակից շահա-
գործող գասակարգերի շահատակությունն ու կեղեցումը:

Մեր անցյալի կոռլատուրական ժառանգությունը ժխտելու գիծ
ելին վարում նաև հայ սպիցիֆիկ նացիոնալիստ տարրերը՝ ժողովր-
թշնամիները՝ Ա. Հովհաննիսյանը, Խանջյանը, Աժատունին և մյուս-
ները, Սակայն հայ ժողովրդի ամենասեծ բարեկամ, բոլորի կողմից
սիրված մեծ Ստալինի անմիջական դեկավարությամբ և ցուցումներով
Հայաստանի բոլչեվիկները մերկացրին ու ջախջախեցին ժողովրդի այդ
յերիցս անարգ թշնամիներին, լայն հնարավորություններ ստեղ-
ծելով ուսումնամասիրելու մեր անցյալի կուտուրական ժառանգությունը,
վեր հանելու նրա զեմոկրատական ներկայացուցիչներին, նրանց, վորոնց
համառորեն շարունակում ելին անտեսել հայ ժողովրդի կուտուրայի
այսպես կոչված «բարեկամները»:

Հայ բուրժուազիայի ու նրա լակեյների կողմից մոռացության
մատնված գրողներից մեկն ելմիջնադարյան հայ դեմոկրատիայի ձգտում-
ների և ապրումների, կեղեքողների դեմ ըմբռստացման տրամադրու-
թյունների լավագույն յերգիչ Ֆրիկն և Մեր միջնադարյան այդ խո-
շորագույն աշխարհիկ զբողի յերկերի լիակատար ակադեմիական հրա-
տարակության նախապատրաստման համար Հայկական Խորհրդային
Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական Գործադիր նոմի-

աելի վորոշումով կազմված եղատուկ հանձնաժողով։ Հանձնաժողովն արդեն վորոշ ձեռնարկումների դիմել ե՝ իրեն արված այդ պատվավոր հանձնարարությունները կատարելու։ Ներկա ժողովածուն այդ հանձնարարության կատարման առաջին նախապատրաստական քայլն եւ Ֆրիկի յերկերի լիակատար հրատարակումը պահանջում ե յերկարատև և համառ աշխատանք, քանի վոր այդ մեծանուն բանաստեղծի աշխատությունները, բայցի 11 վոտանափորներից, մնացած բոլորն ել մինչեւ որս չեն հրապարակված և ցրված են Խորհրդային Հայաստանի ու Հայաստանից դուրս գտնվող հայկական հին ձեռագրերի մեջ։ Ներկա ժողովածուի մեջ բացի հիշյալ 11 տաղերից, մնացած 10 տաղերը տպագրվում են առաջին անգամ։

Հայկական ԽՍՀ Պատմության և Գրականության Խնսութուտն արդեն հարկ յեղած միջոցները ձեռք ե առել հավաքելու Ֆրիկի բոլոր յերկերը, գրանով նախապատրաստելով այդ մեծանուն բանաստեղծի գործերի լիակատար հրատարակությունը։

Նկատի ունենալով, վոր վերոհիշյալ գործը մատնաշված դժվարությունների պատճառով կարող ե վորոշ չափով ուշանալ, ինստիտուտը հրատարակության և հանձնում ներկա ժողովածուն՝ Ֆրիկին մերը ընթերցող աշխատավոր մասսային ծանոթացնելու համար։

Ժողովածուի մեջ զետեղված հետազոտություններն առաջին փորձերն են և այդ պատճառով ել թերություններից զերծ լինել չեն կարող։ Ըսթերցող մասսաների շահեկան դիաստոթյուններով հնարավոր կլինի ակադեմիական հրատարակությունն ավելի անթերի կատարելու։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒ

Ա. Պ Պ Պ Ա Ս Ա Ն Յ Ե Վ Ա Հ Ա Ր Ա Ւ Թ Յ Ա Բ Ա Յ

ՖՐԻԿԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

XIII—XIV դարեր

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ա Կ Ն Ա Ր Կ

I.

11-րդ դարի կեսերին Առաջավոր Ասիան, վորի թվում
և Հայաստանը, ընկնում և սելջուկ թուրքերի գերիշխանու-
թյան ներքո, սակայն նրանց տիրապետությունն Առաջա-
վոր Ասիայում յերկար չի տևում: Այդ լայնածավալ պե-
տությունն արագ թափով քայլայվում և 12-րդ դարի ա-
ռաջին քառորդում: Սելջուկյան պետության տեղիտորիայի
վրա առաջանում են բազմաթիվ մանր ֆեոդալական իշ-
խանություններ, վորոնք իրենց տիրապետության սահման-
ներն ընդարձակելու համար անվերջ կռիվների մեջ ելին
իրար հետ, կռիվներ, վորոնք խիստ բացասաբար ելին
անդրագառում ինչպես Առաջավոր Ասիայի, նույնպես և
Հայաստանի տնտեսական զարգացման վրա:

Սելջուկյան պետության անկումից հետո, Հայաստա-
նի հայկական ֆեոդալ իշխանություններից¹⁾ մնացել եյին
միայն Բագրատունյաց կյուրիկյան կամ Զորագետի և Սյուն-
յաց կապանի իշխանությունները, վորոնք Հայաստանի
տնտեսական և քաղաքական կյանքում քիչ գեր ելին խա-
զում և տիրում եյին շատ սահմանափակ գավառների: Հայաս-
տանի մնացած մեծագույն մասը գտնվում եր սելջուկ—

¹⁾ Արարական խալիֆաթի քայլայման ժամանակ՝ 10-րդ դարի-
կեսերին Հայաստանում առաջանում են մը շարք հայկական ֆեոդալական-
մանր իշխանություններ (Բագրատունյաց Անիի, Կարսի, Կյուրիկյան,
Արծրունյաց և Սյունյաց կապանի):

արաբական ամիրայությունների գերիշխանության ներքո:
12-րդ դարի յերկրորդ կեսից արդեն վրաստանն ու-
ժեղանալով աստիճանաբար նվաճում և Գանձակի և Շայ-
դաղիան ամիրայությունները և զարավերջին իրեն և յեն-
թարկում Հայաստանի հյուսիս — արևելյան գալառները և
միջնաշխարհը, վորը սակայն յերկար չի տևում, քանի վոր
ծար առնող մոնղոլական արշավանքն սպառնում և նաև
Հայաստանի անկախությանը:

Մոնղոլական պետությունը, վոր կազմակերպվել եր Մոն-
ղոլիայում 1203 թվին Զինդիկանի գլխավորությամբ, կարճ
ժամանակվա ընթացքում նվաճում և Զինաստանը (1215 թ.),
ապա դրանից հետո մոնղոլական բանակները շարժվում են
գեպի արևմուտք՝ Առաջավոր Ասիա, Առաջավոր Ասիայում
մոնղոլների նվաճումների համար ստեղծվել եյին քաղաքա-
կան նպաստավոր պայմանները: Զկար կենտրոնացած մի
պետություն, վոր կարողանար գիմադրել մոնղոլական ար-
շավանքներին: Արաբական խալիֆաթն իր քայլայման
դրանն եր հասել, բյուզանդական կայսրությունն ապրում
եր իր անկումը, վրացական պետությունը թամար թագու-
հու (1184—1213) սահմանից հետո բռնել եր իր վայրեջքը,
իսկ Խվարեզմի պետությունը՝ իրանի բարձրավանդակի
հյուսիսային մասում, անվերջ կոփլսների հետևանքով, խիստ
թուլացել եր: Հետևաբար մոնղոլների գեմ քիչ թե շատ
կովող միակ ուժը մնացել եր Փոքր Ասիայի Իկոնիայի սել-
ջուկյան սուլթանությունը, վորը նույնպես կարճատե կոփ-
ներից հետո տեղը զիջում և մոնղոլներին: Այդ նպաստա-
վոր պայմանների հետևանքով մոնղոլները կարճ ժամա-
նակվա ընթացքում (1235—1260) մի քանի արշավանքնե-
րով նվաճում են Առաջավոր Ասիայի բոլոր յերկրները:

II

Մոնղոլական արշավանքների հետևանքով Առաջավոր
Ասիան տնտեսական և կուլտուրական խոշոր հարված ըս-
տացավ և քայլայման յենթարկվեց:

Մարքոն իր հոգվածներից մեկում, ուր խոսում եռուս ժողովրդի նկատմամբ մոնղոլների վարած քաղաքականության մասին, ասում եւ.

«Թաթարական լուծը տեել եւ 1257-ից մինչև 1462 թիվը, այսինքն ավելի քան յերկու դար. այդ լուծը վոչ միայն ճնշում, այլ և վիրավորում և չորացնում եւ նրա զոհը դարձած ժողովրդի բուն վողին: Մոնղոլական թաթարներն ստեղծեցին սիստեմատիկ տերորի ռեժիմ, ըստ վորում քայլայումն ու մասսայական սպանությունները կազմում եւին նրա մշտական ինստիտուտները»:

Մոնղոլական արշավանքների և նրա տիրապետության քայլայիշ դերը յուրահատուկ չեր միայն ուսւ ժողովրդի հանդեպ: Նրանք տերորի ռեժիմ կիրառում ելին նաև իրենց նվաճած մյուս ժողովուրդների և յերկրների նկատմամբ, Մոնղոլները մեծ մասամբ քարուքանդ արին զարգացման բարձր աստիճանի վրա գտնված քաղաքները, խոպան դարձրին Մերձավոր Արևելքի բերրի գաշտերը, ցեր ու ցան արին բնակչությունը, վորի մի մասը կովի ժամանակ կոտորվեց, մի մասը դուրս փախավ յերկրից, իսկ մնացածներից եւ զգալի չափով գերեվարվեցին:

Հայաստանը նույնպես յենթարկվեց ավելումների ու կողոպուտի: Ամենասահմանափակված քանդումների և ավերածության յենթարկվեցին Անին, Կարսը, Դվինը, Կարինը և այլն, վորոնք արշավանքներից հետո կորցնում են իրենց տնտեսական, քաղաքական ու կուլտուրական նշանակությունը: Մոնղոլական արշավանքներն ու մոնղոլների տիրապետությունը Հայաստանում կասեցրին յերկրի արտադրողական ուժի զարգացումը և տարան յերկրը դեպի տնտեսական անկում:

Սակայն այդ ռնդհանուր քայլայման պայմաններում Փոքր Ասիական յերկրների և Հայաստանի տնտեսական կանքում 13-րդ դարի 60-ական թվականներից սկսած տեղի յին ունենում վորոշ փոփոխություններ, Մոնղոլները նվաճելով Առաջավոր Ասիան, վերջ տպին այդտեղ իրենց տիրապետությունը հաստատած սելջուկ — արարական մանր-

մունը ամիրայություններին, վորոնք խանգարում ելին Արևմուտքի և Արևելքի ապրանքափոխանակության՝ կանոնավոր ընթացքը և արգելակում ելին յեվրոպական յերկը բարեկարգ ազդեցության ներթափանցումն Առաջավոր Ասիա: Նրանք՝ այդ ամիրայությունների վերացումով և Արևմտայան յերկրների հետ խաղաղ հարաբերություններ ստեղծելով, հնարավորություն ավելին Արևմուտքի, հատկապես իտալական հանրապետությունների առևտրականներին՝ թափանցելու Փոքր Ասիական յերկրները և Հայաստան: Իսկ իտալական առևտրական կապիտալի ազդեցության տակ սկսեց աշխուժանալ և զարգանալ այդ յերկրներում առևտուրը, արդյունագործությունը և քաղաքային կյանքը: Ի հարկե այս յերկույթը չեր բղխում նվաճված յերկրներում մոնղոլների վարած քաղաքականությունից, ընդհակառակը, մոնղոլների քաղաքականությունը յեղել և քայլաքայիչ Բայյց այն հանգամանքը, վոր Առաջավոր Ասիայում ստեղծեց մի ամբողջական պետություն, վերջ գներով մանր-մունը իշխանություններին, որին կտիլորեն հնարավորություն ավեց առևտրական կապիտալի զարգացմանը, վորովհետև առևտրականները անարգել կերպով սկսում են շրջագայել այդ պետության սահմաններում, իսկ մոնղոլները չելին արգելում այդ, քանի վոր նրանցից հակայական հարստություն ելին քամում:

Հայաստանի տնտեսական կյանքի աշխուժացման զործում զգալի է խաղացել նաև կիլիկիան: Նրա և Նրա միջոցով Արևմտայան առևտրական կապիտալի ազդեցությունը ավելի է խորանում յերկրում և նպաստում ե առևտրի և արհեստագործության զարգացմանը: Այդ ազդեցությունը ունեալ է զառնում մանավանդ այն ժամանակ, յերբ կիլիկյան հայկական թագավորությունը խաղաղ հարաբերությունների մեջ ու մտնում մոնղոլների հետ:

Հայտնի լե, վոր Կիլիկիայի հայկական թագավորության յերկու ներկայացուցիչները՝ Սմբատ զորավարը (Հեթում թագավորի յեղալը) և հետո ինքը Հեթումը (1226—

(1270) գնում են Մանկու մեծ Ղանի մոտ (1250—1255) իրենց հնագանդությունը հայտնելու և վորոշ աբտոնություններ ձեռք բերելու ու յերկրի ծանր վիճակը թեթեացնելու համար։ Այս այցելությունները կատարվել են իտալական հանրապետությունների ազգեցությամբ՝ մոնղոլներին քրիստոնեյություն ընդունել տալու և իրենց կողմը դրավելու համար՝ ընդդեմ արաբական, սելջուկյան և մեմլուկների իշխանությունների, վորոնք մի կողմից արգելակում ելին յելքոպական առևտրականների մուտքը և վանտական յերկրները և մյուս կողմից սպառնալիքի տակ ելին դնում կիլիկիայի թագավորությունը։ Այս այցելությունները միաժամանակ դրական նշանակություն ունեցան Հայաստանի տնտեսական ծանր դրությունը բարելավելու համար։ Այս մասին ուշագրավ տեղեկություններ են տալիս ժամանակակից պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Հեթումը, Նրանցից առաջինն ասում ե, վոր Հեթումը նեղվելով իր հարևան սելջուկ և արաբ իշխանություններից՝ դնում և Մանկու Ղանի մոտ և նրանից ստանում ե՝ «Հրովարտակ նշանափոր՝ զի մի՛ ոք իշխացէ նեղել զնա և զաշխարհս նորա»¹⁾, իսկ Հեթում պատմիչը մանրամասնորեն բերում և Մանկու Ղանի հետ կնքված դաշինքը։

«Իսկ թագաւորն Հայոց յետ տևուց ինչ աղաջեաց զինքնակալն վասն դաշին խաղաղութեան և այլոց երաց՝ որոց ցանկայր, և ի հաճել ինքնակալին, առաջի եղ նմա արքայն Հայոց զննդիբս իւր, նախ աղաչեաց զինքնակալն, զի հանդերձ աղդաւ իւրով դարձել ի հաւատու Քրիստոսի, և ընկալցի զմկրտութեան երկրորդ՝ զի խաղաղութիւն և բարեկամութիւն մշտնշնաւոր հաստատեսցի ի մէջ նոցաւ երրորդ՝ զի յամենայն երկիրս Թաթարաց կարիցեն շինել եկեղեցիս քրիստոնէից։ և Հայք ազատ լինիցին յամենայն կապալաց և յայլոց ծանրութեանց։ Չորրորդ՝ զի զսուրբ երկիրն և զսուրբ գերեզմանն ասցէ ի ձեռաց թուրքաց, և տացէ քրիստոնէից։ զինդերորդ՝ զի բարձրէ ի Բաղտատայ զիսալիֆայն, որ էք պլուս գենի Վեցերորդ՝ զի ամենայն թագավառիցին, իւր հասցեն ի խնդրել իւրում։ Եւթներորդ՝

1) Գանձակեցի՝ եջ 353

զի ամենայն դաւառք աշխարհին Հայոց, յորս տիրեալ էին թուրքք, յինքն դարձուցին:

Յայնժամ ինքնակալն թաթարաց խորհուրդ արարեալ ընդ իշխանս և ընդ մեծամեծս իւր՝ ես պատասխանի արքային Հայոց. Զաղաչանս քո յանձն առնումք. զիս աաց մկրտել, ընկալայց զքրիստոսական հաւատու, և ինսամկալայց՝ զի ընկալցին ամենայն հպատակք իմ. բայց առանց ամենայն բռնութեան: Էստ երկրորդ զին՝ խաղաղութիւն լիցի ի մէջ մէր և ձեր մշտնջենաւոր՝ վաստգական և պաշտպանողական: Նոյնպէս կամիմք, զի ամենայն եկեղեցիք քրիստոնէցից եկեղեցականք և աշխարհականք վայելեսցեն ի շնորհս աղաստութեան, և ոչ ոք իշխանցէ նեղել զհայտ: Զուրբ երկիրն՝ եթէ կարասցուք՝ անձամբ յարգեսցուք. այլ քանզի մեք յայլ իրս եմք զբաղեալ, յնդբայրն մեր հուլառն առնից զայդ, և զերկիրն սուրբ դարձուցէ ի քրիստոնէայս Զիամիֆայն բառնալ ի Բաղտատայ յանձնեացուք Պայտոնի զորագլխի թաթարաց և իւրոցն ընտակելոց ի թագաւորութեան երկրին թուրքաց և շուրջ զնովաւ, թաթարք զատենայն ձեռնտուութիւն արասցեն հայոց. և զաշխարհս որ սեփական են Հայոց, կամմիմք զի անյատաղ տացին նոյտա անզրէն. և ևս հրամայեմք, զի ամենայնիւ ամրոցք և երկիրն զորս առաք, տացին արքային Հայոց ի պաշտպանութիւն Հայաստան աշխարհի առանձին զնորհիւ¹⁾:

Մեջբերված հատվածից յերեւմ ե, վոր Հեթումի առաջադրած խնդիրները, վորոշ խմբագրությամբ, ընդունվել են մոնղոլական Մեծ Ղանի կողմից, ընդ վորում այդ դաշնադրության մէջ բավականին աեղ ե տրված կիլիկիայի հայկական թագավորությանն ոգնելու գործին:

Զնայած վոր Հեթումը հանդիս ե գալիս հայերի և Հայաստանի անունից, սակայն նրա իշխանությունը սահմանափակվում եր միայն կիլիկիայի հայ գաղութով և չեր տարածվում Հայաստանի վրա: Այսուամենայնիվ Հեթումի միջամտությունը Հայաստանի համար և նրա գաշինքը մոնղոլների հետ վորոշ պայմաններ ե ստեղծում Հայաստանու գյուղատնտեսության, արդյունագործության և առեստրի գարգացման համար, ու միաժամանակ լայն հնարավորու-

1) Հեթում, «Պատմութիւն թաթարաց», գլու. իդ, էջ 43—44, Վենետիկ, 1842 թ.:

թյուն տալիս յեվրոպական առևտրականներին՝ թափանցեւ լու Փոքը Ասիական յերկրները և Հայաստան, մանավանդ՝ վոր Կրիստոնէալի թագավորությունը, այդ դաշինքից հետո, լայն արտօնություններ և տալիս Վենետիկի և Ջենովայի առևտրականներին՝ լայն չափով գործելու Կիլիկիայում և Փոքը Ասիական յերկրներում և ազատ կերպով Այս նավահանգստով ապրանքներ տեղափոխելու:

Մոնղոլական զաների ղիջումներն ու բարեկամական դաշինքը Կիլիկիայի թագավորության հետ՝ բացատրվում է վոչ թե նրանով, վոր նրանք շահագրգոված եյին Հայաստանի և առհասսարակ Փոքը Ասիական յերկրների տնտեսական կյանքի զարգացմամբ և բնակչության ծանր կացության բարելավմամբ, — այդիսի յելակետ նրանք չեն ունեցել, — այլ այդ բացատրվում ե այն հանգամանքով, վոր մոնղոլները ցանկացել են ոգտագործել Կիլիկիայի իշխանությունը Սիրիական մահմետական ամիրայությունների և Յեղիպառուի մեծլուկների դեմ, վորոնք թշնամական դիրք եյին բռնել մոնղոլների հանդեպ:

13-րդ դարի յերկրորդ կեսի Հայաստանի առանձին շրջանների գյուղատնտեսության մասին ուշագրավ տեղեկություններ ե տալիս հայտնի ճանապարհորդ Մարկո-Պոլոն: Նա Մուշի և Մերդինի մասին խոսելիս ասում է. «Այս նահանգի մոտ (խոսքը վերաբերում է Մուսուլի նահանգին: Հեղ.) կա մի ուրիշը՝ Մուշ և Մերդին, վոր արտադրում են մեծ քանակությամբ բամբակ...»: Իսկ ավելի ուշ ժամանակի մի ճանապարհորդ՝ իսպանացի Կլավիխոն, յերբ 1403 թվին անցնում է Յերզնկալի շրջակայքով, նկարագրում է այդ շրջանի գյուղերը և նշում ե զյուղատնտեսության բարգավաճ վիճակը: Երա նկարագրած պատկերը ամբողջությամբ վերաբերում եր նաև 14-րդ դարին: Նա ասում է. «Երջապատի բոլոր կողմերից կարելի յե տեսնել զյուղեր՝ վորթատունկերով և բուսականությամբ, ամբողջ դաշտում



մշակվում եր վորթատունկ և հացահատիկ։ Ամեն քայլափոխին կային շատ գեղեցիկ պարտեզներ և այգիներ»:

Գյուղատեսությունից վոչ պակաս սկսում են զարդանալ նաև արդյունագործությունն ու առևտուրը։

13-րդ դարի վերջերին Առաջավոր Ասիայի տնտեսական կենտրոնը Բաղդադից տեղափոխվում է արևմտյան եղանության մայրաքաղաք Թավրիզը, վորը գետի երեն եր ձգում ժամանակի առաջափոր բոլոր յերկրների առևտրականներին ու դառնում է միջազգային առևտուրի ու տնտեսական խոշորագույն կենտրոններից մեկը։

13-րդ դարի յերկրորդ կեսից սկսած այս հարուստ քաղաքից գուրս են գալիս առևտրական մի շարք ճանապարհներ, վորոնք Թավրիզը կազում են միջին Ասիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Միջազգետքի, Փոքր Ասիայի, Հայաստանի և Սև ծովի հետ։ Այդ ճանապարհներից մեկը Թավրիզից առնում եր գետի Հայաստան՝ Խոյ, Մակու, և Բայազետի, Ալաշկերտի հովիտներով անցնում եր գետի Կարին քաղաքը, վորանդ ճանապարհը լաֆանվում եր Յերկու ճյուղի, վորից մեկն անցնում եր Տրավրիզն — Սև ծով և կապվում եր Յելբողայի հետ, իսկ մյուսը Յերզնկայի և Սեբաստիայի վրայով միանում եր Կիլիկիայի և Միջերկրականի ափերի գլխավոր քաղաքների հետ։ Հայաստանի վրայով անցնող առևտրական ճանապարհի այս գլխավոր մագիստրալից Խոյի մոտից անջատվում եր մի ճանապարհ և գնում եր գետի Վանա լճի յեղերքը՝ Յերկրի, Վան, Վուտան, Բիթլիս և Ամիդ քաղաքների վրայով գարձյալ միանում եր Միջերկրականի նավահանգիստներին և այդպիսով Հայաստանը կապում եր մի կողմից կլանության արևելյան կենտրոնների հետ, իսկ մյուս կողմից՝ Փոքր Ասիական յերկրների ու իտալական հանրապետությունների հետ։ Վերջիններիս առևտրականներն ալդ ժամանակ վողողել ենին վոչ միայն Միջերկրական և Սև ծովերի շրջակայքը, այլ և

Հայաստանի վրայով թափանցել ելին կասպից լճի շրջակա յերկրները և իրենց ձեռքն ելին վերցրել առևտրական հիմնական ճյուղերը: Այդ առևտրական ճանապարհներով կատարվում եր աշխույժ ապրանքային փոխանակություն Արեմուտքի և Արեկելքի միջն, մի հանգամանք, վորն իր հերթին խոշոր չափով նպաստում եր վոչ միայն Հայաստանի հարավային շրջանների տնտեսական կյանքի աշխուժացմանը, այսինքն արդյունագործության, առևտրի ու շուկայական հարաբերությունների ծավալմանը, այլև սոցիալական հարաբերությունների զարգացմանը:

13—14-րդ դարերում Հայաստանի քաղաքներից կարեոր գեր եր կատարում Յերզնկա քաղաքը, վորպես արդյունագործության և առևտրի կենտրոն: Այդ մասին դարձյալ արժեքավոր տեղեկություն և տալիս Մարզկո-Պոլոն: Իս ասում ե, «Այս մի մեծ յերկիր ե (Խոսքը Հայաստանի մասին ե, հեղ.): Սկսվում ե մի քաղաքից, վոր կոչվում և Արդինքա (Յերզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բնակեցները»: Սակայն Յերզնկայի գերը չեր արտահայտվում միայն բենեպեղենների արտադրությամբ: Իսպանացի կլավիսոն խոսելով Յերզնկայի և շրջապատի մշակութների մասին՝ դըում ե.

«Արդինջան (Յերզնկա) քաղաքը գտնվում է մի գաշտում, մի դետի լավերքի, վոր (Արմաման) Յևփրատն ե...: Այն գաշտը, վորի մեջ տարածվում և քաղաքը, յնտեւ կողմից շրջապատված և բարձր լաների շղթայով, և սրանց գագաթներն այժմ ծածկված ելին ջյունով, բայց ներքեց, հովիտներում ծյուն չկար: Շրջապատի բոլոր կողմերից կարելի յետեսնել գյուղեր, վորթատուններով և բնականությամբ: ամբողջ գաշտում մշակվում եր վորթատունի և հացահատիկ: Ամեն քայլափոխին կային շատ գեղցիկ պարտևզներ և այլքներ: Հայնքն են շինել Արդինջան, և քաղաքի պարտեզներում կարելի յետեսնել շատ անդեր քարերի վրա փորագրած խաչի նշանը: Քաղաքի բոլոր տներն ունեն տափակ կառուրներ, վորով մարդիկ կարող են անցնել մեկ անից մյուսը, կտուրների վրայով, ինչպես փողոցից: Քաղաքը շատ

բազմամարդ և և այնտեղ կարելի յե տեսնել շատ գեղեցիկ փողոցներ ու հրապարակներու Շատ պաշտոնական անձնավորություններ ապրուս են այստեղ, վորոնց մեծագույն մասը հարուստ մարդիկ են, և կան շատ փարթամ վաճառականներ»:

Յերգնկայից վոչ պակաս զարգացած եր Մուշը Ալաքաղաքի բնակչությունը մեծ մասամբ նույնպես զբաղվում եր արհեստներով և առևտություններով, Այստեղ մշակվում եր բամբակ, վորը ծառայում եր քաղաքի արհեստավորությանը վորպես հումուլիթ գործվածքային արտադրության համար:

«Այս նահանգի մոտ կա մի ուրիշը Մուշ և Մերդին, վորաբաղրում և մեծ քանակությամբ բամբակ, վորից շինում են մեծամասամբ բնենք և ուրիշ կտորեղենն ժողովուրդն արհեստագոր և առևտություններ հպատակ են թաթար թագավորին»:

Նույնը կարելի յե ասել Վանի, Բիթլիսի, Դիարերքիրի, Արճեշի, Կարինի և այլ քաղաքների մասին, վորոնց բնակիչների զգալի մասն ալդ ժամանակաշրջանում հայերելին:

Հայաստանի հյուսիսային մասերը, մոնղոլների արշավանքներից հետո, թեև չկարողացան վերականգնել իրենց նախկին դիրքը, ձեռք բերել անտեսական ու կուտուրական կյանքի զարգացման նույն ընթացքը նույն չափով, ինչ վոր հարավը բայց այնուամենայնիվ վորոշ աշխուժացում սկսեցին ապրել: Այս շրջանում առևտությունների և արհեստագործության զարգացման մեջ վորոշ գեր են սկսում խաղալ Յերևանն ու Նրա շրջակալքը, վորի մասին վկայություններ հատկապես վերջերս Յերևանի Կաթուղիկե յեկեղեցու քանդման ժամանակ բացված արձանագրությունները:

Հայաստանում շուկայական հարաբերությունների զարգացման հիման վրա, հողն սկսում ե ապրանքայնանալ և դառնալ առ ու ծախի առարկա, վորով սկսում են խախտ-

մել ֆեոդալական հարաբերությունների հիմքերը և այդպիսով սկիզբ ե գրվում ֆեոդալիզմի քայլայմանը։ Հայտառանի ֆեոդալիզմի քայլայումն ընթացել ե յուրահատուկ ձեռվ, ընդվորում այդ քայլայումն արտահայտվել ե նախ և առաջ հայ աշխարհիկ ֆեոդալների աստիճանական կերպարանափոխումով։ Հայ աշխարհիկ ֆեոդալների քայլայման գործում վորոշ դեր ե խաղացել նաև ելլանության վարածքաղաքականներին իրենց նախկին քաղաքական իրավունքներից և դարձնել նրանց պետական պաշտոնյաներ։ Նրանք իրենց արշավանքների ժամանակ, յերբ գրավում ելին Հայաստանի գալառներն ու քաղաքները, իրենց կողմից այդ վայրերում նշանակում ելին կառավարիչներ։ «Եւ ապա ի վաղիւն ուրախությամբ մեծաւ յարձակեցաւ ի վերայ աշխարհին Հոսոմոց առին զերզնկայն յառաջագոյն և թողին Շահնայ...»¹⁾։ Յեկայսական բոլոր գրաված գավառներում և քաղաքներում նշանակում ելին իրենց կառավարիչները։ Ի հարկե այդ կառավարիչներին մոնղոլները բոլորն ել իրենց հետ շեյին բերում, այլ նրանց վորոշ մասը կազմում ելին տեղական ֆեոդալները։ Այդ ֆեոդալները դառնալով մոնղոլական պետության պաշտոնյա՝ տվյալ շրջանի հողատերերն ելին այնքան ժամանակ, վորքան նրանք պաշտոնյա ելին այդ տեղում։ Այսպիսով աստիճանաբար հայ ֆեոդալները կորցնում են իրենց տնտեսական և քաղաքական նախկին իրավունքները, իրենց կարգածների և այդ կարգածների վրա ապրող գյուղացիների նկատմամբ։ Մոնղոլական տիրապետության շրջանում ավելի նպաստավոր պայմանների մեջ ելին գտնվում հոգևոր ֆեոդալները, նախ նրանով, վոր մոնղոլները վերջիններին շնորհել ելին մեծ արտօնություններ։ Նրանք լավ ելին հասկանում, վոր ժողովրդին հլու և հնազանդ պահողները հանդիսանում ելին լեկեղեցին և հո-

1) Մաղաքիա աքեղա, «Պատմութիւն վասն ազգի նետողաց», եջ 15,
 Ա. Պետերբուրգ, 1870 թ.։

գմորականները, վորովհետև հոգեորականության ձեռքն ել գտնվում իդեոլոգիական զենքը և նրանք այդ զենքով կարող ելին մասսաներին ավելի լավ հնազանդության մեջ պահել քան տեղական ֆեոդալներն իրենց սրերով, վորոնք միաժամանակ յերբեմն — յերբեմն ուղղվում ելին հենց ելդանության դեմ:

Քայքայվող հայ աշխարհիկ ֆեոդալները, իրենց կալվածները չկորցնելու համար, 13-րդ դարի յերկրորդ կեսից ավելի ուժեղ չափով «նվիրում են» այդ կալվածներն իրենց լենթակա վանքերին ու յեկեղեցիներին, և հողատիրությունը յեկեղեցական կալվածատիրության կերպարանք և ստանում։ Այս տեսակետից բազմաթիվ փաստեր կան, վորոնք հաստատում են այդ յերկույթը։ Բերենք թեկուզ այդ փաստերից մի քանիսը։

1. «ԶԺԱ... և Թաիկս, դուստր Շարալշահին, ևսու զիմ գանձագին հայրէնիքն զնորսն ի մեր ուխտո, ի Բանալոս, ի սուրբ Աստուածածինս, և հայր Արքահամ և այլ միաբանեալ սուրբ եղբայրքս փոխարէն հատուցին յամենայն ամի ժ. աւր պատարագ, ը. աւրն ինձ տռնեն, Թաիկանո, և ը. աւրն Գրիգորիու. արդ որք կատարեն... հաստատ է Սենացն անդաստանաւքն, հոգովն և ջրավայ...»¹⁾:

2... «Ես Մմբատ իշխանս, որդի մեծին Լիպարիսին, միաբանեցայ սուրբ ուխտիս Թատուվանացս սուաչնորդությամբ ա. Աթանասի և գնեցի զթուանտաշանց այսին և յեղեգիս իմ գնած ձիթանանքն և այլ արդինք ըստ Կարին և զկանաչաւոր զեղն և այլ, որ հաստատեցի ամեն խարճովս անչար... թուին չժգ...»²⁾:

3. «Այս զիր իշխատակի և արձան անջնջելի է իմ Տարսային, իշխանց իշխանի, որդւոյ մեծին Լիպարտի, եղբայր Մմբատայ, մեծ իշխանի, կողմնակալին յայսմ նահանդի, որ իշխեցող էի այսմ գավառաց ի գրանէն Բարկուշատայ մինչեւ ցահամանն Բջնւոյ. միաբանեցայ Տաթեւու սուրբ Առաքելոցս և տուի... գիւղս վեց. զոր լուեալ էաք ի հին ժամանակաց ժառանգութիւն լիալ սմին, զննէք իւր սահմանովն լերամբ և զաշտիվ զնոտն ավան սահմանաւք իւրովք, լերամբ և զաշտիւ, և ի Թու-

1) Կ. Կոստանյանց, «Վիմական տարեգիր», հջ 105, Ա. Պատերսուրդ, 1913 թ.:

2) Նույն հջ 107:

տաղետ և ի Խոս զմեր ձեռնատունկ այդին և զօռուր իւր սահմանովն... և զչարժիս իւր սահմանովն... և ի Բորտի զբէթիվանս իւրովք սահմանովք...»¹⁾:

Այսպիսով հողն սկսում և կենտրոնանալ վանքերի ու յեկեղեցիների ձեռքը: Միաժամանակ աշխարհիկ ֆեոդալներն աշխատում են, վորպիսզի յեկեղեցու այդ ունեցվածքը մնա իրենց ձեռքին, վորովհետեւ յեթե աշխա, հիկ ֆեոդալը «Եվլիտաբերում ե» իր կալվածք յեկեղեցուն, այդ չի նշանակում, վոր նա ավբողջուրյամբ կօրցնում և իր իրավունքներն արդ հողի նկատմամբ: Ընդհակառակը՝ նվիրատվությունների ժամանակ նվիրատվողն ու յեկեղեցին վորոշ հարաբերությունների մեջ են մտնում և վերջինը վորոշակի պարտավորություններ և վերցնում իր վրա առաջինի նկատմամբ, և այդ վոչ թե «հոգու փրկության», այլ նախ և առաջ այդ հողերը պապանելու համար: Այդ տեսակետից հետաքրքիր և Հոռոմոսի վանքի 1228 թվի գրած արձանագրության հետևալ գարձվածքը: «... Եւ հայր, որ ի վանիցս հաց ծախէ կամ ի վանից ի բացս խորհէ, նղովեալ եղիցի...»²⁾: Սակայն այս չի նշանակում, վոր յեկեղեցու ինչքը դադարում և առ ու ծախի առարկա լինելուց: Ընդհակառակը՝ կան հետաքրքիր փաստեր, վորոնք ցույց են տալիս հողի առ ու ծախի առարկա լինելու մասին: Այդ մասին Գոշավանքի արձանագրություններից մեկում ասված ե.

«... ես ձարս, որդի պարոն Ումէկին... գնեալ էր զԴետիկի ի քառասուն հազար կարմիր տուգաթի, ես ձարս զնեցի զՅովս իւր ամէն սահմանաւքն ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր ու ոսկին թանկ, ի զու կարմիր տուկատ տուի Գետկա Աստուածածնին իմ հոգուոյ տանս յիշատակ անջնջելի իմ ծնողացն Ումիկին եւ Թագունոյն, ինձ և իմ որդեացն, Արզութին և իւր եղբարցն՝ առաջնորդութեամբ Ղասապ վարդապետին եւ միաբանքս սահմանեցին... չը»³⁾:

1) «Վիմ. տարեգիր», եջ 116—117:

2) Նույնը, եջ 72:

3) «Վիմ. տարեգիր», եջ 124—125:

Յերկրի ներսում տեղի ունեցող այդ յերկութները
 խոր ազգեցություն են թողնում ինչպես տնտեսության,
 նույնպես և ազգաբնակության դասակարգավիճն կառուց-
 վածքի վրա: Մոնղոլական տիրապետության շրջանում աշ-
 քի ցե ընկնում զյուղի և քաղաքի ազգաբնակության
 քայլայման ու շերտավորման պրոցեսը: Այդ քայլայման
 ու շերտավորման պրոցեսը տեղի յէ ունենում մի կողմից
 մոնղոլական ելլանության և տեղական ֆեոդալների ծանր
 հարկապահանջության և մյուս կողմից՝ առևտրավաշխա-
 ռուական կապիտալի շահագործման ուժեղացման հետևան-
 քով: Քաղաքներում և քաղաքատիպ վայրերում լցվում ե
 մեծ քանակությամբ ընչաղուրկ մասսա: Այդ ընչաղուրկ
 մասսան առաջանում ե մեծ մասամբ ծանր հարկերի ու
 պարտքերի հետևանքով, վորի տակից դուրս գալու համար
 նա ստիպված եր վոչ միայն վաճառել ու գրավ դնել իր
 իր հողն ու ունեցվածքը, այլ և հաճախ իր կամ իր հա-
 րազատների անձը. «... և որ ոչ կարէ հատուցանել զսակն
 զմանուկս նոցա առուին ընդ պարտուցն...»¹⁾:

Այդպիսի ճանապարհներով յերկրի հարստությունն
 աստիճանաբար սկսում է կուտակվել մի խումբ ավելի փոք-
 րաթիվ մարդկանց ձեռքում: Այս յերկույթը բնորոշող տե-
 ղեկություն ենք գտնում մենք Մարկո-Պոլոյի ճանապար-
 հորդության մեջ Խավիրիզ քաղաքի մասին, վորտեղ նկա-
 րագրելով քաղաքի հարուստներին և վաճառականներին՝
 վերջում ավելացնում ե. «Տեղացի ժողովուրդն աղքատ ա-
 րարածներ են, և մեծ խառնուրդ են տարբեր դասերու²⁾:
 Այսեղ կան հայեր, նեստորականներ, հակոբիկներ, վրա-
 ցիներ, պարսիկներ և վերջապես քաղաքի բնիկներ...»:
 Թեև այս տեղեկությունը վերաբերում է Հայաստանի հա-

1) Գանձակեցի, եջ 349:

2) Յեվրոպացի ճանապարհորդներից շատերը, ինչպես նաև Մար-
 կո-Պոլոն, «գաս» ասելով հասկանում են տվյալ վայրում ապրող տար-
 բեր ժողովուրդներ:

քեան յերկրի՝ Ատրապտտականի քաղաքային կյանքին, սակայն այդ յերեռութն ավելի կամ նվազ չափով կար նաև Հայաստանի քաղաքներում։ Դասակարգային այդ անտոգոնիզմը հատուկ չի յեղել միայն քաղաքին, այդ յերեռութը գոյություն և ունեցել նաև զբուղում։ Եյսեղ Հայաստանի տարբեր վայրերում այդ յերեռութը դրսեորդել եւ տարբեր ձեփերով։ Շիրակում և Արարատյան դաշտում ու Սյունիքում, վորտեղ գլուղացիության ճորտացումը շատ ավելի խիստ եւ արտահայտվել մեզ զբաղեցնող գարաշը ջանում, քան Հայաստանի այլ վայրերում, գյուղացին վոչ միայն հողադրկում եւ և աղքատանում, այլև վաճառքի, նվիրատվության առարկա յեւ գառնում թե ամրացված հողին և թե կտրված, որինակ՝ «... և տուաք նուերք ի սուրբ Յովանէս... այդին ի Թալին բոլոր աղատ յամենայն հարկէ եւ շինական մի...»¹⁾։ Կամ «ԶժԱ... ևս Խաւուազ... ի Բգներս տուի յԱստուածածինս, զՎերին էգին իւր ընձանովն, բ. շինական, զՄեհերեւան ու զԽաչատուը, Դուլուսին փեսայն, իւրյանց հողովն ու ջրովն...»²⁾։

Տնտեսապես քայքայվում եր վոչ միայն աշխատավորությունը, այլ նաև մասը հողատերերը։ Նրանք շուկայական հարաբերությունների զարգացման տվյալ պայմաններում չելին կարողանում իրենց կյանքը պահել իրենց հողակտորների յեկամուտներով, վորովհետև բարձրանում եւ նրա պահանջը շուալության, պերճանքի առարկաներ գնելու մեջ, վորի համար նա կարիք ուներ մեծ գումարների, իսկ այդ գումարները նա պետք եւ ստանար իր կալվածքներից, սակայն այդ այնքան չնշին եր, վոր նա ստիպված եր դիմել փողատիրոջը — վաշխառուին, վորից ստացած գումարի դիմաց նա դնում եր զբավ իր կալվածքը, իսկ հետագայում չկարողանալով վճարել կուտակված պարտքը՝ գրկվում եր այդ կալվածքից։

1) Պիմ. տարեգիր, եջ 117։

2) Նույնը, եջ 104։

Ժողովրդի տնտեսական քայլայման և աղքատացման վրա խոշոր չափով անդրադարձել են նաև մոնղոլական ելշղանության ծանր հարկերը, Մոնղոլներն իրենց նվաճումների ժամանակ, նվաճված ժողովուրդներից վերցնում ելին բաղմաղիսի հարկեր ու տուրքի դործելով ամեն տեսակի կամայականություններ, և վերցնում են այն ամենն, ինչ վոր նրանք գտնում են դյուզերում և քաղաքներում: Ու մոնղոլական այդ ծանր հարկապահն ջությունն «անյասախ» շրջանում և թե տեղական ֆեոդալների ու վաշխառուների շահագործումն ու կամայականությունները ծանր կացության մեջ ելին դրել յերկրի աղքաբնակությանը: Ինչպես մոնղոլ հարկահանները, նույնպես և զրանց հետ միացած տեղական բնիկ իշխանները կողովում և կեղեքում ելին ժողովրդին, նրանց վրա դնում ելին իրենց կարողությունից ավելի բարձր հարկեր ու տուրքի, նրանք, վորոնք չելին կարողանում վճարել յենթարկվում ելին ֆիզիկական տանջանքների, պարտքերի դիմաց վերցնում ելին նրանց յերեխաններին, իսկ նրանք, վորոնք թագնվում ելին, վորպեսդի չիճարեն պահանջված հարկը, բանվելու դեպքում սպահվում ելին,

«... Եւ յամենեցունց պահանջեալ խոսափոյն հարկս, աւելի քան զկար մարդոյն, և սկսան չքաւորիլ. և նեղէին անհնարին կտտանօք և չարչարանօք և դելոցօք. և որ թագէր՝ ըմբռնեալ սպանանէին, և որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկուն նոցա առնուին բնդ պարտուցն... Այլ և իշխանքն տեսքը գաւառ նոցուն գործակից լեալ ի նեղելոցն և ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ...»¹⁾:

Մեջմերկած հատվածում պարզ յերեում ե, վոր մոնղոլական հարկապահանջների հետ միասին տեղական իշխանները, այսինքն հայ ֆեոդալները, նույնպես կեղեքում և կողովտում ելին ժողովրդին, դործակցելով հենց մոնղոլ տիրապետողների հետ: Այս վկայությունը ցույց է տալիս.

1) Գանձակեցի, եջ՝ 48—49:

հայ բուրժուական պատմազըության սխալ և միաժամանակ՝
միտումնավոր բացատրությունն այն հարցին, վոր իր թե
մեր ժողովրդին շահագործել են միայն յեկվորները, ոտար
տիրողները, վոր շահագործման մասնակից չեն յեղել հայ
ֆեոդալները — իշխանները, վորոնք ըստ բուրժ. պատմա-
դրության, ժողովրդի ներկայացուցիչներն են տեղել, նրանց
պաշտպանները, և վոչ թե նրանց շահագործողները Բուր-
ժուական պատմագրությունն աշխատում եր ցույց տալ,
վոր հայ իշխանները յեղել են ժողովրդի «խնամակալներ»,
վորոնք իր թե «պաշտպաններ» են նրանց ոտարների ճնշու-
մից և շահագործումից:

13-րդ դարի կեսերին ժողովրդի այս ծանր դրությունն
առաջացնում և ընակչության մեջ դժգոհություններ տեղա-
կան և արտաքին շահագործողների դեմ. այդ դժգոհու-
թյուններն աստիճանաբար խորանալով՝ վեր են ածվում
զյուղացիական շարժումների. Այդպիսի մի շարժում տեղի
յե ունեցել 13-րդ դարի 50-ական թվականների սկզբին
Սյունյաց նահանգի Գեղարքունյաց և Խաչենի գավառնե-
րում (այժմյան Մարտունու, Բասարգեչարի շրջաններում),
վորին գլխավորել ե Ծար գյուղի ջրաղացպան Դավիթը.
«Ի չքաւորաց և ի տնանկաց, պահէ զջրաղացս նոցա, և
յայնամանէ կերակրէր ինքն և կինն իւր և որդիք...»¹⁾:
Աղքատ Դավիթ Ծարեցու քարոզները լսելու յեն գալիս
շրջակայթի գյուղացիները, սակայն Դավիթին և նրա հետե-
ղորդներին հալածանքի յեն յենթարկում իշխողները. հա-
լածողների տուաջին շարքում ընթանում են հոգեորական-
ները, նրանք ասպարեզ են հանում վոչ միայն յեկեղեցու
«բարոյական» ամբողջ ուժը, Ծարեցուն վարկարեկելու և
ժողովրդին վախեցնելու ու նրանից հետ պահելու համար,
ալի փորձում են նրան ու նրա հետևողներին զրկել գոր-
ծելու հարավորությունից, քանզում են նրա հավաքատե-
ղին և կործանում ձիթհանքի սլունից սարքած խաչը,

1) Գանձակեցի, եջ 307:

վոր Ծարեցին դարձրել եր իր շարժման սխմվուը, վորով-հետև միջնադարում գյուղացիական շարժումները հանդես են լեկել գերազանցապես կրոնական քողի տակ, իրենց պայքարն ուղղելով միաժամանակ նաև յեկեղեցու դեմ՝ վորպես ֆեոդալական սիստեմի պահպանողի ու ցաքուցրիլ ֆեոդալ իշխաններին միացնողի և միաժամանակ վորպես աշխատավորական ժառանիրի շահագործողի «... Յուրաքանչյուր պայքար ֆեոդալիզմի դեմ այն ժամանակ պետք է կրոնական զգեստավորում ընդուներ, ուղղվեր առաջին հերթին յեկեղեցու դեմ»¹⁾). Սակայն նրանց այդ փորձը վերջանում է անհաջողությամբ, վորովհետև «յարեաւ ամենայն տմրոխն բազմութեանն սրով և բրով, կամենալին սպանանել զնոսա»²⁾) և նրանք, իշխողների այդ կամակատարները, փախուստի դիմելով են միայն աղատվում հուզված ամբոխի վրեժիններությունից:

Դավիթ Ծարեցու գլխավորած շարժումը լայն ծավալ չի ստանում. շուտով նա ձերբակալվում է, և շարժման կողմանիցները ցրվում են. Սակայն աշխատավոր բնակչության մեջ ուժեղացող գժգոհություններն ու հուզումներին առնասարակ շահագործողների դեմ՝ մի կողմից, և Հայաստանում ու Վրաստանում ու նվաճված այլ յերկրներում մոնղոլական աիրապետության դեմ դուրս գալու փորձերը՝ մյուս կողմից, հարկադրում են մոնղոլական ելլաններին վորոշ կարգ ու կանոն մտցնել իրենց լենթակալ լերիններում, «անյասախ» դրությունը վերացնելու, հարկերի գանձումը կարգավորելու ու վորոշ սիստեմի բերելու այն և միաժամանակ սահմանափակելու զորավարների կամայականություններն ու այդպիսով մեղմացնելու այն ուժեղ գժգոհությունն ու թշնամանքը, վոր կար ժողովրդի մեջ ընդդեմ մոնղոլների:

1) Ենդեւ, «Սոցիալիզմի զարգացումը ուստովիայից դեպի դեռություն», եջ 19:

2) Գանձակեցի, եջ 312:

Բայց այս ձեռնարկութմանը բոլորովին ել չեն մեղմացնում աշխատավոր ժողովրդի, շահագործումը և սոցիալական հարաբերությունների խորացումը: 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարին վերաբերող բազմաթիվ փաստերկան, վորոնք վկայում են ազգաբնակության շահագործման ծանր պայմանների մասին: 13-րդ դարի 50-ական թվականներին Հայաստան են դալիս Մեծ Ղանի կողմից ուղարկված աշխարհագիրը անցկացնող և հարկահավաք Արդումնութուղան: Արդումն Անդրկովկասում անց և կացնում աշխարհագիրը, ըստ վորի հաշվի յեւ առնվում սկսած 10—15 տարեկան աշխատող ձեռքերից մինչև 60 տարեկանը և դիմահարկ և պահանջում, շատացնում և միաժամանակ հարկերի քանակն ու չափը: Հարկերի տակ են ընկնում՝ ձկնորսական գետերն ու լճերը, քաղաքի արհեստավորները, մետաղի և աղի հանքերը, մրնչեւ իսկ «արտոնյալ» վաճառականները: Մոնղոլական հարկահանները ամենադաժան կերպով բռնագանձում են այդ հարկերը ազգաբնակությունից, այնինչ տեղական իշխանները և հոգեորականությունը աղատվում եյին ամեն տեսակի պարտականություններից և միաժամանակ մոնղոլ տիրողների հետ միասին շահագործում եյին բնակչությանը: Ահա թե ինչպես և նկարագրում Արդումնի անցկացը աշխարհագիրը ժամանակակից պատմիչ կիրակոս Գանձակեցին:

ԱԱրդ յիօթն հարիւր և երեք թուականին Հայոց առաքեաց Մանդու Ղանն, և մեծ զօրագարն Բաթու, զայր մի սոտիկան, Արդումն անուն, որ ի Գիուգ Ղանէն առեալ էր հրտման վերակացութեանն հարկացն արքունի ի հնագանդեալ աշխարհացն, և զմիւս ևս ի գլխաւորաց ի տանէ Բաթուրն, որում անուն էր Թօրա Աղա, հանդերձ այլովք բազմօք, որ ընդ նոսս, աշխարհագիր առնել յամանայն ազգս, որ ընդ ձեռամբ նոցա էին հնագաղեալ, Եւ նոցա առեալ զայր հրաման, ելին ընդ աշխարհամ նայն կատարել զգործն հասին և յաշխարհս Հայոց և Վրաց և Աղուանից, և որ զուրջ զնոքօք գաւառք, սկսեալք ի տասնամենից և ի վեր ընդ զրով համարոյ արկանեւ զամենեսին, բաց ի կանաց, Եւ յամենեցունց պահանջեալ խստագոյն հարկս, տեղի-

քան զկար մարդոյն, և սկսան չքաւորիլ. և նեղեխն անհնարին կտառա-
նօք և շարչարանօք և գելցօք և որ թագէք՝ ըմբռնեալ սպանանէին,
և որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին
ընդ պարտուցն... Այլ յեվ իշխաննեց տեար զաւառացն նոցուն զոր-
ծալից լեալ ի նեղոցն յեվ ի պահանջելն վասն իւեալց օանելոյ¹⁾.

և այսու ոչ բավականացան, այլ և զամենայն արուեստագէտս, եթէ ի
քաղաքս և իթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին: Այլ և զծո-
վակս, և զլման ձկնորսաց, և զերկաթահանս, և զարբինս, և զշապա-
րարս, և զի՞սուու է մանրամաննաբար ասել, զամենայն գուռն
շահից հասից ի մարդկանէ, և ինքեանք միայն չահնէին, և զամենայն
աղահաննն առին, որ ի կողը, և որ յայլ կողմանա նա և ի վա-
ճառականաց քազում ինչս շահեալ, կուտեցին գանձս սաստիկս
ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց. և այսպիս զամե-
նեսին սղացուցեալ, և վային և աշխարով լցեալ զաշխարհն, թողին
չար սստիկանս ի վիշայ աշխարհացս զնոյն պահանջնել յամենայն
ամի, նոովին համարով և գրով... Բայց եկեղեցականացն ոչընչ
առին հարկս, զի շունչին հրաման ի զանէն»²⁾:

Պատմիչը Արդունի կատարած այս աշխարհագիրը
մանրամասն նկարագրելուց հետո, մի այլ տեղ և այլ կա-
պակցությամբ թվարկում և, թե ինչպես աշխարհագրից հե-
տո Հուլառու Դանը ավելացնում և հարկերի տեսակներն
ու չափը և միաժամանակ ցույց և տալիս, թե ինչպիսի
հարկեր են գանձում մոնղոլները ազգաբնակությունից:

«... Յամենայն գիսոյ՝ որ մտեալ էր ի գիրն արքունի,
պահանջէին հարիւր լիտր ցորեան, լիտր գինի, երկու
լիտր բրինձ և ծնծատ, երեք տապրակ, երկու չուռան՝ մի սովորակ,
մի նետ, մի նալ, թող զայլ կաշառն և քսան անասոյն. մի ա-
նասուն և քսան ստակ. և ոյր ոչ դոյր զուստերս և զզստերսն
առուին ընդ պահանջմանն. և այսպէս նեղացաւ և տառապեցաւ
ամենայն երկիր»³⁾,

Ժամանակակից մի այլ պատմիչ՝ Մաղաքիա աբեղան,
Նույնպես խոսեալով Արդունի աշխարհագրի մասին, դարձյալ
նշշում և հարկահանության ծանը վիճակը և միաժամանակ

1) Քնդդումը մերն հ:

2) Գանձակեցի, եջ 348—350:

3) Նույնը, եջ 359—360:

ավելացնում ե, վոր բացի նատուրալ հարկերից, յուրաքանչյուր աշխատող ձեռք պեսք և վճարեր մոնղոլներին 60 սպիտակ դրամ «... Զի մի փոքր գեղն Ծ մարդ համարէին կամ լ. ի ժե տարեկանէն ի վերն զամենի համարէին մինչ կ տարեկանն, և յամէն գլխով, որ համարէին, և սպիտակ առնուին...»¹⁾,

Յերկած փաստերը ցույց են տալիս, նախ՝ հարկերի ծանրությունը մոնղոլների տիրապետության յերկրորդ շրջանում, և յերկրորդ՝ դրամական հարկը մեծ չափով գանձելու հանդամանքը, իսկ հարկերի դրամով գանձումն ավելի յեր սաստկացնում հարկատուի կացությունը, վորովհետեւ հարկատուն ստիլված եր լինում հարկերը դրամով վճարելու համար իր արտադրանքի վորոշ մասը շուկա հանել: Թեև այս հանգամանքը նպաստում եր շուկայական հարաբերությունների խորացմանն ու ծավալմանը, բայց և այնպես հարկատունների՝ գլուղացինների և արհեստավորների մեծագույն մասն ընկնում եր վաշխառուների և առևտրականների ձեռքը և կախման մեջ ընկնելով նրանցից՝ հաճախ զրկվում իր արտադրության միջոցներից: Մոնղոլական եղանակության ծանր հարկերի և տեղական ֆեոդալների կեղեքման հետեւանքով ազգաբնակության ընչազրկման և նրա տնտեսության քայլայման հետաքրքիր պատկեր և ներկայացնում Անի քաղաքի անկման պատմությունը: Այդքաղաքի ընակիններն աղքատացման յենթարկվելով թողնում և հեռանում են այդտեղից և գնում այլ վայրեր՝ դեպի Աև ծովի ափերը՝ Ղրիմ, Կասպիականի ափերը և Անդրկողմիասի ափերը՝ Քաղաքի արտագնացության առաջն առնելու համար, Անիի հայ և մոնղոլ կառավարիչները մի շաբաթ փորձեր են արել սակայն, ինչպես հետագա դեպքերն են ցույց տալիս, հաջողություն չեն ունեցել:

1301 թվին Անիի հայ կառավարիչներից մեկը – Զաքարյան-

1) Մաղաքիա, եջ 22:

Ների սերնդից, Աղբուղան - հետաքրքիր մի արձանագրություն ե թողել Անու յեկեղեցիներից մեկի վրա.

«Թղ. չծ... ես Աղբուղէս, որդի Խւանէի, թռոն մեծացն Զաքարիայի, եկի յԱնի հրամանաւ Շահնշահի, տեսայ զբաղաքս աղքատացեալ և խիստ ի վէր մնացել. զի շատ հարկ եր ի վերայ դրած, որ ի սկզբանէ չէր եղել ես ու հարկ ի վեր կալա վասն յերկար կենդանութեան եւ արեւշատութեան եղբարցն իմոց Շահնշահի եւ իմ՝ եւ վասն իմ նախնեաց գերեզմանին համար թողի զեղինն հազըն, զկովին համբրէլէն, զոչխարին աղլ-հակն...»¹⁾:

Անիի կառավարիչ Աղբուղան ձգտել ե հարկերի թեթևացման միջոցով կասեցնել քաղաքի քաէքայման պրոցեսը, սակայն հետագա գեղքերը ցուց են տալիս, վոր այդ միջոցառումը չի փրկել դրությունը, Անին շարունակվել ե քաէքայվել և ազգաբնակությունը գաղթել ե քաղաքից, վորովհետեւ 14-րդ դարի 20-30-ական թվականներին Արու-Այսիդ ելդանը հատուկ յառլիկ (հրովարտակ) ե տարիս Անիին՝ փորձելով թեթևացնել բնակչությանը մի շարք հարկերից և տուրքերից, Ալդ յառլիկը, վոր գրված ե Անիի Մանուչեյի մակիթի պատի վրա, ասում ե. «Թող բացի թամդայից²⁾ և արդարացի հարկերից ուրիշ վոչինչ շառնեն, և վոչ մի մարդուց կալանի³⁾, նեմրի⁴⁾, թարխի⁵⁾ և ուրիշների (հարկերի) պատրվակով վոչինչ չպահանջեն. ինչպես սրանից առաջ Անի քաղաքում վրաստանի այլ դավաուներում ասլորինաբար սահմանված կալան և նեմրի (հարկերի) և թարխի բռնի հարկապահանջության պատճա-

1) Վիմական տարեդիր, եջ 151:

2) Թոմզա — քաղաքներից առնվոր առևտրի և արդյունագործության հարկ և յեղել

3) Կալան — հարկի մի տեսակ ե, վոր հավաքում են նստակյաց ժողովուրդներից՝ հողամշակման համար.

4) Նեմրի — զորքերի պահպանման համար արտակարգ առւրք և յեղել

5) Թարխ — կոչվում եր այն հարկը, վոր հատկացվում եր հոգեսոբ հաստատություններին:

ոռվ բռնություն ելին առաջ բերում և գործ դնում: (Յերկիրը) անապատ դարձավ, հասարակ ժողովուրդը ցիր ու ցան յեղավ, քաղաքի և գավառի ավագները կալան և դըռնագիր¹), հարկերի պատճառով²)»:

Այս արձանագրության մեջ մեզ հետաքրքրում ե այն, վոր Աբու-Սայիդը իր հրովարտակով վորոշակի կերպով ասում ե, թե քաղաքի բնակչության վիճակը ծանր է, ապորինի հարկապահանջության հետևանքով աղքատացել ե և ցիր ու ցան ե լեզել. Ցեկ իրոք, 14-րդ դարի առաջին քառորդին մոնղոլական արևմտյան եղանությունն ապրում եր Փինանսական ծանր ճգնաժամ. Եղանությունն իր այդ ճգնաժամից դուրս գալու համար հպատակ ժողովորդների վրա բազմաթիվ հարկեր ե դնում: Հայաստանը ևս վորպես հպատակ յերկրներից մեկը, յենթարկվել ե այդ խիստ հարկապահանջությանը, վորը քայլայման ե հասցրել յերկրի արտադրողական ուժերը, մանավանդ Հայաստանի հյուսիսում, վորի հետևանքով աղքաբնակության զգալի մասը, հատկապես քաղաքի բնակչությունը, չի կարողանում ալլեւ հայթայթել իր առողջա ապրուալը և հարկադրված ե լինում հեռանալ յերկրից: Այդ պարզ և վորոշակի ցույց են տալիս Անի քաղաքի վերաբերյալ փաստերը:

Անիի մասին վերը նկարագրված դրությունը չի կարելի անվերապահորեն տարածել Հայաստանի բոլոր շրջանների և հայաբնակ վայրերի վրա: Անիին, Դվինին, Կարսին խոշոր հարված հասցրեց նաև այն, վոր միջազգային տրանզիտի առևտրական ճանապարհների ուղղությունների փոփոխման հետևանքով արհետավորներն ու առևտրականները զրկվում են առևտրական լայն գործունեյության հնարավորություններից, իսկ հարավային մասի քաղաքները թեև յենթարկվում ենին նույնպիսի հարկերի և կո-

6) Դռնապիր — կոչվում ե այն հարկը, վոր քաղաքի գոնսերի մոտ հոգութ քաղաքի առնվազաւ եր ներս մուծվող մթերքներից:

7) Ոլքելի — «Անվո ավերակները», հջ 58, Վաղպատ, 1911 թ.:

զոպուտների, սակայն արտաքին և ներքին շուկայական գորոշ հնաբավորությունների առկայության պայմաններում վոչ միայն քայլայման չեն չենթարկվում, այլև դարձանում են, ինչպես վերև նկարագրել ենք: Սակայն յերկրի տնտեսական կյանքի զարդացումից ոգտվել են կաշվածատեր — վաշխառուները, վաճառականները, պետական պաշտոնյանները, և հոգեռարականությունը, վորովհետեւ հարկերի հիմնական ծանրությունը, վաշխառուի տոկոսը, պաշտոնյացի կամայականություններն ու կաշառակերությունները և յեկեղեցու տասանորդն ընկնում եյլն աշխատավորության վրա: Այս հանդամանքն ավելի ևս սրում ու խորացնում ե աշխատավոր բնակչության ընչաղբերմն ու հարստությունը սակավաթիվ մարդկանց ձեռքը կուտակվելու պրոցեսը, վորպիսի գրությունը վոչ միայն հատուկ ե յեղել ելղանության մայրաքաղաք Թավրիզին, այլև և Հայաստանի հարավային մասերի, Փոքր Ասիական յերկը ների և Կիլիկիայի քաղաքներին, վորով նախապալմաններ ևն ստեղծվում կապիտալի նախական կուտակման համար:

Հայերի մեջ քաղաքային կյանքի զարդացումը, Փեղողական հարաբերությունների քայլայման պրոցեսի խորացումը 13—14-րդ դարերում և կապիտալի նախական կուտակման սկզբնավորումը նախապայմաններ են ստեղծում նաև կուտառարայի աշխարհականացման համար, նաև մանավանդ գեղարվեստական դրականության բնագավառում:

Աշխարհիկ գրականության առաջին արտահայտիչը յեղել ե Ֆրիկը: Նա հավանաբար ապրել է գործել և 13-րդ դարի յերկը կեսին և 14-րդ դարի սկզբներին: Այդ ավելի հավանական ե գառնում, յերբ նա իր բանաստեղծություններից սեկում հիջատակում ե Արլուն Ղանին (1284—1287) և դրա դեմ ապստամբություն բարձրացնող Բուղային:

Ֆրիկը վորպիս բանաստեղծ ծնունդ ե վերը նկարագրված սոցիալական միջավալիքի: Նա ականատես ե յեղել դաստակարգալին այն իրազրության, վոր առաջացել երայլ ժամանակաշրջանում: Նա շրջադաշել և Հայաստանի

Ա Փոքը Ասիայի մէկ շարք քաղաքները, յեղել և նաև Կիլիկիայում: Այդ վայրերում շրջազայելու ժամանակ նա տեսնել և սոցիալական խոշոր հակասություններ, վորոնք ստեղծվել եյին այդ քաղաքներում: Տաղանդավոր տաղերգուն պատկանելով շահագործվող և ընչազուրկ խավերին, կրել և իր վրա ժամանակի սոցիալական հարաբերությունների ծանր կնքը և սոցիալական այդ հակասությունները գեղարվեստորեն արտահայտել և իր տաղերում, հատկապես իր «Գանդատ»-ում: Ֆրիկն իր «Գանդատի» մեջ տրանջում ու բողոքում և այդ անարդարության և անհամասարության գեմ:

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկն հազար ձի և ջորի,
Մէկն ոչ ու մի, ոչ մաքի:

Մէկն հազար գեկան ոսկի,
Մէկն ոչ փող մի պըղնձի.
Մէկն հազար հատ մարդարիտ,
Մէկն ոչ ուլիկ մի ապիկի:

Մէկն հազար զառնոլ մաքի,
Մէկն ոչ մէկ չորքտանի.
Մէկն բեհեղ և ծիրանի,
Մէկն բրդէ շալ մի չանկնի:

Մէկն ատլաս և զըրմզի,
Մէկն շապիկ մի չի հասնի.
Մէկն հարամըն յաջողի,
Մէկն հալալն կորուսի:

Մէկն ի գրկանացն հարըստի,
Մէկն յիւրայնոցն աղքատասցի...

• • • • • • • • •
Մէկն ըռալստ և զըրեհի,
Ճոխով նըստի ի պէտաւ ձի.

Մէկ պոկիլի և անվարտիկ,
Հետևակին առաջ փախչի¹⁾:

Ֆրիկն իր այս բանաստեղծությամբ շատ ավելի պարզ
ու վորոշ ե տալիս այդ ժամանակաշրջանի հայաստանի տըն-
տեսական ու սոցիալական փոխարարերությունները, քան
վորեե մի պատմագիր կամ ճանապարհորդ: Նա բողոքում
ե այն անարդարության գեմ, վոր մեկը մեծ միջոցների
տեր ե, իսկ մյուսը՝ դառն ու աղքատ: Ֆրիկին պետք ե
ուսումնասիրեն վոչ միայն գրականագետները, այլ և պատ-
մաբանները, վորովհետեւ նրա ամեն մի գրվածքը մեր անց-
յալ շրջանի աշխատավոր մարդկանց կյանքի ու պահքարի
լավագույն վավերագիր ե:




Զարդանկար (Վաղարշապատի Ձեռագ-
րասեն — Մատենադարանի հայկական
նին ձեռագրելից)

1) Արիստակես վարդապետ Տեղկանց, Հայերդ, Մեղեղիք, աազք և
երգք, եջ 146 - 147, Թիֆլիս, 1882 թ.:

ՅԵ. ԹԱՐՈՒՅԵԱՆ

10—14-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՁԻԿ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Մոտ լոթ հարյուր տարի առաջ ապրած մեծանուն
հայ պոետի և քաղաքացու կյանքով ու ստեղծագործու-
թյամբ հետաքրքրվում ե արդի մեր վողջ հասարակայնու-
թյունը. Հրատապ, կենսական հարց և այսոր հնության
փոշուց գուրս քաշել հարյուրամյակներ առաջ ապրած ու
ժամանակի հասարակարգի դեմ պայքարող մի անձնավո-
րություն և արժանապես գնահատել նրան:

Այն մարդը, վոր վեց ու կես դար առաջ բողոքել ե
սոցիալական անիրավությունների դեմ—«Մեկն ի ունի
հազար մաքի, մեկն ի չունի իսկի ուլ մի»—չի կարող մեր
ուշադրությունից վրիպել:

Անցյալի տաղանդներն ու ազնիվ քաղաքացիները կա-
րող են գնահատվել միայն և միայն սոցիալիստական հասա-
րակարգում, մինչդեռ ֆաշիստ բարբարոսներն իրենց յերկա-
թե կրունկի տակ անողորմաբար վոչնչացնում են անցյալի
գեղարվեստական ու գիտական հարուստ ժառանգությունը:

Իմ նպատակից դուրս ե՝ տալ Ֆրիկի կյանքի ու
ստեղծագործության ուսումնասիրությունը: Իմ ցանկու-
թյունն՝ և այս հոդվածով համառոտակի շարադրել միջնա-
դարյան (10—14-րդ դար) աշխարհիկ գրականության զար-
գացման աստիճանը, այն փոնը, վորի վրա բարձրացավ
այդ մեծանուն հայ բանաստեղծը:


Ես Ֆրիկին կանդրադառնամ միայն այն չափով, ինչ

շափով վոր նրա ստեղծագործությունը կապվում է ժամանակի գրականության հետ: Վորպեսդի մենք կարողանանք հասկանալ ու ճանաչել միջնադարի այդ տաղանդավոր պոետին, անհրաժեշտ ե պարզել միջին դարերի մեր գրականության զարգացման աստիճանը:


* * *

Մինչև այժմ Ֆրիկով զբաղվող մի քանի անձինք, վորոնց թիվը դժբախտաբար շատ չե, այն կարծիքն են հայո՞ւել, թե նա մի յերջանիկ բացառություն ե մեր պատմական անցյալում, իբրև առաջին մարդը, վոր համարձակվել ե բողոքի խոսք ասել «Ճակատագրի» դեմ: Այդ դատողությունը սխալ է ձգտում ե պատմության դարձացման որինաչափությունից դուրս նետել Ֆրիկին, վորպես վաղահաս բողոքողի, և նրա արվեստը վորպես լնկեցին գաղափարախոսություն — իրականության մակերեսը բարձրացած յերեսութ, վորը վորպես պատմականորեն չարդարացված մի փաստ ե սոսկ: Հիրավի, ալդախիսին կլիներ Ֆրիկը, յեթե մեր գրականությունը 10—14-րդ դարերին չտար սոցիալական ու տնտեսական յերեսութների մի շարք աղաղակող փաստերի արձագանքը: Յեթե մենք ուշադրությամբ աչքի անցնենք 10—14-րդ դարերի հայ գրականությունը, կտեսնենք, վոր բոլոր նախադրյալները կային, վորպեսզի Ֆրիկն իր ոպողոցիոն քնարը հանդես բերեր իրավագուրիկ մարդկանց գաղափարները յերգելու համար: Ֆրիկը մենակ չեր: Ամենից առաջ նրա հետ եր գեմուկրատիան:

Որերս «Խորհրդային Հայաստան»-ում լույս տեսած մի անոնիմ հոդված, վորը 1918 թվին «Արարատ» ամսագրում լույս տեսած Տիրայր յեպիսկոպոսի ուսումնասիրության համառոտագրումն եր, Ֆրիկին հայտարարում ե «անդրագետ», բայց միաժամանակ յեղրակացնում, վոր «այդ անդրագետը» «առաջիններից առաջինն եր», ամեա-



Չորդամիկար (Վաղարշապատի Զեռագրատուն—Մատենադարանի հայկական հիմ
ձեռագրերից)



նակուլտուրական մարդը 13—14-րդ դարերում և «առաջիններից» առաջինը», վոր համարձակվել եւ ծառանալ սուցիալական անհավասարությունների դեմ:

Ի՞նչպես համատեղել այս լերկում մեկը մյուսին հակասող յեղբակացությունները: Առաջին դեմոկրատը, ամենակուլտուրական ու համարձակ մարդը, աշխատավորական իդեոլոգը և... անդրագետ: Յեթե այդպես լիներ, այդ դեպքում շատ դժբախտ ե յեղել մեր անցյալ իրականությունը, վորն ունեցել ե միայն մի զեմոկրատ յերգիչ... և այն ել անդրագետ: Փաստերի բացահայտ խեղաթյուրում լինելով հանդերձ, այդ տեսակետը նայիոնալիստական տարրերի բամբասանք ե այն դասակարգերի հասցեյին, վորի յերգիչն եր Ֆրիկը,—մի բամբասանք, վորը գալիս ե շատ հնուց:

Յեղել են և կան մարդիկ, վորոնք պնդում են, թե միջնադարյան հայերենը «գուենիկ», «յեկաթե» դարի լեզու յի: Գեղեցիկ ու մշակված լեզուն 5-րդ դարի «վոսկեղարյան» գրաբարն ե: Գոենիկ լեզվով արվեստ չի ծաղկում:

Միջին հայերենը, ժամանակի գրական լեզուն, ժողովրդի խոսակցական լեզուն լինելով՝ բավականաչափ ճկուն լեզու յեր, կարող եր ձեւեր ու դարձվածքներ վերցնել թե ժողովրդի և թե գրաբարի հարուստ գանձարանից և ստեղծել գեղեցիկ յերկ: Բացի այդ, «վոսկեղարյանների» այն կարծիքը, վոր իրը թե միջին դարերի գրականությունը բոլորովին կապ չունի իրեն նախորդ շրջանի գրական մշակութի հետ, անհիմն ե, այդ կապը յեղել ե վոչ միայն տիրապետող շահագործող դասակարգերի, այլ և շահագործվող դասակարգերի կուլտուրաների մեջ, և շահագործվող դասակարգը նույնպես ունեցել ե իր կուլտուրան:

Դեռ հեթանոսական ժամանակներից անդիր բանահյուսությունը մեզ ժառանգություն ե թողել ժողովրդական ստեղծագործության նմուշներ. դրանք ցույց են տալիս թե աշխատավոր մարդը վորքան խոշոր դեր ե կատարել կուլտուրայի պատմության մեջ:

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմբիկն եղեղնիկ:

Ըստ եղեղան փող ծուխ ելանէր,
Ըստ եղեղան փող բաց ելանէր,
Եւ ի բոցոյն վաղէր
Աւարտեաշ պատանեկիկ:

Նա հուը հեր ունէր,
Բոց ունէր մորուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

Հին եպոսի ալս յերկը, վոր յերգվել ե գուսանների
բերանով, ներկայացնում ե ժողովրդական հավատալիքի մի
առասպել, ըստ վորի «Վիշապաքաղ Վահագնը» կավել ե
վիշապների հետ ու հաղթել նրանց, ցանկանալով բարիք
անել ժողովրդին ճիշտ այնպես, ինչպես հին Հունատաշ-
նում Պրոմեթեոսը կրակն աստվածներից գողացավ ու տվեց
մարդկանց: Այս վեպի կենտրոնում դրված ե հավաքական
ուժի մարմնացումը, իսկ հավաքական ուժը ժողովուրդն ե:
Ինչու չպետք ե ընդունել, վոր այս վեպն իր նախնական
վիճակում մշակել ե ժողովուրդը, վորից հետո նա մտել ե
պալատները, վորպես զբուցազներգություն և այնուհետև
ստացել ե աղնավականութիւնն հոգեոր կուլտուրական ար-
տադրանքի գրոշմբ: Ինչպես Մուրոցի Իլիան՝ ուստա-
կան «Երևանա»-ների հերոսներից մեկը, հունական Անթելը
— հին հունական միֆոլոգիայի հերոսներից մեկը, վորոնք
իրենց ուժն առնում ելին մայր հողից և իրենց մեջ ելին
ամբողջացրել ժողովրդի կենսունակությունը, այնպիս ել
մեր ժողովրդական վեպի մեջ «Վիշապաքաղ Վահագնը» իր
նախնական ծագումով կարող եր լինել հասարակ ժողովրդի
հավաքական ուժի ու կենսունակության մարմնացումը:
Յեթե բերված որինակի վրա հարկավոր ե բանավիճել, ապա
«Սասունցի Դավիթը», «Մհերը» և ժողովրդական վեպի
այդպիսի հերոսներ հո մինչև ալսոր ել ապրում են բանա-

հյուսության մեջ՝ ժողովուրդը նրանց սիրում, գուրգուրում եւ զորպես իր հոգեոր կուլտուրայի արտադրանքները։ Յեթե «Սասնա ծռերը» պալատներից ծագելին և մնային միայն պալատներում, չելին կարող այնքան ժողովրդականություն վայելել և ապրել նրա ընդերքում։

Մեր զբույթին ապացուցող շատ փաստեր կան, վերեւ վում յես բերի ծիրանի ծովի նկարագիրը. ծովի մի այլ նկարագիր, զորը մենք կարդում ենք միջնադարյան շատ տաղարաններում, խիստ նման և ծիրանի ծովի նախորդ նկարագրին։

Ահայ տեսէք, թ' ինչ կայր ծովին,
Որ նաև ուսամբ դայր.
Տեսան, որ վէմ կայր ի նաւին
Նաւն ի ծովին, ծովն աւազին,
Ահա ցրնծայր ծովն ու ծփայր
և ալն ի զալին տայր!
(Չեռագիր 395)

Պետք եւ նկատի առնել, թե բանահյուսական կտորներն ինչքան փոփխության են լենթարկվում բերանից-բերան անցնելով։ Յես կը բերեմ ծովը նկարագրելու մի այլ վարիանտ, վորի բովանդակությունը նույնն ե՝ տարբեր շարահյուսությամբ։

Ելէք տեսէք, զնիչ կայր ծովին:
Ելին տեսին՝ զնաւիլ ի ծովին:
Ծովն ծփայր.
Ալին զալին տայր!
(«Արարատ», 1899 թ.)

Ահա ելի մի վարիանտ, վորը ձեռվ տարբերվում եւ առաջին յերկուսից ել, բայց բովանդակությունը նույնն ե.

Երթանք նայինք ինչ կա ծովին,
Ի՞նչն է այդ ուսուցք նաւին.
— Գացանք, տեսանք, նաւ կայր ծովին,
Լայն կտաւն էր լարած նավին.
Հով կը փչէր մեջ կտավին.

Կոտաւն ուսէք ի զեմ հովին:
Հովըն շարժէք՝ ծփէք զալին,
Արին զարնէք՝ շարժ տայը նաւին
(Նույն անդ)

Սրանք հիշեցնում են ժողովրդական բանահյուսական կրկնակները, վորոնց բազմաթիվ տեսակները խիստ տարածված են և 19—20-րդ դարերի դրի առնված բանահյուսության մեջ:

Էլեքք տըսէք լինչն ի կրիք զթոփ,
Էծն ի կրիք զթոփ ..
(«Արարատ», 1899)

Դամ

Յելէքք տեսէք են վորն եկավ.
Յելան տեսան քեռիպին եկավ:
(«Անտիպ», ժող.)

Իմ ըերած որինակների բազմաթիվ վարիանտները գտնվում են Յերևանի և Վաղարշապատի ձեռագիր տաղարաններում. այս համգամանքն առիթ և տալիս ասելու, վոր յեթե միջին դարերը կապվում են 19—20-րդ դարերի հետ, ապա ինչո՞ւ հին և միջին դարերի արանքում անջրպետ պիտի լինի:

Քրիստոնեյության մուտք դործելու հետո կղերական—ֆեղալական իդեոլոգիան խիստ ճնշեց աշխարհիկ մոտիվը. դրանով պետք ե բացատրել հին և միջին՝ մինչև 10—11-րդ դարերը ժողովրդական վոգու թուլացումը զրականության մեջ: Սակայն այդ մի ժամանակավոր դադար եր, և ահա 11-րդ դարից սկսած զեմովկրատական տարրերը մեր գրականության մեջ նորից նոր թափ են ստանում:

* * *

Վերլուծելով միջնադարյան մեր գրականությունը, համարձակ կարելի է պնդել, վոր նրա մեջ յերկու ուժեղ տարր կա՝ մեկը ժողովրդական հավաքական բանահյուսությունն ե, վորը հորինվում է վորեւե անհատի կողմից,

բայց տարածվելով մշակվում ե, ձեւափոխվում ու նոր գունավորում ստանում: Այդպիսի մշակույթը կամ վերաբռա-
դրվում և զանազան վարիացիաներով, այնպես վոր, յեթե
նրա սկզբնական վարիանտը հնարավոր լիներ համեմատել
իրենից հեռացած և ժամանակի ընթացքում փոփոխված և
մյուս վարիանտների ու նրանց ֆարուլաչի հետ, նմանու-
թյունները շատ հեռու կլինելին: Այս ձեի ստեղծագործու-
թյունը, յերբ գրի յեւ առնվում, միանգամայն տարբերվում
և անհատական ստեղծագործությունից: Միջնադարյան մեր
գրականության մեջ չափազանց առատ ժողովրդական մո-
տիվի նյութ կա:

Մյուս տարբերը անհատական ստեղծագործությունն ե,
վորի հեղինակները վորոշակի հայտնի յեն. նրանք տար-
բերվում են իրենց գրելու ձեռվ, վոճով, խառնվածքով և
թհմատիկայով:

Յեթե անդիր բանահյուսության հեղինակը մնում է
անհայտ, ապա այդ նույն բանը չի կարելի ասել գրի առն-
ված վեպի, պոեմի կամ բանաստեղծության հեղինակի
մասին, վորովնետեւ ստեղծագործողն իր անհատական կնիքը
թողնում և իր ձեռակերտի վրա և դժվար ե նրա մեջ նոր
տարր մտցնել: Ինչքան ել արտագրվի, ձեռքից ձեռք անց-
նի, նա կպահպանի իր հեղինակի յուրահատուկ վոճն ու
վոգին: Միջին դարերի մեր գրականության մեջ խոշոր
տեղ են բռնում նաև անհայտ հեղինակները, ուստի հեշ-
տությամբ կարելի յեւ վերագրել վորես յերկ մի քանի հե-
ղինակների, մանավանդ վոր արտագրողների նորմուծու-
թյան կամ աղավաղումների պատճառով բուն տեկստը հե-
ռանում և բնագրից:

Անհատական աշխատավորական և ժողովրդական ըս-
տեղծագործությունները միջնադարյան գրականության մեջ
համապոր գործոններ են, մինչդեռ շատ բանասերներ այս
յերկու գործոնները անջատել են մեկը մյուսից և գերա-
կշուստ տվել են միայն անհատական ստեղծագործու-

թյուններին, մոռանալով, վոր չի կարելի անջատել նրանց
կամ հակադրել իրար:

Պատկերացնելով մեր անցյալի գրականությունը
տիտուր ու աղքատ, մի քանի ռեակցիոն բանասերներ այն-
տեղ փնտրել են միմիայն յեկեղեցական մրմունջներ, հու-
սահատության ու կյանքից խուսափելու մոտիմներ: Լա-
վագույն դեպքում այդ մարդիկ միջին դարերի գրականու-
թյան մեջ գնահատել են միայն սիրային յերգերը, վորոնք
և համարվել են միակ ոպտիմիստական կողմը, պատկե-
րացնելով այդ շրջանի գրականությունը լոկ վորպես ար-
ձագանք յեկեղեցական հոգեմաշ, ձանձրույթ առաջացնող
տրաֆարետի և պլատոնական սիրո: Բայց այդ ճիշտ չե-
չայ աշխատավոր ժողովուրդը ունեցել է իր ինքնուրույն
դասակարգավիճն շահերը և նրանից բղիող նրա ընդվզում-
ները, հույզերն ու տրամադրությունները պատկերող դե-
ղարվեստական կուլտուրան:

* * *

Այժմ տեսնենք, թե զարգացման ի՞նչ աստիճանի վրա
յեր մեր քննության յենթակա ժամանակաշրջանի աշխար-
հեկ գրականությունը:

11—12-րդ դարերից սկսվում է մեր աշխարհիկ գրա-
կանության ծաղկման շրջանը: Տնտեսական ու քաղաքա-
քական փոփոխությունների հիմքանքով հոգևորականու-
թյունը, վոր խոշոր դեր եր խաղում գրականության մեջ,
յենթարկվում է աշխարհիկ մտածողության: 10-րդ դարից
առաջ յեկած Թոնդրակյան աղանդը խիստ հարվածեց յե-
կեղեցու հիմքերը: Լինելով պաշտոնական յեկեղեցու դեմ
հակոտնյա զաղափարախոսություն, նա քարոզում եր դե-
մոկրատական մոքեր:

Զնայած այդ շարժումը պարտվեց, բայց աղանդն իր
վարակիչ հետևանքները թողեց մարդկանց մտքի վրա: հո-
գեորականներից վոմանք ընկնելով նոր հոսանքի աղղե-

ցության տակ, սկսեցին հըսպարակով գրել ու յերգել աշխարհիկ բաների մասին։ Մինչև այդ իշխող գրական ձեռ՝ — հոգեոր յերգը — յեկեղեցական տխուր ու միակերպ փառաբանությունը սկսեց տեղի տալ գրական շատ նոր ձևերի։ Առաջ յեկավ աշխարհիկ նոր բանաստեղծություն, վիալասանություն, յերդիճարանություն։ Գրականության և մտածողության այս նորաձևություններին խիստ նպաստում եր հարուստ քաղաքացիների (վաճառականների և քաղաքային արիստօկրատիայի) շարժումը կյանքի վոլորտում։ Նրանք պատելով շատ յերկրներ՝ բերում ելին նոր սովորություններ, կյանքի ու աշխարհի մասին նոր տեսակետներ, շրջվում ելին բազմաթիվ ժողովուրդների հետ ու յուրացնում նրանց բարքերը, — այն փոխադրում ելին իրենց հայրենիքը, այս հանգամանքը խոշոր աղդակ եր հանդիսանում նոր փոփոխությունների համար։ Իրենք՝ հոգեորականներն ել ֆեոդալների նման շահագործելով, մեծ հարստություն ելին դիզում և մանում ելին առեւտրի մեջ, շփում և կենդանի մարդկանց հետ ու աստիճանաբար մոտենում աշխարհիկ կյանքին։ Ֆեոդալները, վոր մինչև ալդքիչ ելին զրադվում աշխարհիկ գիր ու գրականությամբ, ալժմ սկսում են ուսումնասիրել գիտությունը, փիլիսոփայությունը. սկսում են ուսումնասիրել հունական լեզուն ու գրականությունը, սովորել պարսկերեն, արաբերեն։ աչատուր կեչառեցու թողած թղթերի մեջ մնացել ե մի հիշատակություն, վորից իմանում ենք, վոր հոգեորականները զբաղվում ելին պոեզիայով և առհասարակ գրականությամբ։ «Աղեքսանդրու աշխարհակալի պատմության» առաջարանում նա գրում է.

«Եսկ զայս պատմութիւնս աշխարհակալին Աղեքսանդրու զոր գրեցի իմով ձեռամբս, որբագրեալ ի հնոցն սահս ոգտի ինձ, և այլ համբակաց, որք կամին ոգտիլ յԱղեքսանդրէ։ Զի թէպէտ եր ընտիր և ի հին որինակէ, այլ անյալար և շաղփաղին»

Պահնորսյ զատեալ և քերեալ, քերողօրէն արարի անխոտորինակ ձանապարհ, զի յընթեհնուուն խմացին պուեսիկոս և

Տարտուպարք և ապա գիտասցէն զաշխատանս ի սմայ, զոր լիալիս վաստակեցի...» (Պ. թ. ձ. 1112):

Կեչառեցու այս առաջարանից կարելի յեւ յեղբակացնել, թե վորքան զարդացած պետք և լիներ թարգմանական և ինքնուրուցյն գրականությունը հայերի մեջ, վոր գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ այսպիսի խոտապահանջություն կար, վորովհետեւ «անլարմար և շաղփաղի» գրականությունը հղվածում ու մշակվում եր ժամանակի «պուետիկոսների» ու «քարտուղարների» գրական ճաշակը զոհացնելու և նրանց մշակված գրականություն առաջարկելու համար:

Մոտավորապես նույն ձեի մի հիշատակություն ել թողել և Գրիգոր Նարեկացին, ըստ վորի նա հանձն և առել մեկնելու Սողոմոնի «Երդ երգոց»: Ինչպես յերեսում ե, դեռ Նարեկացու ժամանակ ել «Երդ երգոցի» խիստ աշխարհիկ և հրապուրիչ տողերը գայթակղում եյին հոգեռորական մարդկանց, վորովհետեւ «... զիսորին ծածուկսն որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել»: Ինչպես հայտնի յեւ «Երդ երգոցը» կնոջը նկարում ե միայն «աղամա թզենով» և խիստ գայթակղիչ ե:

Ուստի Նարեկացին հանձն և առնում մեկնել «Երդ երգոցը», վորպեսզի կանխի նրա վարակիչ ալղեցությունը և ահա թե ինչ ե զլում նա.

Ի ՞. ի. Զ. թուականութեանս հայոց հարգեցայ ևս Գրիգոր քահանայ ի Նարեկայ որդի տեան Խորսօվայ Անձեացեաց, եպիսկոպոսի ի Գուրգենայ աստուածամբը քրիստոնազմակեալ արքայի՝ յորգոյ Աբուսահամի Համազամպ թագուառը՝ առ ի մեկնութիւնս ահաւոր ըանիցն Սողոմոնի, և բացայատել զիսորին ծածուկսն որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել: Վասն զի զիսորիչ և զարսնէ ասէ, որ և զստանց զկարմրացեալ շրթանց և զայտից զեղեցկութենէ և աշաց ցանկալեաց և ոքես և զեղբօր որդույ և զօրիորդաց և զայլն ամենայն այսպիսեաց բանից տոփականաց և որտից խոզանաց սեան սիրոյ շաղկապ միաւորութեան, զոր լուսալ մարդկան անխանալիօք յայլ և յայլ իրս իմանային...:

Գրիգոր Նարեկացու հիշատակարանից մեղ յերկու քան և պարզվում, մեկ՝ վոր հոգևորականներն ել արդեն սկսել եյին սիրով կարդալ «Երդ երգոցը» և բոլորովին ել ցանկություն չունեյին այլ կերպ հասկանալ նրա բովանդակությունը քան վոր կար, այսինքն պատկերել կնոջ — «կարմիր շրթունքներով», «գեղեցիկ այտերով», «ցանկալի աչքերով», մի խոսքով՝ տեսնել նրա մեջ այն բոլորը, ինչ «որ են քաղցր առ ի լսել», և այլաւ ականջ կախել տասնաբանյա տախտակների «մի ջնար» թեղիսին, Յերկրորդ՝ վոր խիստ դարձացած եր հունարենից, պարսկերենից, արաբերենից և ասորերենից կատարված թարգմանական գրականությունը:

11—12-րդ դարերից հետո հրապարակի վրա կային արարերենից ու պարսկերենից թարգմանված վեպեր ու չերկասիրություններ: Հայերին հայտնի եյին «Ալեքսանդրի վեպը», «Ասմար և Ֆարման» սիրավեպը, հնդկական «Կալիլա և Դիմնա» հաչակավոր առակագիրքը, «Յովասափ և Բաղրամ» — Բոււդայի վեպը: Հայ գրականագետներին լավ ծանոթ եյին Յեղոպոսի, Ոլիմպիանի և «Բարոյախոսի» առակների ժողովածուները և այլ աշխարհիկ գործեր: Դրականության աճումն ու աշխարհականացումն արդեն փաստել:

Արևելյան վառ յերևակայությունն առաջ եր բերել եղիզողիկ յերկերի խոշոր կտավ: Դրանք հեքիաթների ու պատմվածքների բազմաթիվ վարիանտներ ենին, վորոնք այսոր ել առատորեն կան մեր տաղարաններում, — վոր կազմում են մեր աշխարհիկ գրականության բաղկացուցիչ մասը:

«Աղեքսանդրի վեպը», «Պղնձե քաղաքի պատմությունը» (թարգմանված յերկրորդ անգամ 1222 թվին Առաքել Անեցու ձեռքով), «Պատմություն վասն մանկանն և աղջկանն» հեքիաթները, ինչպիսիք են՝ «Ծահ-Խոմալի» և «Գյուլիզար», «Աշուղ Դարիք և Շահ-Սանամ», «Ֆարադ և Շիրին», «Լեյլի և Մեջնուն», «Քյարամ և Ասլի» և այլն:

* * *

Հայկական գրականության զարդացմանը խիստ ոժանադակ միջոց հանդիսացավլ իրանական 10-13-րդ դարերի գրականությունը, հատկապես պոեզիան։ Այդ դարերին իրանի բանաստեղծությունն իր մեծ վերելքի շրջանն երազրում։ Այդ ժամանակ ապրում եր համաշխարհային հանճարների թվին պատկանող Ֆիրուզուին (935—1025 թ.), Պարսկական այս հոչակավոր պոետը խոշոր ազդեցություն է ունեցել հայ «բանք չափաւ» գրողների վրա։ Ներսես Շնորհալին ընդորինակել և «Շահնշամեցի» տաղաչափությունը հայկական ճիմ ձեռագրերից (Պահպատճենավայրի բանգարան)։



Զարդարված հայկական ճիմ ձեռագրերից (Պահպատճենավայրի բանգարան)

թյունը։ Աև լեռան վանականները, վորոնց մոտ ապրում եր Ներսես Շնորհալին, խնդրում եյին նրան վոտանավորներ գրել «Շահնշամեցի» տաղաչափությամբ։

Հայտնի յեր Սաադին (1184—1291)՝ Շիրազի մեծագույն պոետ — մորավիստը, վոր հանդիսանում ե աշխարհիկ գույն պոետ։

գործնական կյանքի, սուֆիականության ներկայացուցիչը՝ Պարսկական պոեզիայի մեջ մեծ տեղ և բռնում նաև Զարդարեդին Ռումին (1267—1273) իրեւ տիզերական վոգութիրկ-լերգիչ, Զալալեդինը խոշոր հոչակ ձեռք բերեց իրանում իրեւ սուփիական աղանդի խոշոր դեմքերից մեկը, վորը մի մեծ դպրոց ստեղծեց և բազմաթիվ հետեւողներ շահեց: Ռումին կասկածում եր արարչի գոյությանը և նրա տեղ ընդունում եր պանեթիզմը.

Մերթ հաղթող եմ հոգուս վրա,

Մերթ նա յե հաղթում ինձ:

(Крымский «Перс. литер.», 368)

Զալալեդինի մտքերն ու յերգած թեմաները գտնում ենք մեր գրականության մեջ.

Հոգիս թե իվեր կու քաշե,

Հողու ի ծանր ի վար կու հաղի:

(Զեռ. 397, էջ 50 բ.)

Սաադին ու Զալալեդինը յերգել են համաշխարհային թեմաներ և խիստ մեծ ազդեցություն են թողել ինչպես արևելյան շատ ժողովուրդների, նույնպես և հայկական գրականության վրա:

Այնուհետեւ Հաֆլղը — Շիրազի ըլբուլը, սիրո յերգիչը — կլանքի առօրյա հարաբերություններից չի հետացել, յերգել ե սեր, կեր ու խում և յերգել ե մեծ վարպետությամբ.

Ուր էր՝ լինելի էնքան յերջանիկ,

Որ սրակս գշտե՞ն ու գաղտնիք

Թեղ պատժէի լոկ, իմ քաղցրիկ,

Մը օր Շահնենդ չնաշխարհիկ

Գայլը պատել բունիկս անուշիկ...

Հաֆլղի նմանությամբ սիրային զեղումների բազմաթիվ քառյակներ գտնում ենք մեր միջնադարյան բանաստեղծությունների մեջ.

Ես ձադ ծըծեւնիկ պիտէի,
Զօրն ըզքո տունըդ մտնուի,
Ան բարձր ու մէյտան չարտախոդ
Ես ի հոն բուն շինեյի:

Ոնց որ մութըն մութնանար,
Յածնայի ծոցը մտնուի,
Ոնց որ լուսը լուսանար,
Բարձրանալի բունս մտնուի:
(Հայերեններից, ձեռ. 2394)

Ոմար Խայյամը — նշանավոր պարսիկ փիլիսոփա,
գիտնական-բանաստեղծ — յերգել ե գինին և նրան ուշ-
ղեկցող խորհրդածություններ ե արել: Ոմար Խայյամը
սովորեցրել ե վայելել կյանքը: Եշխարհը միայն մար-
դու համար ե ստեղծված: հանգերձյալ կյանքը սուտ ե,
վայելիր աշխարհիկ գեղեցկությունն ու բույրը, քարողում
եր Ոմար Խայյամը: Իր փիլիսոփայության մեջ նա հետեւէ
ե հույն նշանավոր փիլիսոփա Եպիկուրին:

Բքանոց ւնացի այցի որն անցած,
Տեսա գարպետին անրիկի մոտ կանգնած՝
Շինում եր կըմի կանթ ու փող, արքայի
Գանդն ու մուրացկի վոտն իրար խառնած:

Կամ

Լզգույշ, կամաց զիր վոաքդ այդ հողին՝
Դա բիբն եր կնոշ մի գեղանկար:

(Խայյամ)

Նույն խորհրդածությունները գտնում ենք մեր գրաւ-
կանության մեջ:

Մահալօքս ի վար կուգի,
Նայ տեսայ չոր գանդ մի պառկած,
Ատօքը թարալ արվի,
Նա երես ի վեր ծրծադեաց:
Դարձավ պատասխան երես,
— ի՞նչ կանես, կտրիճ շըփացած,

Երեկ քեզի ունս էի,
Այս որս զիս այս հալս են ձգած:

Կամ

Քրթխան ալ ի դինով լցած,
Խմէ՛, յէյ հար, իմ զիմաց,
Որ ելնէ հոդիս քո զիմաց:
(Հայրեններից, ձեռ. 2394)

Այս բոլոր փաստերը վկայում են այն մասին, թե
վորքան սերտ ե յեղել պարսիկ և հայ ժողովրդի կուլտու-
րական հարևանությունը: Մի շարք մարդկանց այս ընդ-
հանրությունն այն աստիճանի յե շփոթել վոր դրանից
ուղղակի յեղբակացություններ են հանել թե հայկական
միջնադարի կուլտուրան ամբողջապես փոխառություն
և պարսիկներից կամ հույններից: Այս դատողությունը
յուրահատուկ ազգայնամոլական մի դիտավորություն ե,
վորով ճգնում են ապացուցել, թե հայ աշխատավոր ժո-
ղովուրդը ոտարի լուծը կը ելով գագարել և ստեղծագոր-
ծելուց, թե նա ստրկանալով կորցրել եր իր ազգային դի-
տակցությունը և անվերապահորեն ընդունել և ոտար
շահագործողի տիրապետությունն ու նրա թելագրած կուլ-
տուրան: Այդ կարգի նացիոնալիստաները դիտմամբ անգի-
տանում են, վոր հայ աշխատավորությունը հավասարապես
ճնշվել ու շահագործվել ե թե հայրենի տանը նստած և թե
ոտար շահագործողից: Բայց հայ աշխատավորությանը չե
կարելի պատկերացնել վորպես մորթվող զոհ, վորը ճակա-
տագրի թելագրությամբ, անտրառունջ, վիզը մեկնում եր
դահճին: Այդ ճիշտ չե, մյուս ժողովուրդների նման նա ել
և ըմբռատացել բռնության դեմ: Նա ընդվզվել ե թե ոտար
բռնակալների և թե հայ շահագործող դասակարգի գեմ,
նա ընդունակ ե յեղել պաշտպանելու իր հավաքական ամ-
բողջությունը: Յեթե կղերական պատմագրությունը պատ-
մության եջերից խնամքով դուրս ե դցել մեր ժողովրդի դա-
սակարգային կովի պատմությունը, այդ գեռ բավական չե
ապացուցելու, թե մեր ժողովուրդն անմասն ե դասակար-

գային կովին և թե աշխատավորական ընդվղումներ չենք
ունեցել և այդ ամենը մեր գրականություն մեջ արտա-
հայտություն չի դաել:

* * *

Գրականության մեջ բեկումն սկսվում է Գրիգոր Նա-
րեկացով, վորը հիմք եւ գնում յեկեղեցական լիրիզմին:
Մինչեւ Նարեկացին յեկեղեցական գրականությունը չոր ու-
ցամաք, աստծու միակերպ փառաբանությունների կրկնու-
թյուն եր: Նարեկացին այդ փառաբանությունները գունա-
դարդեց ու պատկերավորություն մացրեց նրանց մեջ:
Բայց Նարեկացու առավելությունն այն ե, վոր նա կրո-
նական թեմատիկայի վերացականությունը զարդարում եր
իրական աշխարհից վերցրած նմանություններով: Նարե-
կացին (940-ական թ.) իր կրթությունն ստացել է նշանա-
վոր գիտնական Անանիա Նարեկացու մոտ, Նարեկա վան-
քում:

Նարեկա վանքում նա ձեռք եւ բերում բարձր կըր-
թություն վորքան կարող եր տալ ժամանակի գպրոցը:
Նա ուսումնասիրում եւ աստվածարանություն, աստվածա-
րանական գրականություն և, ինչպես վոր պետք ե կար-
ծել, նաև բանաստեղծական արվեստն եւ ուսումնասիրում:
Նարեկացուց մեզ հասել են հաչակավոր «Մատեան վող-
քոց»-ը, վոր միստիկական պոեզիայի մի խոշորագույն
կոթող եւ ներբողներ, տաղեր, թղթեր և այլն: Հին գրա-
կանության մեջ խոշոր արժեքն ունեն նաև նրա
տաղերը, վորոնք թեպետ սյուժետ չունեն, բայց հրաշալի
յերաժշտություն ունեն: Առաջին անգամ Նարեկացին եւ աշ-
խարհիկ թեմաների մասին գրում: Աստծու և հրեշտակնե-
րի փոխարեն նա յերգում եւ բնությունը:

Գոհար վարդն վառ տռեած
Ի զեհից վարսիցն արփենից:

Ի զեր ի վերայ վարսից
Ծավալէր ծաղիկ ծովային:

Դամ

Երփին երփնունակ ծաղկին
Շողշողէր պտուղն ի ճղին:

Այդ սօս ու առսախ ծառերդ
Վարդագոյն ոստոս արձակելին:

Շուշանն շողէր յովտին,
Շողշողէր զեմ արեգականն:

Շուշանն շաղով լցեալ,
Շող շաղով և շար մարդաբով:

Դրելով Աստվածածնի մասին՝ Նարեկացին նրան պատ-
կերել ե վորպես իսկական կին, գովել ե նրա շրթունքները,
ստինքները, աչքերն ու հասակը, համեմատելով նրան վոչ
թե յերկնային հրեշտակների կամ քերորեների հետ, այլ
լուսնի, արեի, վարդի, բողբոջների, վոստերի և ընության
այլ հրաշալիքների հետ. Յեվ յեթե վորեն նկարիչ կատվի
վրա վերցներ Նարեկացու Աստվածածինը, կստացվեր իտա-
լական վերածնության շրջանի մաղոնան՝ զուտ սովորա-
կան մի զեղեցկունու տիպար:

Մեծ հավանականությամբ Նարեկացին յենթարկվեց
թոնդրակյան շարժման տարերքին, վորի պատճառով բա-
նաղրվեց պաշտոնական յեկեղեցու կողմից և ստիպվեց մի
թղթով անիծել թոնդրակեցիներին. Մի կողմից նրա բանա-
ստեղծական յերևակայությունը, վորի մեջ այնքան սլանում
եր Նարեկացին, մյուս կողմից մարդկային զգացմունքների
գաման ձնշումը յեկեղեցու կողմից՝ խոշոր ազդակ հանդիսա-
ցան Նարեկացուն միստիցիզմի գիրկը նետելու գործում. Նրա
տաղերը հրապուրիչ են, լովատեսությամբ տոգորված, բա-
նաստեղծական խանդով գրված, մինչդեռ «Մատյան վողբոցը»

Նարեկացուն տանում և դեպի տիեզերական ցնորքներ՝ կլանված վոչնչականության ձգտումներով, Նրա մորալը աշխարհից կարու և յերկնքում փրկություն չգտած մարդու մորալ եւ նա միշտ կասկածում եւ յերկնքի արքայությունից բաժին, յերկնային գաֆան գատավորից ներում ստանալ, իսկ աշխարհին ել հրաժարական եր տվել, ավելի ճիշտ ստիպել եյին հրաժարավել, և այդ նրա հոգեկան ու բարոյական կյանքի վողբերգությունն եր, վորն իր կնիքն եղբեկ նրա ստեղծագործությունների վրա, Նարեկացու բանաստեղծությունը, բացի նրա տաղիկներից, ամբողջովին վողբերգություն եւ Հետապայի բանաստեղծները մեծ մամբ որինակ վերցրին Նարեկացու տաղիկներից:

Նարեկացուն ժամանակակից եր Գրիգոր Մագիստրոսը (990—1058), վոր իր ժամանակի նշանավոր գիտնականներից եր, նա լավատեղյակ եր հունական փիլիսոփայության, հոետառության ու առասպելներին: Նա թարգմանեց Պլատոնի «Ճրամախոսությունը», Եվլիպեսի «Յերկրաշափությունը»: Գրեց Դիոնիսիոս Քերականի մեկնությունը, վոտանավորներով շարագրեց հունական, հայ և արեելյան առասպելներ: Սակայն այս Դրիգոր Մագիստրոսը պատկանում եր Կղերա-Փեղողալական ուեկլցիային, նա խիստ հալածանք հարուցեց և բանագարանքներ գրեց թոնդրակեցիների գեմ:

Այնուհետև հրապարակ և իջնում Ներսես կաթողիկոսը (1102—1173), վորը «Ծնորհալի» մականունն և ստանում, իբրև տաղանդավոր արձակ և չափածո գործերի հեղինակ: Նա գրել և ճառեր, ներբողներ, մի վողբերգական պոեմ՝ «Ողբ Եղեսիո», վորը Յեղեսիա քաղաքի առումն և պատկերում:

Ծնորհալին գրականության մեջ հայտնի լի իր առակներով, առածներով և հանելուկներով: Հակառակ Նարեկացու, Ծնորհալին իրական աշխարհը պատկերում և բավական ուելիք, ունի պատկերներ, վորոնք կոնկրետ են: Նա նկարագրում է քաղաքներ, կենդանին մարդիկ, նրանց հարաբերությունները և առորյան: Ծնորհալին խիստ զար-

գացրեց թե հոգեւոր և թե աշխարհիկ տաղաչափությունը։ Ամբողջ քառյակներ, գլուխներ, նույնիսկ ամբողջական յերկեր վերջացնում են միանման հանդերով։ Սակայն Նարեկացու համեմատությամբ նրա խոյանքները ազատ չեն և զգացվում են, վոր Շնորհալին Նարեկացու ազատ ձեերը չունի։ Ներսես Շնորհալու սիթմիկայի մշակումը մեծ աղդեցություն ե թողել իր հետնորդների վրա։

Ներսես Շնորհալուն ժամանակակից եր Հովհաննես Սարկավագը (1129 թ.), վոր ապրում եր Հաղբատի մենաստանում։ Նա գիտնական-փիլիսոփա համարում եր ստացել ժամանակակիցների կողմից։ Նա հմուտ եր մատենագրության և տոմարագիտության մեջ, իր նախորդ և ժամանակակից հեղինակներից Հովհաննես Սարկավագը մի գլխով բարձր եր գեղարվեստի բնագավառում։ Հավանութեն նա ծանոթ եր հունական բանաստեղծության չափական կանոններին և Արիստոտելի «Պոետիկային», վորովհետեւ բանաստեղծությունը նա համարում ե բնության նմանողությունու Բանաստեղծությունը, ըստ Հովհաննես Սարկավագի, պետք ե ձգտի տալ այնպիսի մոմենտներ, վորոնց մեջ զրված լինի կանքից առած մի պատկեր, սա ոեալիգմի առաջին թույլ շառագունումներից մեկն ե մեր հին զրականության մեջ։

Այս կարգի թվածն հեղինակները բոլորն ել շահագործող ֆեոդալ դասակարգին ելին կապված և ծառայում ելին վերջինիս նպատակներին։ Սակայն 12-րդ դարից հետո հանդես են գալիս մի շարք բանաստեղծ տաղերգուներ ու արձակագիրներ, վորոնք ձգտում են գեղի ժողովությունը։ Յերկի նյութը դառնում ե հասարակ ժողովուրդը, նրա առորցան, հասարակական հարաբերությունները։ Լեզուն ել յենթարկվելով այն տարրի ազդեցությանը, վորից վերցվում եր նյութը, սկսում ե ժողովրդականանալ։ Ներսես Լամբրոնացին (1154-1219) թարգմանում ե «Բյուզանդական որենսգիրքը» և «Զինվորական որենսգիրքը»։ Նրանից հետո Մխիթար Գոշը (1213) հավաքում ու խմբա-

զբում երենքի ուժ ստացած հայերի սովորությունները՝
թե Լումբրոնացու թարգմանած որենսդրքերը և թե Գոշի
խմբագրած «Դատաստանագիրքը» (1184 թ.) ցույց են տա-
լիս, վոր քաղաքացիների իրավունքներն արգեն սկսում
են գրանցվել՝ ֆիքսացիայի յինթարկվել վորը նշան եր
նոր հարաբերությունների սաղմնավորման իհարկե «Դա-
տաստանագրքի» հոգվածները դժվար թե ապահովելին
գյուղացիներին հարստահարություններից, սակայն այդ ևս
առաջադիմություն ե ֆեոդալական ըացարձակ սանձարձա-
կության համեմատությամբ։ Գոշի խոշոր արժանիքներից
մեկն ել այն ե, վոր նա թողել ե առակների մի ժողովա-
ծու։ Հայտնի յէ, վոր առակները դեռևս 7-րդ դարից հայտ-
նի ելին մեր զրականությանը, իսկ 11-րդ դարից սկսած՝
մեծ տեղ են զտել դպրոցներում ու վանքերում, վորպես
մեկնությունների առարկա և բարոյախոսական այլաբա-
նություններ։ Աշակերտները պարտավոր ելին զպրոցնե-
րում ճարտասանության, քերականության և աստվածա-
քանության հետ միաժամանակ «Առասպելաբանությունք»
սովորել — այսինքն առակներն անգիր անել և մեկնու-
թյուն տալ նրանց։ Գոշի առակների մեծամասնությունն
ուղղված ե աշխատավորների իրավունքի դեմ։ Նա վանա-
կան արիստոկրատիայի տիպիկ նիրկայացուցիչն եւ իր
առակների մեջ խիստ կծու ծալըռում ե ստորին հոգեորա-
կան աստիճանավորներին և աշխարհականներին, առավել
ևս աշխատավորներին։

Երկրի հայեցեալ ի բարձրութիւն լեռանց՝ համարձակեցաւ
լինել և երկին և ոչ կարոց զլուստորս ընդ ինքեամբ տոնել
նաև երենի և լուսաւորել

Յանդիման նշանակու — ասում և Գոշը — զաշխարհական
ոմանս, զոր փքացեալ ճողփութեան իւրեանց, զըահանաւից կամեն
յափշտակել զպատիւ։

Իսրեա արիստոկրատական գաղափարների պաշտպան
Գոշն որինականացնում ե բռնությունն ու շահագործումը

Ճնշված դասակարգերի հանգեպ: Նրա առակներից մեկի մեջ
կարում ենք.

Եղան յերբեմն տրտունջ անդէոց, թէ վասն ծննդոց մեր աշ-
խատիմք և սանամբը ժողովեմք կաթն, և մարդիկ ճմլեալ զպրա-
կունո՞ առնուն ի մէնչ զվասակս մեր. ելցուք և այլես՝ մի զարձ-
ցուք առ նոսա. և մի ոմն ի նոցանէ իմաստուն ասէ. ոչ է այդ-
պէս, զի զաւելորդաբն քան զայէսս ծննդոց մերոց առնուն ար-
դիկ և խնամեն մարդիկ զմեզ յնի զնունդ մեր, զի առնում օաս-
խան քէ տամ: (Ընդգծում իմն ե. Յո. Թ.):

Խրատէ առակս. զըրթմնջոց սպասաւորք շատ կարծեն զին-
քենանք, քան զտերանցն, զոր առնուն:

Այս ե Գոշի բարոյագիտությունը: Քանի վոր տերերը
«հոգատար են» դեպի իրենց ճորտերն ու ստրուկները,
ուստի վերջինների բողոքն անխմաստ ե: Այս նշան եր այն
բանի, վոր դասակարգալին հարաբերությունները խիստ
սրվել եյին և Գոշի այդ զրույթները չեյին կարող իրենց
հակագրությունը չառաջացնել:

Այգեկցին մի սերնդով կրտսեր ե Գոշից. նա ծնվել և
Հալերի շրջակայքում գտնվող Մարաթ գյուղում: Կրթու-
թյունն ստացել ե Առքակաղնի գյուղում: Յերկար ժամանակ
ապրելով Սիրիայում, նա բավականաչափ ծանոթ եր արա-
բական, յեգիպտական, հրեական ու հելենական կուլտու-
րաներին: Իր մասին նա ասում ե. «Որդեակը իմ, ի ման-
կութենէ մինչև ի ծերութիւն շրջեցայ ի մեջ աշխարհի, և
տեսի զբաղումս զմեծամեծս: Եւ անչափ լուայ ծածկա-
բար զգործողացն զչարս, նաև ուսա ասուածեղէն զրոց, որ
ոչ գոյ թիւ»: Այգեկցին հաստատվում ե Կիլիկիայի Հռոմելա
քաղաքում և քարոզներ կարդում: Բայց նրա բարոյախոռ-
սությունները չեյին սաղում այնտեղի վաճառականների ու
հարուստ քաղաքացիների հայացքներին, վորովհետեւ Այգեկ-
ցին իր առակներով խարազանում եր նրանց պերճանքը, քըն-
նազատում եր առետրի ընթացքում և նրանց կենցաղում յե-
ղած կեղծիքները և անբարոյականությունը: Վարդան Այգեկ-
ցին անիծելով հեռանում ե այդ քաղաքից և բնակություն

հաստառում Սև լեռների «Ալգեակ» անունով մի մենաստանում։ Այգեկցին Գոշի համեմատությամբ ավելի մոտիկ ե ժողովրդին և իր դեմոկրատական առակներով խիստ աչքի ընկնող տեղ ունի մեր անցյալի գրականության մեջ։

Ալգեկցին, իրեն մորալիստ, կարծում եր, թե աշխարհում չեյին լինի հարուստաներ ու նեղյալներ, — յեթե ըոլոր հարուստները բարի լինելին, ցովություն չեր լինի, — յեթե ըոլոր կանայք համեստ լինեյին, իսկ տղամարդիկ՝ ժուժկալ։ Վարդանի բարոյախոսությունը, անկասկած ժամանակի կղերական մտայնությունից հեռու չեր գնում, սակայն այդպես չե նրա առակների այն մասը, վորն առնված ե ժողովրդից և ուղղված իշխող դասակարգի դեմ։

Եւ արդ՝ անա տեսանեմք զմեծատունս, որ ի ձեռն մշակաց զործեն՝ և փշովք պատեն՝ և պահեն զայտիս՝ և զդրախարս և ի ժամ ճաշակման ողկուզից պատղուցո՞ն ոչ զմշակս յիշեն, ոչ զծառայս. այլ տանուտեանն շնորհակալ լինին և նմա երկար և խաղաղական հայցեն յաստուծոյ։

Բոհությունը խարազանելու և տիրող դասակարգի գեմ ըուռն զայրությ հայտնելու ավելի լավ որինակ, քան ստորև բերված առակը, դժվար և գտնել ժամանակակից հայ գրականության մեջ։

Իշխան մի կայր յայժ չար և անիբաւ, Եւ այրի կին մի կայր ի նոյն քաղաքի, և իշխանն հարկ պահանջելով նեղէր դնա. և կինն աղօթելով ասեր. թէ աստուած զինքն խաղաղութեամբ պահէ, Գնաց ն ասացին իշխանին, թէ քու չարիդ համար աղօթ կու առնէ, եկն ձեռնաւորն և ասէ, ես քեզ լավ չեմ արել զու ինձ համար է՞ր կու աղօթես։ Նա ասաց, թէ քու հայրն վատ մարդ էր, ես անիծեցի, նա մեռաւ, զու նստար նորա տեղն այլ խիստ չար. կու վախեմ, թէ մեռանիս, նա քո որդին այլ լինի իշխոտ չար։

Ալգեկցու առակների մեծ մասն իրենց բնույթով աթեխստական են։ Մի առակում Ալգեկցին պատմում է, թե մի մենաստանում մի վանական եր ապրում, վորն ամեն գիշեր դուրս եր դալիս իր խցից և մտնելով մի կնոջ տուն

շնանում եր: Վերադառնալով իր խույը ազոթում եր աստծուն, վորպեսզի նա հալածի չար սատանային և իրեն հեռու պահե գայթակղությունից, բայց և այնպես ամեն որ կը կնում եր նույնը: Այդ խմանալով գյուղի տանուտերը գիշերն աղատ ե թողնում գամփոք, յերբ վանականը դնում ե շնանալու, գամփոք հարձակվում ե նրա վրա և գզգզում: Վախեցած վանականը հազիվ-հազ ընկնելով իր խույը աղաջում ե աստծուն: — անը աստված, յես միշտ խոստովանում եյի քեզ և չաղատվեցի այդ ախտից, բայց գամփոի սարսափը քոնից շատ եր, յես այլևս չեմ համարձակվի գնալ պոռնկության:

Այգեկցին ըստ ակադ. Մառի վկայության 22 տրակտատ ե գրել: Այգեկցու առակների թիվը համառում ե շուրջ 500-ի¹⁾: Դրանք մեծ մասամբ ժողովրդական եպոսի նյութեր են, առակներ, առասպելներ, լեզենդներ, արձակ պատմվածքներ, վորոնց սկիզբը համառում ե մինչև կենդանական եպոսը: Այգեկցին բանաստեղծական ձեականություններ չի անում, գրում ու պատմում ե հանդարտ, չափավոր, առանց ճոռոմության ու դրվատումների:

Վարդան Այգեկցու նման առակներ ու խրատներ ե գրել նաև մեկ ուրիշը — Կարապետ վարդապետը, վորը գրել ե նաև հանելուկներ, վորոնք վերցված են ժողովրդից:

Թոփ մի ատլաս ունիմ,
Թեղին չէ տեսեր,
Չուալ մի ալիւր ունիմ,
Չաղաց չէ տեսեր,
Կոճ մի ունիմ, մեշե չէ տեսեր:
(Փշատ)

13-րդ դարից սկսած գրականությունը կենտրոնանում ե կոնկրետ խնդիրների վրա: Այժմ կենցաղն ու սոցիալական հարցերը կազմում են գրականության միջուկը: այդ

1) Պետ. թանգարանի № 650 ձեռագրում ինձ հաջողվեց դանել Այգեկցու մի քանի անտիպ առակներ:

ժամանակի խոշոր դեմքերն են՝ Ֆրիկ, Հովհաննես Յերզըն-կացի, մի ուրիշ Հովհաննես Յերզնկացի, վորին հաճախ շփոթել են Պլուզի հետ, և Կոստանտին Յերզնկացի։ Սրանցից վոմանց մոտ հանդես ե դալիս հումանիզմը. մարդը դառնում և ստեղծագործության, սիրո և հարգանքի առարկա.

Ֆրիկը, վորի լեռկերի լիակատար ժողովածուն հրատարակելու մասին ՀԽՍՀ Կենտգործկոմը վորոշում ունի, պատվավոր տեղ ե բռնում մեր միջնադարյան գրականության մեջ և հանդիսանում ե մեր գրականության մեջ, ինչպես տեսանք, հանդես յեկող աշխարհիկ — դեմոկրատական տեսնդենցի հետևողական շարունակողն ու զարգացնողը։ Մինչ այժմ մեզ ծանոթ ժամանակակից հեղինակների համեմատությամբ՝ Ֆրիկի ամենախոշոր արժանիքն այն լեղավ, վոր սոցիալական բողոքը նա դրեց սեալ հողի վրա և վորոշակի ու մեկին ցույց տվեց, թե աշխարհում կան երեր ու ծառաներ, գոյություն ունի սոցիալական անհավասարություն, վորի դեմ Ֆրիկը ուժգին բողոք հայտնաց։ Մինչև Ֆրիկը, շատերն են անիծել հարուստին, բռնակալին, սպառնացել են նրանց աստծու դատաստանով, աշխարհն համարել անիրավության ու անառակության բռն, բոլոր մարդկանց մեղավոր և այն, սակայն Ֆրիկը, իբրև իրերի վիճակին գիտակ մարդ, ժողովրդական աղքատությունն ու ճնշումը փնտում եր մարդկանց հարաբերությունների մեջ և վոչ թե յերկնքում իբրև նախախնամության կանխասահմանում։ Ֆրիկը շատ լավ եր հասկանում մարդկանց միջև յեղած տնտեսական տարրերությունը.

«Որ մէկն ունի և գայելի,

Մէկն ոչ ունի և ոչ գայելի,

Եւ է կարաօտ զո՞ն մի հացի»;

(Վաղ. Մ., 3595)

Ինչու այդպես անարդար ե աշխարհը։

Մոռքս յայս բանիս վերաց ժամանակ մի հոգս եմ ընկած,

Կասեմ, թե այս է՞ր լինի որ ամենն հաւասար չէ

զուգաց։

(Պետ թանգարանի ձեռ., 1112)

Յեկ Ֆրիկը դանելով պատասխանը՝ զայրացած բացաւկանչում ե.

... է՞ր չես առներ ըդորդ դատաստան, է՛յ ծուռ դատաւոր:

Արձանագրելով, վոր մարդու իրավունքի բռնադատումը անարդար մարդկանց ձեռքով ե կատարվում, դրանից Ֆրիկը յեղակացնում ե, վոր անհավասարությունը մարդկային հարաբերության արդյունք ե և վոչ թե ճակատագրական նախասահմանում. բայց այս փաստերի առաջնորդ լուռ չի մնում, նա վրեժ ե կուտակում իր հոգու մեջ.

Քան զմեծատունն ալլ ով հարուստ.

Անշափ ուներ ակն ու գոհար,

Կապատ հադներ ցեղ ի ցեղաց,

Փողպատ ամեն սարգարտաշար:

Ֆրիկը չի կարող հաշտվել այդ փաստի հետ, նա պահանջում ե զրկել հարուստին այդ փառքից, այդ հարստությունից.

Բարձր ես նոստեր և վերայ խալուդ,

Ցեսե տի դաս ատկից ի վայր:

Անկասկած Ֆրիկին հայտնի չեր, թե հարուստն ինչպես, ինչ միջոցով պիտի վայր գար իր փառավոր խալուց, բայց նա զգում եր տիրող անարդարությունը և բողոքում դրա գեմ:

Ֆրիկն իբրև դեմոկրատ, նախ խոշոր հռոմանիստ եր, նա ծառացել ե անիմաստ արյունուշտ կոտորածների գեմ:

Քանի արիւն հեղուն յերկրի,

Քանի առնեն բան խոսուին...

Մեկ ազգի ստրկացումը մի ուրիշ ազգի բռնակալների կողմէց՝ Ֆրիկի մեջ նողկանք ե առաջ բերել, — մի հանդամանք, վոր ուրիշ հեղինակներ (Լաստիվերցի, Գանձակեցի և ուրիշները) վերագրել են ամբողջ ազգի մեղքերին:

Գիտես, մարդ և մք մոհով,
Թէմ արձան չեմք ինչ պղընձի,
Եղէգն չեմք կառ խոտ վայրի,
Որ ևանձ արկեալ ես ի կրտիի
Զերթ անդաստան փշաբերի,
Որ բարկացար հայոց ադախ:

(Վ. Մ. 2., 3595)

Այսպիսով հայ ժողովրդի տառապանքը նա չի վերա-
գրում հայ ժողովրդի մեղավոր հոգուն. ընդհակառակը, նա
դրա պատճառը փնտում և ազգերի թշնամական հարաբե-
րությունների մեջ, վորոնց պետք և վերջ տալ:

Ֆրիկը բոլոր հարուստներին ու իշխաններին համա-
րում և գաղաններ.

Իշխան զրել ես մէկ մէկի,
Զերդ քանասար զայն ոչխարի.

Հարստությունն իրավունք և տալիս մարդուն ան-
պատիժ կերպով կողոպահելու իր նմանին և խլելու նրանից
նրա սեփականությունը.

Մէկն ի զըկանացն հարստի,
Տէկին հալալըն կորուսի.

Ֆրիկն իր մի քանի տաղերի մեջ յերեան և գալիս
նաև վորպես աթեիստ: Նա շառաչուն ապտակ և զարկում
«անճառելի», «անքննելի», «անեղ» աստծուն: Թվելով
մարդկային բոլոր զըկանքներն ու տառապանքները, աղ-
քատ դասակարգերի ու ճնշված ժողովուրդների հարստա-
հարությունն ու շահագործումը, Ֆրիկը բացարձակ կեր-
պով կասկած և հայոնում աստծու արդարադատության
մասին (փաստորեն՝ նրա գոյության մասին).

... և այս էր բան քո հրամանի, արդար իրաւ զատաս-տանի
(408)

... այս էր բան քո հզաւըի, արդարադատ զատաւորի
(3595)

Աստվածաշունչն ու ավետարանը, կենդանի մարդու
գեմքը ջնջելով, նրան զարձնում են մի դատարկ անօթ,

զիորի՝ մեջ արձադանքում եւ արարչի «հայրական սերը» դեպի մարդը, միաժամանակ այդ «սիրող հայրը» դեպի մարդիկ դաժան ու վրիժառու յեւ դառնում, ֆրիկը մարդասիրությունը հրաշապատումներից ազատում եւ և նրան աշխարհիկ հատկությունն եւ տալիս.

Թէ չի կայր սէր աշխարհիս, կամ սէր չեր եղեաւ
Արարիչն առ մարդիկ սէր Երբ ցուցանէր
(Անտիպ յերկերից)

Նա բացատրում ե, վոր մարդիկ միայն կարող են իրար սիրել, և աստվածային սերն առանց մարդկանց կենացնի հարաբերությունների չի կարող լինել: Այսպիսով ֆրիկը հանդես ե գալիս վորպես միջնադարյան լուսավորական գաղափարների հետեւղական պաշտպան:

* * *

Մինչեւ այժմ համոզում ե դարձել այն միտքը, թէ միջնադարյան գրականությունը պարունակում ե միայն սիրո և հատաշանքի (միստիկական) մոտիվներ), Այս բանաձևումը վոչ միայն սիրալ ե, այլև վտանգավոր տեսություն ե: Ինչպես հասկանալ՝ միստիկական անձնակեղեքքման, ապաշխարությունից մինչև ընտական կյանքի հակում, մինչև մերկանդամ կնոջ համարձակ նկարագրությունը:

Գուցեւ ինձ վոմանք առարկեն, թէ վանական գսպած կյանքը հակադարձ ունակցիա յեւ առաջ բերում, և միստիկական կապանքներից ազատված մարդն անմիջապես սիրամոլություն եւ յերգում: Բայց չե՞ վոր թե միստիցիզմը և թե տրամագծորեն նրան հակառակ սիրամօլությունը բղխում են մարդկային հարաբերություններից: Միստիցիզմը լուրահատուկ բողոք, ե՛ հուսահատության ու անկարողության բողոք, աշխարհային որենքների դեմ, իսկ այդ որենքները մշակում են մարդիկ: Հասարակական սանդուղքի վրա շարժվող մարդիկ իրար դեմ պայքար են մղում, հետեւապես գրականության մեջ արտահայտված բոլոր ան-

սակի մոտիմները պայմանավորված են միայն և միայն դասակարգացին կովով (դասակարգային հասարակության մեջ): Ուստի անկարելի բան ե, վոր միջնադարյան գրականությունը սիրո և միստիկական զեղումներին տեղ տար, իսկ մյուս մոտիմները թողներո Ընդհակառակը, անմեղ ճանաչված սիրո յերգն ել առանց դասակարգային կովի չեռւղեկցվել, և այս բանն ապացուցելու համար փաստեր կան ինչքան կամենաք: Վոր դասակարգային կովիը մեր միջնադարյան գրականության մեջ բավականաշափ տեղ և գտել, այդ ամեն մի կասկածից դուրս ե: Ուստի գրականության «խաղաղ զարգացման» տեսաբանները քողարկել են հենց այդ, հայ ժողովրդին ներկայացնելով վարպետ միաւտարը, համասեռ զանգված, աղավաղելով, աղձատելով նաև մեր հին գրականությունը: Այն ինչ, մեր գրականության առաջավոր ներկայացուցիչները սուր բողոք են բարձրացրել անտեսական անհավասարությունների դեմ և ակտիվ պարզաբ են մղել մարդուն ստրկացնող յերեսույթների դեմ:

Մէկն բերդեր և քաղքենի,

Մէկն յաւթեան մի կարօտի:

(Ֆրիկ, Ճռաղիք 3595)

Մեկը տեր և բերդերի ու քաղաքների, մեկը մի ովելվան ել չունի, գլուխ դնելու տեղ չունի, միթե արգարությունն ե այս — հարց և տալիս հեղինակը: Վոմանք ժառանգարար իշխան են, ուրիշները պապերից աղքատության, մուրացկանի պարկն են ժառանգել:

Մէկն ի պապանց պապք արքունի,

Մէկն ի պապանց պապք մոլիի¹⁾

Մարդկանց իրավունքն հասարակական ընտանիքում վարոշվում ե նրանց ունեցվածքով: Աղքատն իրավականութեն յենթարկում ե «տավլաթվորին», աղքատը «չունի դաշտ փախստի, ոչ քարանձաւս ապաւինի»: «Տաւլաթվորը» պարտ ե տալիս աղքատին և ծանր հավելումներով

1) Մոլիի — մուրացկան-

գետ և պրոհանջում «քան զփողատու... և ըստ իւրեանց կամացն թէ ոչ առնեն... կու հայհոյեն» (ձեռ. 408). Ճիշտ գատաստան չկա, մարդկանց (իմա՝ աղքատների) իրավունքները դատավորներն ու իշխառները վոտնահարել են,

... յորժամ նստին ի դատաստան,
քինախնդիր մինին ի մարդկան
սպանելոյ կուտան հրաւան
(Ձեռ. 408)

Բոնակալներն ու իշխաններն անխիղճ ճանապարհով հարստությունն են կուտակում.

Մէկն ի զրկանանցն հարստի,
Մէկն հալալն կորուսի.

Իսկ աղքատ գասակարգը կեղեքվում, պապակվում և հարստի ճիրաններում, վորովհետեւ մեկին «հազար կապիճ ուկի», մյուսին «ոչ փող մի պղնձի», Յեզ այս ամենը հանուն ուժեղ գասակարգի յերջանկության, անհոգ ու շվար կյանքի: Աշխարհը զավթել են հարստանները, վորոնք ճնշել ու կողոպտել են իրավագուրկ մարդկանց.

Վասն պրաւացն իւրեանց համայն
Թող կորչին որդիկ մարդկան:
(Ձեռ. 408)

Բայց այս ամենը խնդրի մի կողմն ե: Միջնադարյան գրականությունը լոկ լուսանկարչական աշխատանք չի կատարել: Նա վերլուծելով ստեղծված իրականությունը՝ յելքի ուղիներ և փնտուել:

Իհարկե յելքի ուղիները բավական մշուշտ են: Միջնադարյան հեղինակները յելք վնատուել են մերթ «աստծու գատաստանի» մեջ, մերթ ցասկու զայրութով իրենք են ձառացել բռնակալության դեմ: Յերբեմն նրանք համբերությամբ սպասել են գալիք վրեժինդրության որվան, վոր հարստան իր պատիժը գաստակի «յերկնուստ». յերբեմն մել ուղղակի մատնացույց անելով աշխարհի անիրավությունները՝ ասում են.

Թէ լինի որ սխալ է մարդ յօրինաց,
Մի վախեր ոչ թագաւորէ, ոչ յիշանաց...
«Իրավմամբ զատել տալ զերկիր տնանկաց»
(ձեռ. 408).

Այստեղ արդեն վորոշակի ասված և չվախենալ վոչ
թագավորից, վոչ հշանից, յեթե նրանք վոտնահարում
են ժողովրդի իրավունքները և պետք են չերկիրը տալ
«տնանկներին»:

Միջնադարյան գրականության մեջ հանդիպում ենք
վորոշ և մեկն քննադատական վոգու, վորն այնքան ուժ-
գին և բողոքում գոլություն ունեցող կարգերի դեմ՝ Հա-
կառակ ֆիլստեր գրականագիտների պահպանողական ճա-
շակի՝ մենք բազմաթիվ փաստեր ունենք, վորոնք խոսում
են դասակարգային կովի առաջության մասին գրականու-
թյան մեջ։ Հենց այդ փաստերն են, վոր անողորմաբար
մերկացնում են այն մարդկանց, վորոնք մեր անցյալից
գրականության մեջ դեմոկրատական շարժման հետքեր չեն-
դուել։

«Երեք ուղարք և երեք աղուէսն եղէն եղբայրք և դասան-
իրեք հաց մաքուր և ուղարքն ասին զհացն և բարձրուցացին-
զգլուխ խրեանց և աղաղակերպ ուտե՛քն զհացս. և աղուէսըն-
լային առ յուս նոցա և կոխեալ ըղացոցն սատուեռցին զնոցա.
Ցուցանէ առակս, թէ մեծատունք ծըծեն զգուզս ժողո-
վողեան և շատ պատահի որ աղքատն ի նեղեալ վլշտացն մեռանիւ։
(«Վարդանա» առակներից):

Կարելի՞ չե այս փաստերն անգիտանալ և չտեսնել
դեմոկրատական ընդվիզումները. ինչքան ել հայ ժողովրդի
«միասնության», «աի հոտ—մի հովվության» և «դասակարգա-
յին համերաշխության» «տեսաբանները» կոկոան, այնուա-
մենայնիվ փաստը նրանցից զորող ե, առակն ուժգին ապ-
տակ և զարկում այդպիսի «տնասություն» թխողների յերե-
սին։ Համերաշխություն և խաղաղ զրացիություն յերբեք չէ-
կարող լինել տարբեր հասարակաշերտերի մեջ։

Ժողովեցան այծք ամենայն և առաքեցին պատգամս առ-
ագգըն գալոց և ասացին, թէ ընդէ՞ր ունեք ընդ մեղ անհաջո-

խողովութիւն և աղաչեմք զձեզ որ առնեք խաղաղութիւն ընդ
մեզ... և գալքն ժողովեցան և ուրախացան... և առաջեցին պատ-
գամս մեծ նամական ընձաւք առ ազդու այծեաց և ասեն... մեծ
խնդութիւն է և խաղաղութիւն...: Զայս լուան այծքն և արարին
թուխտ երգման... և ե, եալ այծքն տարածեցան անհոգ ի լերինս
և համբերեցին դալքն զորս տաս և ժողովեցան ի վերայ նոցա և
հեղձուցին զայծս զամենայն:

(«Վարդանա» առակներից)

Դասակարգային անհաշոռության բազմաթիվ ապա-
ցույցներ ունի մեր միջնադարյան զրականությունը: Այս
ըուլորից հետո կարելի յն սեել, վոր մեր զրականությունը
միայն միստիկական տիսուր մեղեգիներ, խրատական քա-
րովներ ու սեր և զրսեորել: Բոլորովին վոչ, Այդ կարծիքը
քաղաքացիության իրավունք և վայելում միայն հայ բուր-
ժուազիայի դասակարգային կառքին լծված զրչակների
շրջանում, այն մարդկանց շրջանում վորոնք «մաքուր ար-
վեստի» բուրժուական տեսությունն են քարոզում:

Անցյալի մեր զրականությունը առանձին ուժով խա-
րազանել և հոգեօրական դասին, պարսավել ու խայտառա-
կել և նրա աղահությունը և անկուշտ շահաղիտական նպա-
տակները:

Բայց վասն մէկ աւուր տաւնի, որ թէ զատիկ և ծնունդ
լինի նա խաչամբոյր իւր շատ ընկնի և տնաւրնեք և դադանից
(Ֆրիկի «Գանգառ»-ից)

Իրենց նողկալի արարքով զզվանք են առաջացրել
հոգեօրականները ժողովրդի մեջ, ընդ վորում ժողովուրդը
զայրույթով ու զղվանքով մտրակել և անկուշտ դասին, քա-
նի վոր «հայոց վարդապետքն ամէն դրամի համար քարո-
զեն»: Հոգեօրականների ագահությունն ու լրբությունն
այնտեղ և հասնում, վոր ծխերը բաժանելու համար «բիր ու
գաւազան կու վերցնեն և իրար մազ ու մօրուք կու փետեն»:

Ֆրիկը սարսափելի մի սարկազմով վոշչացնող հար-
ված և տալիս տգահ քահանաներին.

Զիսչակդ լան ես բացեր, զհարամն անհոգի կու տալու,
(Զեռ. 383)

«Ուղղադավան» ու «յերկյուղած» հայ հոգևորականի հմայքն այժմ հայ գեղջուկի աշքում ընկել ե, վորովհետեւ նրանք աշխարհական շահագործողներից յետ չեն մնում: Նրանք նույնպես հարստություն են դիզում, առևտուր են անում: Մինչև իսկ շատերը չեն խորշում բանուկ ճանապարհների վրա ավազակություն անելուց.

Հեծեալ ի ձի նիզակն ի ձեռին,
Վահանն ի յուս, սուր ընդ մրջին,
Այսպէս է կարդ կրօնաւորին
(Չես. 408)

Փակստոս Բյուզանդը դեռ շատ առաջ գարշանքով ե պատմել նյութապաշտ հոգևորականների մասին, վորոնք կալվածքներ ձեռք բերելու համար թագավոր ների առաջ միմոսություններ ելին անում: Ահա թե ինչ ե ասում նա.

Սոյն Յոհան Ապիսկոպոս որդի Փափնայ, յորժամ երթար առ թաւորն հայոց խաղակատակ լիներ սոցայ... ի չորք անկեալ տառ և ի ձեռաւ սողեր առաջի թագաւորացն...: Իսկ թագաւորքն զմուրհակս դիւղեաց գրեաւ, և կնքեալ գնելին ի վերայ ողինն Յոհաննու... և ի թագաւորացն հայոց ստացաւ իւր գեղս և ազւրակս

(Բիզանդ, 1912, Թիֆլիս, 6-րդ գլուխ)

Նոյն Յոհանը չեր խորշում նաև մարդ կողովտելուց: Սովորություն կար, վոր ասպետները կամ իշխանազունները դուրս ելին գալիս կողովտի և սահնկացած աղնվականների համար այդ համարվում եր վոչ պակաս սխրագործություն:

Անցյալի մեր գրականության շոշափած խոշոր թեմաներից մուկն ել աշխատավորական կենցազալին թեմատիկան եւ ժողովուրդն իր կյանքը, ապրուստի լեզանակր, սովորությունները, նիստ ու կացը մոցրել ե գրականության մեջ: Այդ ուղղությամբ միջնադարյան գրականությունից մենք հարուստ ժառանգություն ունենք, թեև բուրժուական գրականագեաններն աշխատում են բացասել ձից ե, աշխատավոր մարդու նկատմամբ իշխողների ար-



Աշխարհիկ մոտիվ (Վաղարշապատի Պետ. Զեռագրաւուն-Մատենյառանի հայկական հին
ձեռագրերից)

համարհական վերաբերմունքը թույլ չի տվել շահագործող դասակա գերի գրագետներին ռումանական» կենցաղը գրի առնելի բայց նա մնացել եւ բանահյուսության մեջ։ Դարերի ընթացքում այդ ստեղծագործություններն այնքան են փոխվել և հեռացել միջին դարերի արտահայտչական յիղանակից, ըմբոնողությունից ու գույներից, վոր անհնար եւ լինում վիովին վերականգնելու նրանց սկզբնական վոճան ու պատկերը։ Բայց հիմք չկա հրաժարվելուայն մտքից, թե միջին դարերի գրականության մեջ աշխատանքային մոտիվները են յեղել Ընդհակառակը, մի քանի հատ ու կտոր փաստեր, վորոնք գտնվում են ձեռագիր տաղարաններում, վկայում են այդ մոտիվի առկայության մասին և ուսումնասիրողին թևավորում են նոր փնտումներ կատարելու ցանկությամբ։ Անհրաժեշտ եմ համարում ներկայացնել նրանց մի քանի փշրանքները.

Քար եմ կրել յեռերուս, 1)
Փուշ եմ բերեր ձորերուս,
Պատ եմ շլնել այդուս,
Զուը եմ բերեր ձորերուս,
Քաղցը և բարեհամ աղբիւս...
Հնձան եմ շինել այդոյս,
Կարաս եմ դրել զինոյս,

1) Մընսկ այժմ միջնադարում զբաղվողներն այս տաղը վերագրել եւ Գրիգոր Ալիթամարցուն։ Վոչ մի ապացույց չկա, այդ մասին վոչ մի հիշատակություն չկա տաղարանուերում։ Իմ ձեռքի տակ կան այս տաղի տասերեք վարիանտները, վորոնք բավականաչափ տարբերվում են միմյանցից թե քառակիների քանակով և թե պատկերների նմանությամբ։ Բծախնդիր կերպով մի ֆարուլա յեւ սարթված, թե մի յեղիսկոպոս վորըցացել է իր ջահել կյանքի մոտալուս վախճանը, նրան նսաւեցներով պաղալից այդու, յերբ Գարենի հրեշտակապետը գալիս են նրա հոգին տանելուս Այդ ֆարուլան ստացածին է։ Ամենայն հավանականությամբ ժողովրդական այս ֆարուլան դըի յեն առել ու մշակել անհատ հեղինակներ (բայց վոչ Ալիթամարցին, վորի մասին վոչ մի փաստ չկա), իսկ հետագա բանասերներն, առանց փաստի, այդ համարել են Ալիթամարցու ստեղծագործությունը։

Տուն եմ օխնել մէջ այսոյս
Ոսկով նախշած չարտը խնոյս...

Այս առղերից պարզվում է, վոր աշխատավոր մարդը
այդի յե զցել, այսին շրջապատել ե փշե ու քարե ցանկով,
ծառեր ե անկել հնձան ե շինել, ջուր ե անցկացրել այգու
մեջ, տուն ու չարդախ ե շինել և այլն Այստեղ պարզ ե
սեկին ասված ե կոնկրետ աշխատանքի մասին։ Այդեպահն
հավատով ու հուսով սպասում ե այգեկութին, վորպեսզի
վայելի իր աշխատանքի արդյունքը, զվարճանա այգու հո-
վասուն ծառերի տակ.

Քաղեմ փունձ մի ծաղիկ,
Քընեմ մեջ այդոյս,
Ուրախանամ այս հոտոյս։
(Ճռ. 2594)

Մինչդեռ աշխատավորը յերազում եր խաղաղ ու
կուշտ կյանք։
Պիտեր տեսնել կյանք և լոյս...

Հանկարծ ստիպում են թողնել այդին և հեռանալ։
Դեռ չեմ տեսել կյանք և լոյս,
Կասեն թ' արեկ ել արդոյս,
Այս իմ նորաշէն տնկոյս։
(1113)

Ու հողի մարդը — աշխատանքի մարդը դոյլացած
ճշում ե.

Ի՞նչպէս ելնեմ այս այդոյս,
Այս իմ նորաշէն ալներոյս։
(1113)

Եթիթե սա աշխատանքի և նրա հետ կապված մարդու
հարաբերություն չե, Միթե աշխատավորի հուսի և հուսա-
խարության մրմունջներ չեն այս տողերը, կարելի՞ յե ա-
սել, վոր միջնադարն աշխատանքի յերգ շունի։ Վաչ, չի
կարելի։

Այգու հետ կապված շատ յերգեր կան, բայց այդ յեր-

գերի մի մասը հյուսված և միայն գինու և կերուխումի-
ռողելցությամբ

«Գովասանութիւն ալգոյն» վերնադրով մի տաղի մեջ
էարդում ենք.

Շինեցին, բոլորեցին,
Պայտառ ծաղկաւք զարդարեցին,
Ամէն պտղոք զայդին լոին,
Յանժամ զարդու դովքն ասացին
Լից ու առեր,
Իմ Խաչառուր,
Յանուշ զինուդ:

(Պաղ. Զեռ. 3595)

Այս քառյակն նույնպես աշխատանք և արտահայտում -

Յամանայինըն ժամանակ
Այդէպներն են լեր զիոնակ,
Յաջոյ ձեռին սուր և զանակ,
Յախոյ ձեռին կթոց քաղելակ:

Կամ

Հո որ ոսկի կոլ կու կուտեն,
Սամու մագիքն կու ձգեն,
Ինչ հողեղեն եզն ի լուծին,
Իր մոսեղեն լուծն ի վրպին:

Այս քառյակը վերցված և մի տաղից, վոր դժբախ-
տարար շատ աղավաղված տաղերից մեկն և և գժվար և
հաստատ պատկերացում ստանալ կատարվող աշխատանքի
մասին: Այնուամենա, նիվ մի բան պարզ և, վոր խոսվում
և կալի, լծկանի, լծասարքի մասին և այլն: Այնուհետեւ
կալի աշխատանքին զուգորդում և կենցաղալին մի ակ-
նարկ, ըստ վորի պետք և մակարերեւ, վոր աշխատանքի
պրոցեսին միանում և և սիրո արտահայտությունը:

Իր սամեստանն էր ոսկէ,
Սամուտ կապերն ապրըշըմէ,
Գիշն թուխը աղէկ ընդ կալապան,
Կարիճ տղեքանց¹⁾ մանող ան:

1) Բնագրում «աղեկանց»-ը զուցե «տղեկանց» և յեղեւ այս կար-
քի աղավաղումներ շատ կան:

Այստեղ հասկանալի յե դարձել մի բան, վոր կալապան մարդը «վոսկե» սամիներով և «արբշմե» սամու կապերով չեղներ և լծել, իսկ այդ մարդու կողքին կա մի թուլխ¹⁾, ալոր կտրիմ տղաներին ման և ածում:

Թուլխ, ամ գու տուր հատ մի կալեղ,
Թէ չէ առնում պագմ երեսեղ.
(Նույն տեղ)

Դիմում և սիրաբորբոք յերիտասարդն իր կալի կողքին աշխատող աղջկան: Իսկ աղջիկն հիշեցնում ե, վոր ինքն արդեն նշանդրված ե, վորովհետեւ

Հատ մի կալէս էր համբուրած,
Պոգմ, երեսէս էր մատնէհրած,
Թէ հատ մ' առնուս նա հատցնես,
Կամ պաքիկ մ, առնուս պակասեցնես:
(Նույն տեղը)

Կարծեմ այս մի քանի համեստ որինակներից կարելի յե հիմնական յեղակացություն հանել, վոր աշխատանքը նույնպես յերգված և միջին դարերում և մնում և տաղարան — ձեռագրերի մանրազնին ուսումնասիրությունը, վորպեսպի նրանք լույս աշխարհ բերվեն:

Աշխատանքի և աշխատավորի հետ կապված մյուս մոտիվը պանդխատական — «ղարիբության» յերգերն են Պանդխատությունը վորպես սոցիալական անհավասարության արդյունք, վորպես աշխատավորների աղքատացման մասսայական պրոցես, վորից առաջ գալիս և ընտանիքի քայլացումը, խիստ մեծ տեղ և գտել միջնադարյան տաղի մեջ:

Առեւրական կապիտալի զարգացումը առաջ և ընդումը բնատնտեսության քայլայում, ուստի և ֆեոդալական արտագրության յեղանակի փոփոխումը: Շուկայում դրամն ու ապրանքը շատանում են, վորի հետ բարձրանում

1) Թուլխ — գեղեցիկ աղջիկ, շատ տարածված արտահայտություն է միջին դարերի բանահյուսության մեջ:

Ա ֆեոդալների ու հոգևորականների գնողական պահանջը և
սա իր հերթին առաջ ե բերում շահագործման սաստկա-
ցում: Ֆեոդալն իր ճորտերից ու զբուղացիներից, ինչքան
կարելի յե, շատ հարկ ե քամում, այն ել դրամով: Դյու-
դացու թուլլ տնտեսությունը չի կարող դիմանալ տնտե-
սական այս ձնշումներին. զյուղացին վաճառքի յե հանում
իր փոքրիկ սեփականությունը կամ գրավ ե գնում վաշ-
խառուի մոտ ե ինքը դիմում ե ոտարության: Ահա այս
չարիքն ե, վոր միջնադարյան աշխատավորը յերգել ե
այնքան տխուր ու մելամաղձիկ:

Իմ հարն ու մայրն երկու ձեռքս կու բռնի,
Ոչ հանդիսատ հաց կերայ, ոչ քունս տանի,
Դիմացըս կանգներ է զէտ զհարամի:

Պարտատերը «հարամու» նման սեղմում ե աշխատա-
վորի կոկորդը, իսկ նա հազիվ բռնում ե ծնողների ձեռքը
և թողնում հեռանում ոտար յերկիր՝ ապրուստ վաստակե-
լու: Բայց այստեղ ել նա հանգիստ չե: Ամեն տեղ նույն
ձնշիչ մթնոլորտը, Զդիմանալով դառն զրկանքներին, խեղճը
սերձիմահ հիվանդ՝ վողբում ե իր վաղամեռ կյանքի կա-
րուտը.

Հիւանդ պառկեր եմ, գոնակս գոց է,
Մարմինը բռնկէք՝ կրակ ու բրո է,
Հոգոյս առնողը որ դա, ես իշպէ՞ս անեմ:

Դարիքը մեռնում ե ոտար յերկնքի տակ, հարազատ-
ներից հեռու, նրանց կարուը սրտում: Իսկ ընտանիքը
մնում ե նրան սպասելով, բայց նա չի դալիս: Նրա կինը
մի կերպ մեծացնում ե զավակներին: Մեծ վորդին արդեն
պատանի յե, մայրն ընտանիքի նեցուկին նրա մեջ ե տես-
նում, մշտական աղքատությունը նոր զոհ ե պահանջում,
և ահա դարիքության սեղանին զոհվածի վորդին բռնում ե
հոր ճանապարհը: Նա հայրենիքում թողել ե մորը, յեղ-
քայրներին ու օռւլուկներին և... սիրած աղջկան ու դառնո-
րեն դանդատվում ե.

Սրտիկս խոցոտեալ սիրով,
Տարտէր ունիմ շատ և ոլով,
Եւեալ ոտար երկիր ճորով,
Գնացի կարոտով, կարոտով՝ հասրէթով:

(386)

Խեղճ դարիբը դառնորեն գանգատվում ե, վոր կյանքն
ոտարության մեջ մաշել ե առանց արզյունքի, հիասթափ-
վել ե այն գեղեցիկ ցնորքից, թե մի որ կվերադառնա իբ-
ընտանիքի գիրկը, հարազատները կշրջապատեն իրեն,
ինքը կուրախանա, կուրախացնի նրանց, Բայց հասարա-
կական սանդուղքն ամեն տեղ նույն աստիճաններն ունի-
տղւատ դասակարգի համար, ամեն տեղ նրան դիմավո-
րում ե շահագործողի ծանր ձեռքը, վորովհետեւ

Ավագ զգարիբն առեմ եղկելի,
Ար օտար երկիր հանգիպե,
Ամէնքն են քան ըզզրախտ ծաղկալի,
Նա կրտրած, քան գճիւղ մի ծառի:

(395)

Յել միշտ պապակվում ե հայրենիք վերադառնալու-
ցանկությունից — այս ու կարոտով. վերջապես համոզվում
ե, վոր այդ անհնար ե, ոտարության մեջ նրան հենարան-
չկա, իսկ հայրենիքում նրան սպասում ե դաժան վաշխա-
ռուն ու ֆեոդալական հարկահանը և նա հուսահատված-
կանչում ե.

Իսկ և իսկ գարանեալ շրջիմ...

և հուսահատվելով, սրտի դառնությամբ ասում ե.


Ոտար երկիր այսրան տարի մնացի,
Զւեանս ընդունայն մաշեցի,
Միւտ անդադար զգուստը իմ յիշեմ.

(386)

Յել այսպես, բոլոր դարիբները մի տեսակ ճակատա-
գիր ունեն ոտարության մեջ, իսկ նրանց թիվը շատ ու
շատ ե: Վորքան արագ ե կատարվում գյուղացիների պառ-
պերիզացիան, այնքան շատ դարիբներ ե արտադրում



Առջուրնիկ մօտիլ / Վաղարշապատի Պետ Զնոպրատօն-Մատենադարանի հայկական ձեռն
ձեռագրերից)



գյուղը, մի հանդամանք, վորին այնքան ուժգին արձա-
գանքել ե գրականությունը։ Դարիջության մոտիվը գրա-
կանության մեջ մի ավելորդ անզամ ապացուցում է, վոր
միջնադարը լուր չի մնացել աշխատավորական մասսաների
մտորումների հանդեպ։

Մյուս թեմատիկան վերաբերում է աշխատավորական
կենցաղին, վորը բարեբախտաբար հարուսա թեմաներից
մեկն և ձեռագիր տաղարաններում։

Միակողմանի գտառողությունից խուսափելու համար,
պետք ե հիշեմ, վոր ամենուրեք չե, վոր աշխատավորը
ոիշտ մաայլ ու վորալի վիճակի մեջ և լեզել ժողովրդա-
կան կենցաղի ուսումնասիրությունը մեղ բերում է այն
համոզման, վոր աշխատավոր մարդը գժրախտության կող-
քին ունեցել ե նաև իր ուրախությունը, տոնախմբությունը,
հարսանիքը, պարը, զարդարությունը և այլն, վորոնք լերգ-
մել են և անցել գրականության մեջ։ Անա մի քանի որի-
նակներ։

Պարում են յերիտասարդ աղջիկներն ու տղաները.
Տեղանքն որորում ե ջահնելներին, և աղջկա կուրծքը պա-
րերգի նյութ ե դառնում։

Թէ վար ցածացել
Աղոր երես, այ աղոր երես,
Ծիծն երես, ել,
Օխ իմ պարոն էյնէկ
Ու կորիճն զայն տեսել:

Ապա խմբերգի մեջ դիալոգի հարց ու պատասխան
ելինուա. մի զվարթ յերգով աղջիկներն ասում են.

Կարիճ, զի՞նչ տեսար,
Աղոր երես, այ աղոր երես,
Որ ընկար թալցար,
Օխ իմ պարոն էյնէկ,
Ու հնձկուն եղար։

Իսկ յերիտասարդ տղաների խումբը ակնարկելով ջա-
նել աղջկա կուրծքը, զովուա և նըան հազար ու մեկ մակը-

դիրներով և սեր խնդրում աղջկների խմբից։ Վերջինները
տալիս են իրենց համաձայնությունը։

Հարսս քեզ հարիկ,
Աղոր երես, այ աղոր երես,
Մարս քեզի զռքանչ,
Օր իմ պարոն էյնէկ,
Ու ախարս քեզ աներձագ։

Դժբախտաբար կենցաղային այս մոտիվի լերգերն ա-
ռայժմ միայն մեկ տաղարանում եմ կարողացել հայտնա-
բերել, վորոնք այն աստիճանի աղավաղված են, վոր չա-
փաղանց մեծ դժվարությամբ հնարավոր ե մի քանի քառ-
յակ վերականգնել։ Բայց այս ավերված քառյակներն ել
կարողացել են ժողովրդական ոիթմիկայի կող ու շացնող
գեղեցկությամբ պատկերների թարմությունը պահել։

Այստեղ մենք ունենք նաև ժողովրդական մանիներ,
անհատական սիրային զեղումներ։

Ես ի քովս նահցա,
Թուիս մալ ի քուն կար...
Վար կեցա ես զնս պադի,
Նայ պտզն անուշ էր... .

Դարձյալ հարց ու պատասխան, սիրային զեղումներ,
կենցաղ։

Թո՛ւիս, ամ ինչ ես կորուսեր,
Գտուս ի ման դաս... .

—Կորուսի աւդս անկճես,
Մատնիս մատիցէս... .


—Երի առնում քեզ ի ձիուս,
Զովս ի ման դամ... .

—Եւ վախեմ մոլորցնես,
Զուապս հանել տաս... և այլն

Սիրային մրմունջներով ժողովրդական ստիլը խիստ
տարբերվում ե անհատական ստեղծագործություններից։
Առաջել ես 13—14-րդ դարերի սեր յերգող վանականների
սիրամոլությունից, վորոնց սեղ ծառացել և աշխարհիկ



Ձեխարժիկ մտիվ (Վաղարշապահի Պետ. Ձեռագրատուն-Մատենադարանի հայկական հին
ձեռագրերից)



մարդու կաշկանդված սերը և վեր և ածվել տռփանք։ Այնուհետեւ առատորեն մենք ունենք հարսանիքի յերգեր, վորոնք ըստ սովորության վորոշ պրոցեսի յեն յենթարկվել և շարադրվել բազմաթիվ քառյակներով, յեռատողերով կամ հնդատողերով։ Հարսանիքի յերգերի մեջ գովեստի առարկան նորահարսն ու փեսան են, վ. ըոնք ի՞րև որվահերոսներ «թագուհի» և «թագավոր» են հորջորջվում։ Նրանց շրջապատում են «մակառներն»¹⁾ ու յերիտասարդ աղջիկները. յերգում են և հարս ու փեսային գովեստներ են շոայլում։

Թշն վարդըն ընտրով,
Թէն վարդըն ընտրով,
Ետո նրան հատը համարով,
Աստուած շնորհաւոր
Թագաւորին վաճառն,
Որ արաւ թադաւոր։

Կամ

Թէ տան'ւ ընտանի,
Թէ տան'ւ ընտանի
Տունկն պատրաստէր,
Որ երթար աճէր,
Աստուած շնորհաւոր.. և ալին։
(395)

Ժողովրդական սովորություններն առատորեն սփյուշած են անցյալի դրականության մեջ, մարդը հարսանիք և անում, — գովում և, տուն և շինում — յերգում, գովում և, ձի յեն նստում, — նույնպես տօնախմբությունը, մասսայական խաղը, սպօրաը մի խոսքով մարդու առորյան, ինչ վոր արտադրում և, բոլորը յերգվել են. Բարերախտաբար բոլոր նմուշները կան և յեղած փշրանքների վրա հնարավոր և վերականգնել միջնադարյան կոնցաղի պատմությունը։ Ահա մի յերգ նորակառուց տան մասին։

1) Մակառ — աղապ տղաները, վորոնք հարսանիքի ընթացքում ուղեկցում են փեսային։

Եկեք ուսաւը նոր խնդանք...
Որ ամէն շինանք աւրինած...
Այս տունս աստուծով շինած...
Իւր ամէն զորոքն աւրանած...
Քարերն էր քաշանց բերած,—
Գերանն եր նշու բերած,—
Տաշած էր տաշիդ հանած... և այլն.

(395)

Հապտ ժողովրդական լերգիծանքը, վճրքան սարա-
գասաթիկ ե.

Էջն որ ախոռն կատ մնայ,
Տերն ոսնայ, զարի չի տայ,
Մտոքն շատ գարի կուտէ,
Վասն այնորիկ շատ կու զոտ:

Նոյնպէս և դու, Խաչիկ էրեց,
Դիմ կերակըսց թուքըդ կուլ տառ,
Երազիտ շատ բաներ տեսնուս,
Երբ որ զարդունա՝ իրք մի չփայ:

(395)

Այնուհետև մեծ տեղ և բռնել մեռելների վրա հյուս-
ված վողբը, վորը նույնպես մարդկային առորյայի սովո-
րություններից մեկն եւ Հարազատից աւ ջատվելու մրմուջն
առանձին թափով և արտահայտել ժողովրդական տաղը:
Մեռելներին վորոյ սգահանդեսով ճանապարհ գնելը վաղե-
մի սովորություն ե, վոր գալիս և անհիշելի ժամանակինե-
րից և վեր և ածվել զրամատիկ ձեի, վորին ուղեկցում և
տիտուր յերգը: Առանձնապես հուզիչ և մանուկների վրա
հյուսված վզբը, վորի մեջ մայրը թվում և սիրած զավա-
կի դոմքի, աչքերի, դուրեկան ձայնի, և այլն բարեմաս-
նությունների կորուստը: Մոր զգայուն սիրտն իր զավա-
կին զարդարում և քնքույշ խոսքերով:

Պակաս տեղ չի զրավում բայզոքը բռն ի ամուսնության
դեմ, իրեկ կնոջ զարթոնքը՝ միջնադարյան մոայլ, կնոջ ու-
սերին ուժով փաթաթված տղամարդու իշխանության դեմ:

Այստեղ ել, ինչպես գրական մյուս ձեռքի մեջ, սուրբ բողոք կա տնտեսական անհավասարությամբ. պայմանավորված հասարակական յերեսութների դեմ: Փողն ու ինչքը մարդուն հզոր են դարձնում, հարուստն ամեն ինչ նվաճում ե փողով – տնտեսական հզորությամբ: Նա նվաճում և նաև կնոջ սերը: Տիրող դասակարգն իր վայելքների համար աղքատին զրկում ե սիրելու հնարավորությունից, մի բանից, Վարի մեջ ամեն վոք ազատ ե. բայց կինը վաճառքի առարկա է, հարուստն իսկույն չանթում ե իր ուսածաղջիկը, իսկ խեղճ սիրահարը, վոր հարուստ չե, թող մորժոքա.

Երեկ ցորեկով, բարով,
Տանէին մէկ եալ մի ձորով,
Զնայ ձորով չէ՝ տարած,
Կամ թափած է զինքն զբամով:

Ապա յերդիչը բողոքում ե դրամով ձեռք բերված սիրով դեմ: Գոված սերը պոռնկություն ե, սերը փոխադրձ պետք ե լինի:

Սէրն որ դրամով լինի,
Զինքն երել պիտի կրակով.
Սէրն խնձօրով պիտի,
Ու դրամ-դրամ շեքերով:

(2394)

Բոնի ամուսնության դեմ ծառացած բոկոքը, նաև որինական ճանապարհով սիրած կնոջը տիրանալու անկարողությունը սեր ե ածկում առեանգման, ուստի տղամարդը, յեթե տնտեսական միջոցներից զուրկ ե դժվար ե իրեն համար կին ձեռք բերելը, նա զիմում ե առեանգությանը.

Կամ առ, կամ խաբուլ արայ,
Կամ զըրէ զանձո քեզ ծառայ,
Թէ չէ՝ առ ու փախ կանեմ,
Աչքդ լաց անձըդ երերայ:

(2394)

Ահա այն սարսափելի սովորությունը, վոր յեղել ե-
 շատ ժողովուրդների մեջ, մանավանդ արև զյան, վ՞ր կինը
 բուռոր իրավունքներից զուրկ լինելով՝ անձամբ չի կարո-
 ղացել իո ճակատագիրը տնորինել իր կենցաղի հարցույ։
 Այդ պատճառով ել այս թեման թարմ ե մնացել մինչե-
 իսկ կապիտալիստական հասարակարգում, ուր կնոջ առե-
 վանդումը կատարվում ե «քաղաքակիրթ» ձեռովով։ Կինն
 իբրև ապրանք՝ բուրժուական աշխարհում ցուցափեղի ա-



Զարդանիւր հայկական նին ձեռագրերից (Պետ. կերպարվեսի՞թանօսան)

ուարկա յե դարձել, վորի հետեանքով պոռնկությունը կա-
 պիտալիստական հասարակության պալարն ե դարձել և ծանր
 հետեանքներ ե բերում աշխատավորներին։


Ահա մոտավորապես այն ժամանակաշրջանը, յերբ
 հանգես յեկավ Ֆրիկն իր քնարով։ 10—14-րդ դարի աշշ-
 խարհիկ գրականությունը մի ընդհանուր միջավայր ե,
 վորի հետ շաղկապվում ե Ֆրիկի քաղաքական պոեզիան։
 Այն ամբողջ թափը, վորով հանգես ե յեկել միջնադարյան-
 տաղանդավոր պոետ — քաղաքացին, պայմանավորված ե

դասակարգային ուժեղ սախումներով, իսկ այդ բախում-ներն արձագանք են գտել գեղարվեստական գրականության մեջ, ստեղծել նաև կուլտուրական այն միջավայրը՝ վորը կարող ել ծնել և պետք ե ծներ միջին դարերի այբխոչոր դեմոկրատ քաղաքացուն — պոետին՝ Ֆրիկին:

Ա. Պ. Ա. Ա. Լ. Ա. Հ Ա. Վ

ՖՐԻԿԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանուր ակնարկ



Մեղ հասած մեր անցյալի (հին և միջնադարյան) գրական ժառանգությունը թե իր բովանդակությամբ, և թե ձեռվ մեծ մասամբ կրոնական և Նույնիսկ այն գրական հուշարձաններում, վորոնց նյութը վերցված ե աշխարհիկ կյանքից, նկատելի յե կղերական դաղափարախոսության ուժեղ կնիքը, Յեկ այդ բնական ու հասկանալի յե, վորովհետեւ տիրապետող գասակարգը յեղել ե կղերա-ֆեոդալական դասակարգը և հիշյալ գրականության ներկայացուցիչներն ու զեկավարներն ել մեզանում դարեր շարունակ յեղել են կրոնավորները։ Կղերական իդեոլոգիան և նաև մեր հին պատմագրության տոն տվողը։ Մեղ հասած գրավոր պատմական հուշարձանները (մատենագրական աղբյուրներ) հաճախ կամ զեկավարի չոր արձանագրություններ են, կամ դանաղան կրոնական անձանց և յեկեղեցական առաջնորդների կյանքի ու գործունեյության նկարագրություններ։

Հայոց հին և միջնադարյան գրականության տիրող ընդհանուր մուայլ յերկնակամարի վրա իրեն աստղեր փայլում են ժողովրդական ստեղծագործության («Գողթան յերգեր», «Հայրեններ») և միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության մեջ հասած հատ ու կենտ նմուշներն ու պատառիկները։ Վերջիններս պերճախոս ապացույցներ են այն բանի, վոր տիրող պաշտոնական գրականությունից ըոլորովին անկախ և նրան գեմընթաց մեզանում գոյություն

եռունեցել իրական կյանքից բղխող և այդ կյանքը բանաստեղծորեն վերաբարպող մի առողջ ու թարմ գրական հոսանք: Դրա արտահայտություններն անկասկած յեղել են բոլոր դարերում. բայց մեր հին գուսանական վերգերի նման գրի չառնվելով վոչնչացել են, և միայն 13-րդ դարից մասմբ սկսել են գրի առնվելով ժողովրդական յերգերի և միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության նյութն են կազմել՝ բնությունը, սերը, աշխարհիկ վայելքների ու հոճույքների գովքը, գինու և ուրախության, սգո և պանդըխտության և այլ մոտիվները, վորոնցով միջնադարյան հայ աշխարհիկ բանաստեղծների ու ժողովրդական յերգիչների աշխարհայեցողությունը հակազրվել և տիրող կրոնական—ավատական աշխարհայեցողությանը:

Պարզ ու անպահույն են յեղել այդ յերգերը, բայց շատ ավելի լիարյուն, կենդանի ու առողջ, քան ձգնավորական վոգով և միստիցիզմով հագեցված կղերակտն բանաստեղծությունները:

Սակայն մեր հին և միջնադարյան գրականությունը մի մեծ բաց ունի—սոցիալ-դասակարգային մոտիվների սակավաթիվ լինելն և այդ: Հիմնվելով գրա վրա, հաչ բուրժուական-ազգայնական գրականագետներն ու բանաստեղծները աշխատել են ապացուցել, վոր մեր ժողովրդին առհասարակ հատուկ չի յեղել դասակարգային պայքարը: Նրանք վոչ միայն նեղություն չեն կրել այս ուղղությամբ նորանոր նյութեր գտնելու, այլ ջանացել են կամ լուսավոր մատնել յեղածը, և կամ դասակարգային պայքարի գոյություն ունեցող սակավաթիվ գրական արտահայտություններին տալ ազգային հակամարտության գունավորում:

Ճիշտ ե, մեր հին և միջնադարյան գրականության մեջ համեմատաբար ինչ են պահպանված վերոհիշյալ մոտիվները և այդ այն պատճառով, վոր այդ գրականության տոն տվողը յեղել և յեկեղեցին, վորը պարսավել և հալածել և աշխարհիկ գրականությունը, բայց այդ մոտիվները բարեբախտաբար կան: Բավական և հիշատակել

Վարդան Այգեկցու և Միսիթար Գոշի անուններով մեղ հասած միջնադարան մեր առակները, վորոնց մեջ բավական ցայտուն զծագրված ե 12-րդ դարի Հայաստանի սոցիալ-տնտեսական, դասակարգային և աշխատանքային-արտադրական կյանքի ու ներքին կենցաղի պատկերը՝ այն կորիվը, ճիշտ և անկազմակերպ ու հախուռն, վոր մեր են Հայաստանի շահագործվող աշխատավոր դասակարգերը՝ շինականն ու ռամիկը, ընդդեմ հայ և ոտար աշխարհիկ ու հոգեոր աղնվականության:

Անհրաժեշտ ե միայն վեր հանել յիղածը, ուսումնասիրել, մեկնաբանել այն և պրապտումներ կատարել նոր նյութեր հայտնաբերելու համար:

* * *

Մեր միջնադարի աշխարհիկ գրականության գեմոկրատական առողջ հոսանքի մեջ պատվավոր տեղ ունեն 13-րդ դարի հայ նշանավոր բանաստեղծ Թրիկի ստեղծագործությունները:

* * *

Կյանքը, Շատ թերի և կցկտուր են Թրիկի մասին մեր ունեցած կենսագրական տեղեկությունները։ Համաձայն նորագույն բանասիրական հետազոտությունների, վորոնք չնշին բացառությամբ հիմնված են նրա տաղերի մեջ՝ չնշին բացառությամբ հիմնված են նրա տաղերի մեջ՝ ցըլված հատ ու կենտ կենսագրական, պատմական և ժամանակագրական ակնարկների վրա, այդ տեղեկությունները հանդիսում են հետևյալին¹):

1) Անհրաժեշտ ենք համարում հիշելու, վոր Թրիկի կենսագրության մասին ստորև շարադրված մեր համառոտ ակնարկն ել խիստ թերի յի և կարոտ հետագա լրացման, ստուգման ու ճշտման:

1. «Ֆրիկ» յեղել ե բանաստեղծի գրական կամ կեղծ անունը: Նրա իսկական անունը տակավին անհայտ ե: Բանասերներից վոմանք ֆրիկին նույնացրել են մեր միջնադարյան տաղերգուներից՝ Հովհաննես Յերզնկացու, Խաչատրու Կեչառեցու, Հովհասափ Սերաստացու հետ:

Վերջերս Վաղպատի ձեռագրատան № 3595 տաղարանում, Պատմության և Գրականության ինստիտուտի գիտաշխատակից Յե. Թորոսյանի հայտնաբերած ֆրիկի «Գանգատ»-ի մի նոր վարիանտը յերկու տարբեր տեղերում ունի Բարսեղ անվան հիշատակությունը: Դրանցից՝

ա) գտնվում ե տաղի վերնագրի մեջ. Բարսեղի ումենին մարդոյ կոիւ եղեալ ընդ այ կու մեղադրէ և յետոյ... (այնուհետև, ինչպես վկայում ե արտագրողը, թերթը պատրված ե և նախաղասությունը մնում ե թերի), վորդրված ե սեով յեղծված կարմրի վրա, և

բ) տաղի քառյակներից մեկում.

«Եւ այս աղդերո՞ որ եմք յերկը,
Նույն այս կերպիւս եմք ի զիճի.
Ամ ցոյց թէ սրմէ պիտանի,
Որ Բարսեղս այլ գիտուն լինի»...

Սակայն, ինչպես վերոհիշյալ յենթադրությունները (ֆրիկի նույնացումը միջնադարյան հայ մի քանի բանաստեղծների հետ), նույնպես և վերջին հայտնագործությունը (ֆրիկի տաղի մեջ Բարսեղ անվան հիշատակությունը) չեն լուծում ֆրիկի իսկական անվան խնդիրը: Առաջինները բավական համոզիչ փաստերով արդեն հերքել են մեր բանասերները (Գ. Հովսեփյան և այլն), իսկ վերջինը համարում ենք ոտար գրչի (արտագրողի) գործ, վորը հաստատում ե նաև վերնագրի յեղծված կարմրի վրա սեով գրված լինելու հանգամանքը:

2. Ֆրիկը հավանորեն ծնվել ե 13-րդ դարի սկզբներին (1210—1220 թվականներ):

3. Նա յեղել ե վոմն Թագվոշի վորդի և Դոդոնայի

Հեղբորորդի: Այդ մասին և խոսում Ալիշանի արխիվում
յեղած անտարձակ մի յերգարանից քաղված հետեւալ վկայու-
թյունը. «Ուտանաւոր ասացեալ է Ֆրիկն որդի Թագլուշին
եղբորորդի Դոդոնայի ի վերայ իւր մեղացն, ի վանս բա-
նասիրաց», վոր մեջ ե բերում Հ. Արսեն Ղազիկյանը 1909
թվին Վենետիկում հրատարակած իր «Հայկական նոր մա-
տենագիտություն և Հանրագիտարան Հայ կյանքի» խորա-
գիրը կրող աշխատության մեջ (պլակ Ա., եջ 63):

4. Ֆրիկը ունեցել ե վորդի, վորին գրավ ե դրել
թաթարների մոտ իր պարտքերի դիմաց, և հետագայում
կորցրել ե նրա հետքը.

«Ուսկայ ի պարտուց յահուն
կու գողամ զինչ ուռին ի քամուն,
Դըրի զիմ որդին դըրաւ,
Ուսափ ձուղապ զընալուն,
Մըթե թագաւորն երկնից՝
Նա բերէ զիմ որդին ի տուն...»
(Ա. 81)

5. Ֆրիկը բավական յերկար ապրել ե Կիլիկիայի
պատմական Հարդա (արժմյան Հաջըն) քաղաքում, վորի
մասին իմանում ենք նրա «Յաղագս փոշիմանութեան»
տաղից.

«Շատ մի դատեցայ, եղբայրք,
ի Հարդայ ես շատ մի տարի»...
(Ա. 86)

6. Ֆրիկը մեր միջնադարյան մյուս բանաստեղծներից
շատերի նման կրոնավոր չի յեղել, վոչ ել ապրել ու դաս-
տիրակիլել ե վանքերում կամ ստացել վանական կրթու-
թյուն, այլ յեղել ե աշխարհական, վոր հաստատվում ե նրա՝
«Իմ սիրտ վատին մի լսեր» տաղի «Ալ տաղ վասն բարեգոր-
ծության մարդկան ի Ֆրիկէ աշխարհականէ ասացեալ»
(Ա. 76) և «Է՛, անորեն և ամբարիշտ»... տաղի՝ «Ֆրիկ
ճարտար աշխարհականէ» (ՊԳԹ. № 383) վերնագրով:

7. Ֆրիկը յեղել ե գրական բավական բարձր ճաշակի

տեր («Ճարտար աշխարհական»), կըթված, զարդացած ու շրջահայաց մարդ, Դրա պերճախոս ապացույցներն են նրա տաղերը¹⁾:

8. Մեռել ե հավանորեն 13-րդ դարի վերջերին կամ ամենաուշը 14-րդ դարի առաջին քառորդում:

Ֆրիկի մահվան, ինչպես և ծնդյան մոտավոր թվականները գնում ենք ըստ նրա կենսագիրներից մեկի, վորը գրում ե. «Աչքի առաջ ունենալով, վոր Ֆրիկը ծանոթ ե 1291 թվականին տեղի ունեցած դեպքերին, փորձենք վորոշել. Եթե ինքը՝ յերդիչը յերբ պետք և ծնդյան և վախճանված լինի—Մի ալոտ ակնարկ այդ մասին գտնում ենք նույն «Ընդգեմ ֆալաքին» տաղի մեջ: Ֆալաքից զանազան ինդիրների ուժում խնդրելով, նրան

Ֆալաքն պացիուն կուտա, —
«Մի հաջեր, անդեւ հայելոր,
Քանի ես ֆալաք եմ լե՛լ,
Չեմ տեսե քան ըզքեղ մոլոր...»

(Խէ. 46—47)

Ուրեմն «Ֆալաքը» գրելու ժամանակ Ֆրիկն աբդեն «Հալեոր» եր:

Մի այլպիսի ակնարկ կա և «Վասն Արդուն դանին և Բուղային» տաղի մեջ, ուր յերդիչը գանդատվում ե.

ԵԱԼՈՒՐԻ անցաւ հետ Մասասիս,
Եզրը չի կայ, հուն չերեկն.
Ցաւս երկարեց, և յոսկը անցաւ,
Այլ չի մնաց համբերութիւն»:

1) Սխալ ե Ֆրիկին բոլորովին անուս և անկիրթ համարելը, ինչպես անում ե «Խորհրդային Հայաստան» որաթերթում [ապրիլի 8, № 80 (49—80)] վերջերս լույս տեսած «Ֆրիկ» վերնագրով հողվածի անանուն հեղինակը:

Ֆրիկի տաղերին ծանոթ մարդը այլ (հակառակ) յեզրակացության և հանդում նրա կըթության և զարգացման աստիճանի մասին:

Այդ տաղը գրված պիտի լինի վոչ կանուխ քան 1291 թ. և հավանորեն նույն այն թվականին, յերբ յուր տարի՝ քի մասին արած ակնարկից տեղեկանում ենք, վոր նորա «աւուրքն անցած» են, զոր ավելի զորեղ արտահայտություն ե քան «հակնոր» յեզրը, Ուրեմն «Թալաք»-ը տաղն ավելի առաջ ե գրված, քան «Արդունի և Բուղալի» տաղը: Արդ յենթադրելով, վոր «Թալաք»-ն ավելի վաղ արտադրություն ե քան Արդունի տաղը, վորովհետև Արդունի տաղի մեջ նա ավելի լավատես ե, քան «Թալաքի» մեջ, վորի հոռետեսության ակնարկները թերես 1286 թ. առաջ յեզրած պատմական անցքերն են ունեցել ի նկատի, ուր և հիշատակվում ե Սահիպա դիվանի մահը: մյուս կողմից՝ «աւուրքս անցան» յեզրը իրբե տարիք ընդունելով 75—80 տարեկան հասակի մի ակնարկ. ուրեմն պետք ե յենթադրել, վոր Ֆրիկը ծնված պիտի լինի 1210—20 թվականներին և հավանորեն վախճանված ժդ դարի վերջերը և կամ ամենաուշը ժդ դարի առաջին տասնամյակում, յենթադրելով, վոր «հակնոր» և «աւուրքն անցած» Ֆրիկը կարող եր «սիրող վաներուն» լինելուց հետո ավելի բարեբաստիկ որեր ունեցած և 10—20 տարի ևս ապրած լինել¹):

Ավելի թերի և հակասական են Ֆրիկի սոցիալական դրության ու դասակարգային պատկանելության մասին յեղած նյութերը:

Այսպես, մի տեղ մտաբերելով իր յերբեմնի վոչ աղքատ կենցաղը, նա դառն հեգնանքով ասում է.

«Քանի ժողովես զու գանձ,
Ու զումաշ և շատ մի բարիք,
Երբ վայելեցեր աշխարհո՛
Ի լըման զու շատ մի տարիք»..

(Ա. 80)

Մեղադրում ե ինքն իրեն իր կատարած անտնտես ու անժուժկալ ծախսերի համար.

1) Տես «Մոռացված մի հայ յերգիչ», «Արարատ», 1918 թ., ապրիլ — դեկտ., եջ 193—194:

«Զաւըլն կեր ու խում արիր,
և հագար ի բուրզ, խաս մուշտակ»...

(Ա. 80)

Մի այլ տեղ խոսելով իր ներկա քայքայված տնտեսության ու ընտանիքի մասին՝ Ֆրիկը գլուխ է.

«Զի գիտեմ թուր մեռանիմ,
Ոչ զոք ունիմ որ թաղէ զիս,
Ո՞չ ունիմ տեղ հանդըստեան,
Ո՞չ խընդացել եմ յիմ որդիս.
Ո՞չ եղբայր, և վոչ զոք ունիմ,
Որ աւաղէ, ափսոսայ զիս,
Ո՞չ ծըլիմ, ոչ բուսանիմ,
Զերդ զաղընձած սերժ եմ գերիս...»

(Ա. 80)

կամ՝

Ո՞չ տուն, ո՞չ տեղ ունիմ,
Կու խոցիմ ի յանհաւատնուն,
Կասեն՝ թէ խըմէ գինի,
Որ լինիս զու մի պահ ի քուն,
Ուսկայ ի պարտուց յահուն,
Կու զողամ զինչ ուռն ի քամուն»...

(Ա. 81)

Մեղ հավանական ե թվում, վոր Ֆրիկը լիդել ե ժողովրդի ծոցից զուրս յեկած և համեմատաբար չքավոր մի ժարդ (քաղաքացի թե գյուղացի՝ դժվար ե ասել¹⁾): Յեթե նա յերբեն քիչ թե շատ բարեկեցիկ կւանք ե վայելել, ապա այդ շատ կարճ ե տեսել: Այդ են հաստատում թե «Գանգատ»-ի և թե նրա մի քանի այլ բանաստեղծությունների»

1) Անմտություն ե Ֆրիկին ի սկզբանե՝ «բառի բուն իմաստով ընչափուրկ ու խօստանդված մարդ» համարելը, ինչպես այդ անում ե «Խորհրդային Հայաստան»-ի վերոհիշյալ հոդվածի հեղինակը, Ֆրիկի, «Թէ ունի (ունելի. Ա. Դ.) ճորտ ու ծառայք... արտահայտությունը կամայականորեն դարձնելով «Թէ նա ունի (ով վոր ունի. Ա. Դ.) ճորտ ու ծառայք»...

դասակարգային շեշտուն մոտիվներով հագեցած մի շարք տողերը, Հարուստ մարզը, թեկուզ և յերբեմնի հարուստը, չեր կարող այնքան հանդուգն և այնպես խիզախորեն ծառանալ տիրող սոցիալական անհավասարությունների դեմ և անել մի շարք համարձակ ընդհանրացումներ վերջիններիս հետեանքների առթիվ, ինչպես այդ անում ե ֆրիկը:

Այդ ե հաստատում նաև այն արհամարհական վերաբերմունքն ու թերագնահաառումը, վոր գոյություն ե ունեցել ֆրիկի դեմ պաշտոնական գրականության վորոշ ներկայացուցիչների կողմից, և վորոնց նա դառը հեգնանքի յեյնթարկել իր հետեյալ վորանավորով.

«Ֆրիկն ի՞նչ հող և կամ մոխիր,
Որ հանց գոհար բան շարէ նա.
Ո՞չ ժառայել վարդապետի,
Ո՞չ կարդացել աւրիկ մի նա,
Ո՞չ ի հաւըէ առեր միրաթ,
Այլ յաստուծոյ տուած նորա.
Նա հ՞ըս կարէ հանց բան ասել,
Որ ով կարդայ աւրհնէ ըզնա»:

(Ա. 78)

Վերջապես այդ ե հաստատում այն սերը, վոր վայելել ե ֆրիկը ժողովրդական մասսաների կողմից և վորի ապացույցն ե նրա տաղերի առկայությունը մեր միջնադարյան հին և նոր բազմաթիվ տաղարաններում:

Իր կյանքով ու ճակատազրով Ֆրիկը բավական մոտ և միջնադարյան հայնշանավոր առակազիր Վարդան Աղեկցուն: Ֆրիկի նման վերջինս ել հալածանքի յեյնթարկվել հարուստ քաղաքացիների և վաճառականների դեմ գրած իր բանաստեղծական քարոզների պատճառով: Ֆրիկի նման վերջինս ել ստիպված և յեղել լքել իր հայրենի լերկիրը (Կիլիկիայի

Քլուք քաղաքը), և յերկար տարիներ վարել զրկանքներով լի աստանդական կյանք:

Ստեղծագործությունները՝ Առանձին մխիթարական վիճակում չի յեղել անցյալում Ֆրիկի թողած գրական ժառանգության հայտաբերման գործը: Մինչև որս չունենք միջնադարյան այդ նշանավոր դեմոկրատ բանաստեղծի տաղերի քիչ թե շատ ամփոփ ժողովածուն: Նրա ստեղծագործություններին ծանոթանալու համար ստիւլած ենք դիմել զանազան հին ու նոր պարբերականների ու առանձին հավաքածուների, վորոնց եջերում, այստեղ ու այնտեղ, ցըված են գրանք:

Ֆրիկի անունով մեզ հասած առաջին տպագիր տաղը՝ «Է՞ր չես երթար ի միտ ի վար. է», գերէվար մարդ ու տխմար», «Տաղ Ֆրիկանէ ասացեալ» խորագրով, լուս ե տեսել 1513 թ. Վենետիկում վոմն «Մեղապարտ Յակոբ»-ի հրատարակած մի «Տաղարան»-ում: Յերկրորդը՝ «Մարդոյն երր Դալէն ու բուրջն ի Փալաքըն չէ ըզորդած», «Վասն Թալեհի և Պոճի, ի Ֆրիկ երգչէ» վերնագրով՝ մի քանի դար անց, Յերուսաղեմում հրատարակվող «Սիոն» լրագրի 1876 թ. № 1, հջ 13—14-ում: Այնուհետև, 26 տարի անց, Թիֆլիսում հրատարակվում ե Արիստակես վրդ. Տեվականցի «Հայերք» վերնագրով ժողովածուն (1882 թ., Թիֆլիս), վորի մեջ, ի շարս միջնադարյան և ժողովրդական մի շարք այլ յերգերի, լուս են տեսնում նաև Ֆրիկի հետեւյալ տաղերը.

1. «Կուղես որ աղիզ կենաս, որ ամեն մարդ գքեզ սիրէ...» տպանց վերնագրի, «Յաղակս հողուոյ և սիրոյ ոտանաւոր է բանս» տաղաշարքում, եջ 32—39.

2. «Միրտ իմ, ընդէր ես խռովիր» «Տաղ Ֆրիկան ասացեալ» վերնագրով, եջ 137—141.

3. «Մստված արդար և յիբաւի և ողորմած լամենա - նի», «Գանգատ, ի Ֆրիկ վըրքոյն» վերնագրով, եջ 143—150:

4. «Ով կու սիրէ կուժ ու կթխայ», «Ֆրիկան ասացեալ զալս տաղս» վերնագրով, եջ 186:

Տեվականցից հետո (1885 թ.) կ. Պոլսում հրատարակ-

վող «Յերկրագունդ» ամսագիրն իր ապրել ամսվա համարում (եջ 173—175) զետեղում և Ֆրիկի վերոհիշյալ «Կուղես որ ազիզ կենաս» տաղի մի նոր վարիանտը, «Տաղ հոգւոյ շահ» վերնագրով, առանց հեղինակի անվան հիշատակության:

Տասնեւմեկ տարի անց, (1896 թ. Թիֆլիս) կ. կոստանյանի «Նոր ժողովածում միջնադարյան Հայոց տաղերի և վոտանավորների» վերնագրով գրքի Գ. պրակում լույս են տեսնում Ֆրիկի տաղերից յերկուսը.

1. «Կուղես որ ազիզ կենաս», եջ 35—40, վորի մասին խմբագրով տալիս և հետևալ ծանոթությունը. «Այս տաղն որինակցինք 1617 թվին Կաֆալում գրված Տաղարանից. տաղի վերնագիրն եր—«Ֆրիկան ասացեալ զայս տաղ». ուրիմն յերգիչն և Ֆրիկ: Նույն տաղը կար մոտավորապես 1662-ին գրված փոքրիկ յերգարանում, վորի մեջ նորա վերնագիրն եր—«Տաղ վասն Աղամայ», առանց հիշելու հեղինակի անունը»:

2. «Յիշէ զբան Աւետարանին», «Վասն ողորմութեան» վերնագրով եջ 40—43, վորի վերջում կա հետևյալ ծանոթությունը. «Այս տաղն որինակցից 1617 թվին գրված Տաղարանից. վերնագիրն և «Ֆրիկ ի նոյն բանն ասացեալ վասն ողորմութուեան»:

Այնուհետև բավական յերկար ժամանակ Ֆրիկից վոչինչ չի հրատարակվում, մինչև վոր 1912 թվին Փարիզում հրատարակված «Հայ եջեր» վերնագրով միջնադարյան բանաստեղծությունների ժողովածվում, բաղմաթիվ հայտնի ու անհայտ յերգիչների ու տաղասացների ստեղծագործությունների շարքում լույս են տեսնում նաև Ֆրիկի հետևալ տաղերը.

1. «Յիշէ զբան Աւետարանին, իմաստուն կուսանքն ի նըման»..., «Ֆրիկի ասացեալ վասն ողորմութեան» վերնագրով, եջ 35—37:

2. «Ե՛ր չես երթար ի միտ ի վայր, Ե՛յ, գերեվար

մարդ ու տիսմար»..., «Տաղ Թրիկէ ասացեալ ի վերայ մեծատանն և աղքատ Ղաղարին» վերնագրով, եջ 38:

3. «Է՞յ, ֆալաք, երբ ծոխս, մարդուն զորն ի բուն-փորես նորա հոր», «Թրիկ, ընդդեմ ֆալաքին» վերնագրով, եջ 39—40:

4. «Յորժամ որ մահըն մոտենայ մարդոյն...», «Թրի-կի տաղն» վերնագրով, 41—42:

5. «Այս է համասփիւռ ծաղիկն, որ թափէ զմարդն ի մահու...», «Թրիկ» վերնագրով, եջ 42:

6. Քան զքեղ ծանոթ չունիմ, այս դըրանես հւր հեռանամ «Աղոթք» վերնագրով, եջ 42—43:

«Հայ եջերում» հրատարակված Գրիկյան վերոհիշյալ ապաշարքից տարիներ անց, տարիեր տեղերում, լույս են տեսնում բանաստեղծի հետեւյալ տաղերը.

1. «Փառք աստուծոյ միշտ կենդանոյն...», «Վասն Արդուն ղանին և Բուղային» վերնագրով («Արարատ» ամսագիր, 1918 թ. ապրիլ-գեկտեմբեր, եջ 171—177):

2. «Թրիկի երգն է»..., «Հին յերգ մը» վերնագրով («Կոչնակ», 1922 թ. եջ 1262—64, 1294—96):

3. «Փառք Աստուծոյ միշտ կենդանոյն»..., «Նորին Ֆրկանն ասացեալ վասն Արդուն ղանին և Բուղային» վերնագրով («Հայաստանի Կոչնակ», 1923 թ., եջ 264—65):

Ահա Թրիկի անունը կրող կամ նրան վերագրված, մեզ հայտնի, այն բոլոր տաղերն ու պատառիկները, վոր տպագըր-ված են մեր պարբերականներում ու առանձին ժողովա-ծուներում 1513 թվից մինչեւ մեր որերը:

Անցյալում պակաս անմիտթար վիճակում չի յեղեւ և Թրիկի գրական ժառանգության հետազոտության—ու-սումնասիրության գործը:

Բացի մի քանի աննշան հոդվածներից ու կցկառւ-դիտողություններից, վորոնք ցըված են մեր միջնադար-յան պոեղիային նվիրված ժողովածուների առաջաբաննե-րում, զանազան պարբերականներում և այլն, վորոնք զուրկ են վորենե արժեքից, հայ բուրժուական-նացոնալիս-106

տական գրականագիտությունը ֆրիկի մասին վոչինչ ար-
ժեքալոր գործ չի տվել: Դեռ ավելին. նա ամեն կերպ աշ-
խատել և նրան անտեսել, վորի հետեանքով մինչև որս ել
մենք չունենք ֆրիկի գրական հասարակական դիմանկարի-
քիչ թե շատ լրիվ ու ճիշտ պատկերը: Տակավին չեն լու-
սաբանված նրա պոեզիայի բովանդակության ու արվես-
տի առանձնահատկություններն ու արժանիքները:

Ֆրիկի տաղերը հայ բուրժուական հսթետների ու
բանասերների կողմից, չնչին բացառությամբ, վորակվել
են իրքն «բարոյախոսական խրատներ», «միստիկական
զգացմանց արտահայտություններ», «խրատական բանաս-
տեղծություններ», «անհավասար, հաճախ վոչ գերծ կրկ-
նություններե, տկարություններե և տափակություններե»,
«ուամիկ, պարզուկ» վոճով զրված և այլն: Կամ արժեքա-
վորվել են հետեւյալ վոչինչ չասող ընդհանուր բառերով ու
նախադասություններով... «բարակ զգացմանց և ուղիղ
մտաց տեր, նաև ճարտար տաղաչափ պես-պես վանկերով,
նորանուն քերթող մը», «յուր լավ մասերուն մեջ՝ ինք-
նուրույն համ մը և գույն մը ունեցող» և այլն և այլն:

Հայ աղգայնական գրականագետներն ու բանասեր-
ները անհրաժեշտ վերլուծան չեն յինթարկել ֆրիկի ստեղ-
ծագործությունների բովանդակությունը, չեն տվել, և չելին
ել կարող տալ, վերջիններիս արժանի գիտական գնահա-
տականը: Նրանք ջանացել են ֆրիկին գուրս բերել վորպես
մի բարոյախոս հեղինակ, նրա գանգատն ու բողոքը՝ տի-
րող սոցիալական անարդարությունների ու աստծու գեմ-
համարել ֆրիկի անհատական—ընտանեկան ձախորդու-
թյունների արտահայտություն: Ավելին: Նրանք աշխատել
են ազգային գունավորում տալ ֆրիկի գանգատին:

Սյապես ըստ պատկերի յուրում մեկնաբանելով մեր
հանավոր դեմոկրատ բանաստեղին, նրանցից մեկը ֆրի-
կի գերը տեսնում և այն բանում, վոր՝ «Մինչդեռ Հայոց
աշխարհի հին գրողների մեծագույն մասը... հայերի գլխին
հիկած գժբախտությունները վերագրում են սբանց մեղ-

քերին, Ֆրիկն ըմբռստանում և նույնիսկ աստծու դեմ և
գանգատվում ե նրա անտարբերության համար գեպի հայ
ժողովուրդը, վորին նա սպանիչներին և կողոպտիչներին և
մատնել միանգամայն...»:

Մեկ ուրիշը ֆրիկի մեջ տեսնում ե ազգային գիտակ-
ցության մի յերգչի «...Հանձին ֆրիկի, - գրում ե նա, -
ունենք ազգային գիտակցություն և վոդի զարթեցնող
մի քնքույշ յերգիչ, համոզված քարոզիչ, վոր մի ընական
հակընթաց շարժում եր լուր շուրջը կատարվածի...»: Մի
յերրորդը նրան համարում է հայ ժողովրդի «անորեններուն
ձեռքին կրած տառապանքներու» յերգիչ և այն և այլն:

Ֆրիկի ստեղծագործությունների դեմոկրատական
եյության նպատակադրյալ սքողումը, նրա բողոք-գան-
գատին ազգային բնույթ տալու վերոհիշյալ ակնհայտ հա-
կակիտական, նացոնալիստական տեսդենցները բղխում են
հայ ազգայնական գրականագետների ու բանասերների
բուրժուա-նացոնալիստական հայացքներից և վոչ մի ընդ-
հանուր բան չունեն միջնազարյան հայ նշանավոր դեմոկ-
րատ բանաստեղծի ստեղծագործություններում սփռված
քաղաքացիական և սոցիալ-դասակարգային առողջ մոտիվ-
ների հետ: Խորհրդապահն զրականագիտությունն ե, վոր պետք
ե վեր հանի ֆրիկի, միջնազարյան մեր այդ դեմոկրատ բա-
նաստեղծի, իրական արժանիքները և վորոշի նրա խոշորա-
գույն դերը մեր գրականության պատմության մեջ:

Ֆրիկի թողած գրական ժառանգությունը, վոր հասել
և մեղ բանաստեղծի անունով կամ վերագրվել նրան, իր
բովանդակությամբ (թեմաթիկայով) միորինակումիատարր
չե: Նրա ստեղծագործության հիմնական ուղղություն հան-
դիսացող հաղաքացիական դեմոկրատական բանաստեղծություն-
ների («Գանգատ», «Ընդդեմ ֆալաքին» և այլն) կողքին
կան նաև խրատական — բարոյակոսական և կրօնական
բովանդակությամբ տաղեր («Յիշէ զրան աւետարանին...»),

«Է՞ր չես երթար ի միտ ի վայր...» և այլն), վորոնք դարձաւ ըստ ելության հակառակվում են կղերա-ֆեռդալական դասակարգերի ներկայացուցիչների ստեղծագործություններին:

Այսպես, որինակ, նա յերգել ե Ալեքսիանոսի ճգնաժողի՝ դեպի «անցավորական փառքն ու պատիվը» ունեցած արհամարհանքն ու «խոնարհ և ուղիղ» սիրով, բայց յուրորինակ շեշտով։

«Այլ տե՛ս զկամաւոր աղքատն՝ Ալեքսան մարդն աստուծական,

Թէ ո՞նց անարգեց ըզմառքն եւ զպատիւն անցաւորական,

Խոնարհ և ուղիղ սրտիւն՝ համբերել վշտացն ամենայն,

Անանց թագավորութեան նա հասավ ընդ սուրբս ամենայն...»։

(ՀԵ. 36)

Ամեն մի գանձից բարձր ե համարել բարությունն ու իմաստությունը, վոչ թե սովորական կրօնական բարոյական խրատի իմաստով, այլ իր այդ խրատի մեջ դարձյալ սոցիալական շեշտ մտցնելով։

«Այլ քան զգանձ և ըստակ բարութիւն է խիստ պիտեւան.

Բարեաց եղի՛ր դու պատճառ՝ սատանայքն լամօթ լինենան.

Կովոյ ժամն երկաթն է լաւ քան զոսկի ակունք պատուական,

Աշխահիս իմաստութիւնն է բարի, քան զգանձ անցական»։

(ՀԵ. 36)

Յերգել ե աղքատասիրությունը, պահքն ու աղոթքը, բայց վոչ յերբեք այն իդեալականացնելու նպատակով։

«Աղքատասիրութիւնն ու պահք եւ աղօթն ընկերք են իրաց,

Սիրե՛ զատ իրեք բանիկի, որ փրկիս ի մեծ տանջանց...»։

(ՀԵ. 37)

Խրատել ե այս աշխարհի ունայնության մասին, սակայն ասանց կրօնական միստիցիզմի։

Լըտէ՛ զիրատ ի Ֆըրիկէս, իսկի այս կեանքը շահ չի կայ,

Ֆըրիկըն հանց բան է խոսել, որ ամենայն միտք իմանա,

Ճշմարիս է բանս ու կայ, որ այս կենցաղս մարդն խաբ կու տա»։

(ՀԵ. 41)

Հատկանշական ենակ այն, վոր Ֆրիկի խրատական —
բարոլախոսական այն տաղերը, վորոնք հասցեյազրված են
հարուստներին, նրանց փառքի ստրկական գովելը չեն, այլ
այդ մեծատունների հարստության ու արտաքին փայլին
խելքը, հանձարն ու գործը հակադրելու տաղեր.

«Մի՛ գովեր ըգկերա մարդոյն՝
Կամ ըզգանձ անթիւ անցական,
Այլ զիսելքն և զիմաստութիւն
Եւ զհանձարն և զգործքն ի լուսան...»
(ՀԵ. 37)

Հեղինակը կոչ ե անում՝ հարուստներին՝ վորումու-
թյուն տալու աղքատներին և դրանով գեթ մտսամբ լվա-
նալու իրենց «մեղաց ալտը».

«Չարթի՛ք, անհոգ մի՛ կենաք,
Զձեր մեղաց աղտըն լըւաց՛ք,
Աղքատաց ողորմութիւն՝
'ւայնով զձեր մեղքըն քաւեցէ՛ք»:

(ՀԵ. 33)


Ալլապես, ինչքան ել նրանք շռայլ կյանք վարեն և
ամբարտավանանան, մինույն ե՛ վերջը մեռնելու լին «հընց-
կուն հիմար».

«Քանց զմեծապունն այլ ով հարուստ,
Անչափ ունէր ակն ու ճոհար,
Հապայ հազնէր ցեղք ի ցեղաց,
Փողպատն ամէն մարդարտաշար,
Ի կերիխում շուրջ կուգար՝
'ւի անդենէ չունէր խապար,
Ամբարտաւան կեցաւ զամէն,
Ցետոյ մեռաւ հընցկուն լիմար»:

(ՀԵ. 37)

Նորից ենք շեշտում՝ Ֆրիկի խրատական բարոյախո-
սական և կրօնական տաղերը հիմնականում տարբերվում

Հարիվի գանգատ-ի առաջին եղի (Պետ. գրական բանգարանի մեռազիր սաղարաններից, № 40)



են թե նրան նախորդող կրոնական—դիդակտիկական բառաստեղծություններից և թե նարեկացու ճշնավորական և Շնորհալու հայրենասիրական վողբերգություններից։ Մինչդեռ առաջինները ծնված եյին քրիստոնեական Ծեսերին հանդիսավորություն տալու համար, իսկ յերկրորդները արտահայտություն եյին 10-րդ դարում Հայաստանում զարգացած քրիստոնեական միստիցիդմի (Նարեկացի) և 12-րդ դարում սորոգ քաղաքական պայմանների (սելջուկների տիրապետություն) հետեանքով առաջ յեկած ազգահավաքան և համազգային հայրենասիրության գաղափարի, Ֆրիկի վերոհիշյալ տաղերը նրա դասակարգային անհատուկան—ընտանեկան անհրապուր կյանքի և շրջապատի սոցիալական ու ազգային անհավասար ու անարդար դրության արտահայտություններն են։

Բացի այդ, ինչպես ասել ենք արդեն, նրա այդ բարոյախոսական գրվածքները հիմնականը չեն բանաստեղծի դեմքը պարզելու համար։ Հետզհետե յետ մղելով իրենից տիրող կրօնական գաղափարախոսության աղղեցությունը, Ֆրիկը սկսում է յերգել քաղաքացիական—գեմոկրատական մոտիվներ։ Այս նոր մոտիվներով ե, զոր Ֆրիկը պետք ե մտնի և մտել ե արդեն մեր գրականության պատմության մեջ, վորպես նրա վաղ շրջանի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։

Ֆրիկի ստեղծագործության մեջ առաջ յեկած վերոհիշյալ բեկման ցայտուն արտահայտություններն են՝ նրա հոչակավոր «Գանգատը», «Ընդդեմ Փալաքին» և մի քանի այլ տաղեր։ Վերջիններիս մեջ Ֆրիկը խոսում է մարդկային կյանքում գոյություն ունեցող՝

1. Բնական, ազգային և կրօնական տարրերությունների,

2. Սոցիալ-գասակարգային անհավասարությունների,

3. Իր ապրած գարաշրջանում (13-րդ դար) Հայաստանում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական տեղաշարժերի (թաթարների արշավանքը), և

4. իր անձնական—ընտանեկան կյանքի ու կինցազի մասին:

Այսպես, հայտնի «Գանգատ»-ում վեճի բռնվելով ասած ծու հետ, Ֆրիկն ամենից առաջ կասկածի տակ և առնում աստվածաշունչը և իր զարմանքն և հայտնում աստծուն՝ գոյություն ունեցող այլազան ազգերի և վերջիններիս մեջ յեղած տարբերությունների առթիվ.

«... Գեմ մեկ Աղամ էր ի գրախալին
Եւ մէկն Եւա իւր նմանըն
Եւ մէկ բարբառ համազգալին,
Մընչև կերեալ պտղոյ ծառին:

Արդ այս բանս է հիանալի,
Եւ առաւել զարմանալի.
Թէ մեկ Աղամ և յեղայէ:
Ո՞քան ազգեր ծնան յերկը:

Մէկն է Ճրհուտ Երբայեցի,
Եւ մին Արաք, Հադարացի,
Մէկն է Աղան Արեսրդի,
Մընն է Թողիչ և Ափխազի...»

(Տ. 243)

Արձանագրում և այդ հողի վրա նըանց մեջ յեղած անհամաձայնությունն ու հակամարտությունը.

«Ուրիշ լեզու ամէն մէկի
Որ մէկ-մէկի ոչ համանի...»
(Տ. 243)

Այնուհետև նա տալիս և մարդկային կյանքի տեսողության, ժառանգներ ունենալու, մարդկանց արտաքինի և այլն մեջ յեղած անհավասարությունների պատկերը.

«Որ մէկն ապրի տասն տարի
Մէկն հարիւր այլ ավելի.

Մէկն ոչ ի տասն հասանի,
երկու-երեք ամսոց մեռնի:

(Տ. 145)

Մէկինն մէկ որդի լինի,
Անօր անժամ նա մեռանի.
Մէկն այլ ունի շատ մի որդի,
Անտի ոչ մազ մի չպակասի:

(Տ. 146)

Մէկն կերպիւ է տնազելի,
է ախա երես և աղտեղի.
Մէկի ձեռուին է զերդ գողի,
Որ ոչ կարէ կուրդել ջորի...

(Տ. 149)

Նույն «Գանգատ»-ի մեջ Ֆըիկը նկարագրում է նաև
հասարակական կյանքում գոյություն ունեցող անհավա-
սարությունները՝ ՚իունեղ պատկերներով և ցայտուն հակա-
զրություններով նա տալիս է շահագործող և շահագործ-
վող կամ հարուստ ու աղքատ գասակարգերի նյութական—
վնչքալին գոյավիճակների մեջ յեղած խոշոր տարբերու-
թյունները: Առաջինների՝ շուայլ ու ճոխ, և յերկըորդների՝
խեղճ ու անհրապույր կյանքը.

«Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի և ջորի,
Մէկին ոչ ուշ մէ ոչ մաքի:

Մէկին հազար գեկան ոսկի,
Մէկին ոչ փող մի պըղնձի.
Մէկին հազար հատ մարգարտի,
Մէկին ոչ ուշնիկ մի տպիկի:

Մէկին հազար դասնով մաքի,
Մէկին ոչ մէկ չորքոտանի:

Մէկին բեհեզ և ծիլանի,
Մէկին բրդէ շալ մի չանկնի»

Մէկին ատաս և ղրմղի,
Մէկին շապիկ մի հասնի.
Մէկին հարամըն յաջողի,
Մէկին հալան կորուի»..

(Տ. 146—147)

Ընչքային այս անհավասարության հողի վրա մարդիկ բաժանվել են՝ «բախտավորների» և «անբախտների»։ Եթերկու տարրեր և իրար հակառիք բնեոների։ Դրանցից առաջինը՝ չնայած իր բոլոր արատներին, իր ունեցվածքը՝ շնորհիվ մեծարվում և հարգանք է վայելում.

«Եւ բաղդաւորն¹⁾ մեծարի,
Բազում հարկիք նա բնդունի,
Ու թէ կոյր է միականի,
Կամ խեղ և ծուռ միոտանի»

(Տ. 148).

Եւ դինչ այնու առնա լինի,
Ամենակին այն չերեի.
Այլ յամենից նա մեծարի,
Եւ իւր հարկիքն շատ լինի»

(Տ. 149)

Յերկրորդը՝ հարստություն և բախտ չունեցողների խումբը, դժբախտ ե, և դատապարտված կուլ գնալու հեղեղին։

«Եւ նա տոլվաթ և բաղդ չունի,
Եւ ոչ շնորհ խոսից կալզի»

1) Բախտավոր բառին համանիշ, Վաղպատի Զեռադբատուն-Մատենադարանի № 3595 ձեռագրում (Տաղարան) նորեքս գտնված Ֆրիկի «Գանդատշ-ի մի նոր վարիանտում, գործածվում է «տաւլաթուոր» բառը (հջ 106. ա—109. ա.)»

Նա թող հեղեղն զնա տանի,
Քարէ կարկուտն այլ տւելի:

(Տ. 145)

«Բախտավորների» շարքում, աշխարհիկ ֆեռալների՝
«պապանց պարոնորդիների» կողքին, Թրիկը չի մոռանում
գասելու և հողեռը շահագործողներին ևս.

«Բաղդաւորն գայ ճռճկտալի,
Գայ և նստի յաւագ բարձի.
Լուծն ի փորին ի շուրջ անցնի,
Եւ ալէլու մի չի դիպնի:

Բայց վասն մէկ աւուր տանի,
Ար թէ զատիկ այլ տոն լինի,
Նա խաչնամբոյը իւրն շատ անկնի,
Մորթ և էրի և գագանի»

(Տ. 148)

Հարուստները ցոփության մեջ են թաղված, աղքատները՝
պարտքերիւ Այդպիսի մի աղքատ ել ինքը Թրիկն եւ
նա գրում եւ.

«Ե՛, Թրիկ, հանց դիտացիր, թէ ծերության չդլորիս.

Այլ չունիս փող մի պահած, որ զքեզ թաղեն, երբ մեռանիս...»:
(Կ. 105)

Թրիկի ստեղծագործություններում արձագանք են
գտել նրա առլրած դարաշրջանի հասարակական-քաղաքա-
կան տեղազարժերը, սեփական և ոտարազգի հարստանա-
րիչների կողմից հրահրվող աղդամիջյան կոիվներն ու կո-
տորածները և վերջիններիս հետևանքով աշխատավոր, ըն-
չազուրկ ժողովրդի անլուր տառապանքները.

«Ճիմիկ դժմբեց բաներս,
Որ թաթարն եղավ թագավոր.
Զըկեց ամենայն աշխարհն
Ու զզողերն եղիք մեծաւոր»

(Ա. 190)

Դրում և Ֆրիկը, խոսելով՝ թաթար իշխանավորների՝
տիրապետության հետևանքով իր և իր նման ընչաղուրկ
մարդկանց առանց այն ել ծանր զիճակի եւ ավելի ծան-
րացման մասին:

«Ո՞չ տուն, ոչ տեղ ունիմ,
Կու խոցիմ ի յանհաւտատնուն,
Կասեն թէ խըմէ՝ գինի,
Որ լինիս զու մի պահ ի քուն,
Ուսկայ ի պարտուց յահուն,
Կու զողամ զինչ ուռն ի քամուն,
Դըրի զիմ որդին զըրափ
Ուստի ճուղապ զընալուն...»

(Ա. 81)

Պատմում և նա թաթար իշխանավորների ու հարկա-
հանների շահագործման ու թալանի հետևանքով իր քայ-
քայված ընտանիքի ու տնտեսության մտսին:

Վերոհիշյալ տողերի մեջ տրված և վոչ միայն Ֆրիկի,
այլև թաթար հարկահանների ճիրաններում թփրտացող՝
նրա նման հազարավորների վողջ ծանր կացությունը,
վորի իրական ու ճշմարտապատում պատկերը գտնում ենք
ժամանակակից մատենապիր կիրակոս Գանձակեցու մոտ:

«...աշխարհագիր առնել յամենայն ազգու—զրում և Գան-
ձակեցին թաթար հարկահանների մասին,—որ ընդ ձեռամբ նո-
ցա էին հնագանդիւն, սկսեալ ի տասնամենից և ի վեր ընդ զրով
համարոյ արկանել զատենենին, բայ ի կանանց, եւ յաւենեցունց
պահանջել խստագույն հարկու, աւելի քան դկար մարդուն, և
ոկտան չքաւորիլ, և սեղէին աւանալ կտուանօք և չարչարանօք և
գելոցոր... և որ ոչ կարէր հատուցանել զակին՝ զմանկուն նոցա
առնուին ընդ պարուց...»¹⁾).


Քիչ անց՝ նույն պատմիչը զրում և.

1) Տես Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս,
1909 թ., էջ 348—349:

← →

|| Արդոց որ ու աշխան և պատճեն
ի թաղանքն չ ըղործում
Ա շառ և մ մ մ թի զանց
Ա ըղործ աշխան է ծովուն
Է անին ծուռն ու ըղործն և գիշեն
և աղջին է հարթին կուզած
և առ ծաղկնաբն մարդուն
որ մօքն միտի բաժանած
Օ ուղարքն էր որ ուսուց ան
և կա գոյ ամենն շախալուն
Բայց զայտ իմանալ պիտի
Ա տուլին որ պողոտն է ընկած
Շի պողոտն ու տուլին աղջի
շայ թի է հրամացած

Մերիկի „Վասն սարիկին և պրին” տաղի առաջին եղը (Պետ. Գրական Թանգարանի ձեռագիր
սաղարաններից № 408)



«...բազում տառապանս հասուցանէին ամենայն աշխարհաց
հարկադանցութեամբ...» յեվ ի դրանս մահու հասուցին զամենայն
ազգս Այլ և միւս ընդ այլ բազումն, որ եղաւ յԱրդունէն (թա-
թար հարկանան. Ա. Դ.) մալի և փախչուրի, եդու հրաման ի
Նալուէն (մի այլ թաթար հարկանան. Ա. Դ.) պահանջման հար-
կի, դոր թաղարն ատեն, յամենայն զլիոյ՝ որ մտեալ էր ի գիրն
արքունի, պահանջէին հարիւր լիտր ցորեան, յիսուն լիտր զինի,
երկու լիտր բըինձ և ծնծատ, երեք տոպրակ, երկու չուան,
մի սպիտակ, մի նետ, մի նալ՝ թող զայլ կաշառան և քսան ա-
նասոյն. մի անվան և քսան ստակ. եւ ոյր ոչ զոյր, զուտերս յեվ
զիսերան անունինընդ պահանջմանն, յեվ այսպես նեղացաւ և
տառապեցաւ ամենայն երկիր»¹⁾.

Վերոհիշյալ հարկերից ազատ եյին միայն յեկեղեցա-
կանները, «Յեկեղեցականացն ոչինչ առին հարկս», «զի
չունէին հրաման ի Դանէն», — գրում և Գանձակեցին
(Եջ 350):

Ֆրիկն իրրե աշխարհական, ընականարար պիտի յեն-
թարկվեր հարկատվության: Ալդ մասին են հենց խոսում
նրա վերեռում բերված «պարտուց յահուն կու դողամ զինչ
ուռն ի քամուն» և «դրի զիմ որդին զըրաւ ուստի ճուղապ
գնալուն» ակնարկները:

Սակայն ֆրիկը չի բավականանում իր շրջապատի
սոցիալ-դասակարգային անհավասարությունների և սե-
փական ու ոտարազգի շահագործողների ու ըռնակալների
հարստահարությունների լոկ կրավորական նկարագրով:
Նա լրջորեն մտածում ե այդ յերեռութներն առաջացնող
պատճառների մասին.

«Մտոքս այս բաններիս վրա շատ ատեն ի հոգս և՛ անկած,
կառեմ, թէ է՞ր եղեր, որ զամենն հաւասար չէ զուզած»..
(Ա. 85)

Այն մասին թե ինչից ե, վոր՝

1) Տես կրթական Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս,
1909 թ., Եջ 359—360:

«Զայն մարդն՝ որ տալեհ չունի՝
Համեն տեղոք է նա ծեծած...»,
«Եյն մարդն որ տալեհ ունի՝
Հումմեքէ իսկ չե ծեծած...»:
(Տղա. № 1112)

Կամ ինչու այդ «տալեհ» ունեցող մարդը՝

«Զորն կա պարագ նստած
Շատ բարիք մոտ և կուտակած...».
(Նույն տեղում)

Իսկ չունեցողը զրկված և ամեն ինչից և չունի «Ո՛չ
ուշ մի և ոչ մաքի»:

Թրիկը բողոքում և աստծուն՝ որա կողմից կարգված
իշխանների ազան ու անկուշտ վարքի համար՝ համեմա-
տելով նրանց գալլերի հետ.

«Իշխան գըրեթ ևս մէկ-մէկի,
Քան զքանասար զայլ ոչխարի.
Կամ զերդ վազան նապաստակի,
Կամ քաջ առիւծ ամեն հոտի»:
(Տ. 147)

Հանդիմանության խոսքեր և ուղղում նրան՝ այն
տարրեր ու համբերատար վերաբերմունքի համար, վոր
ունի նա իր և իր նմանների դասն վիճակի հանդեպ.

«Ոքան տանջեն զմեզ յաշխարհի
Եւ կեղեքն զկիանս մեր յայտնի,
Եւ զու ներես յամենայնի,
Ու անտես առնես զմեզ ի վըշտի»:
(Տ. 144)

Հեղնում և նրա «արդար և իրաւ» դատավորի համ-
բավը.


«... Եւ այս էր բան քո հրամանի,
Արդար իրաւ դատավորի...»:
(Տ. 145)

Թրիկը ծառանում և ճակատազրի դեմ, վոր տգես-
ներին ու վատերին մեծավոր ու հարուստ և վարձրել, իսկ
լավերին ու խելոքներին զրկել ամեն ինչից.

«Ե՞ր, չարիս, բզվատին տունն կու լեցնես ակով դու բոլոր,
Զաղէկն ի յերկիր ի վար վտարես, որ ժողվէ կտոր.
Զայն որ խողարած չվայլէ՝ կու զուզես ահեղ ձիաւոր,
Եւ զըղորդմարդկանց ըզտունն քակես առանց բահաւոր»...

(Հե. 35)

Վորը փոխանակ արդար դատաստան տեսնելու, ընկե-
րացել և «Ճոխն» և նենդություններ եւ գործում «ըղորդին»-
դեմ.



Ձերին, Յանապահութիւն առաջին եղ (Պետ. Աթոքարթեսի Թանգարանի ձեռագիր Տարբարամանից
Ն. 1112)

«Ե՞ր չես դու առներ բզրորդ դատաստան, այ ծուռ դատաւոր.
Յալաք, դու ծըռին ընկիր եւ ըղորդին ես խիստ նենդավոր...»

(Հե. 39)

Ֆրիկի համարձակությունն այստեղ և հասնում, վոր
նա «Ճոռու» և հայտարարում ճակատագրի տնօրին ֆալաքի
վողջ արարքը.

«Շուռու է զինչ որ դու կառնես՝
Ո՞վ լինի հաւան քեզ այդոր...»
(ՀԵ. 40)

Վորի համար ստանում և նըանից հետեյալ խիստ պահապասխանը.

«Թալաքըն պացիսուն կուտա՞մ մի հաջեր, անդես հալեռ,
Քանի փալաք եմ եղեր, չեմ տեսեր գըեզ մոլոր...»
(ՀԵ. 40)

Իր քննադատական վոգով և համարձակությամբ Ֆրիկը
քչերից մեկն և մեր հնագույն գրողներից, վոր միջնադար-
յան պայմաններում հանդընել ե խոսել ու բողոքել տիրող
կարգերի գեմ, իր շրջապատի՝ շահագործման, անհավասա-
րության և անարդարության վրա հենված կյանքը «գուր
ու խավար» հայտարարել.

«Այս կեանքըս գուռ է ու խավար,
Դու ի ձեռինըզ չահ չունիս...»
(ԿՀ. 106)

Ճիշտ և, նա ուղիներ չի նշում իր առաջ յեղած փա-
կուղուց դուրս գալու և վերջիներջո զղջում և իր ասած-
ների համար.

«Ես քեզ մեղայ երկնաւորի,
Տեսոն աստուծոյ ահեղ մնածի,
Քո դատաստանն է բիրաւի,
Նետթով կուտաս ամէն մէկի...»
(Տ. 150)

Սակայն այդ զղջումը վոչ այլ ինչ ե, բայց յեթե մի
տուրք տիրող կրոնական գաղափարախոսությանը։ Զեա-
կանորեն ընդունելով հանդերձ աստծու ու ճակատագրի
տնօրեն ֆալաքի գոյությունը, Ֆրիկն ըստ եյության խի-
զախ և համարձակ քննադատության և լենթարկում վեր-
ջիններիս, դրանով արդեն շահագործվողների մեջ դար-

թեցնելով ըմբոստության վոգի տիրողների դեմ։ Այդ համբակի ստեղծագործության հիմնական տեսդենցը և մեծագույն արժանիքը, վորի համար բանվոր դասակարգը մեծարում է նրան։

Ինչպես տեսանք, բուրժուական գիտնականները խոսելով Ֆրիկի արվեստի մասին, այն անարժեք են համարել, վորը դարձյալ բնավ իրականության չի համապատասխանում։ Իրենց բովանդակությամբ սկզբունքորեն տարրերվելովնախորդ կրոնական բանաստեղծություններից, Ֆրիկի տաղերը տարրերվում են վերջիններից նաև իրեն արտահայտչական միջոցներով։ Մինչեռ առաջինները իրենց նյութի միորինակության շնորհիվ արտահայտության ձևերով ել մեծ մասամբ սիակերպ եյին, Ֆրիկի տաղերն իրենց թեմատիկայի բազմազանության համեմատ ունեն և արտահայտչական միջոցների բազմազանություն։

Ֆրիկի բանաստեղծություններն առանձնապես աչքի յեն ընկնում իրենց ճկուն ու ներդաշնակ տաղաչափական կառուցվածքով և գունեղ ու կենդանի գեղարվեստական պատկերներով ու համեմատություննիրով։

Մինչև 12-րդ դարի կեսերը մեր հոգևոր լերգերը հորինվում եյին յամբական պարզունյա ազատ վոտանավորներով ու ազատ ոիթմական արձակով, — բոլորն ել անպիսի չափեր, վորոնք, աշխարհիկ յերգերի չափերի հետ համեմատած՝ պակաս ոիթմիկ եյին, և վորոնցով հորինված բանաստեղծությունները ներսես Շնորհալին կոչում են բան անչափական, հակադրությամբ աշխարհիկ քնարերգության, վոր ե բան չափեալ։

Ֆրիկը, Նարեկացուց և Շնորհալուց հետո, Կոստանդին Յերգնկացու հետ սկսում է առատորեն գործածել մեր ու շաբանիկ բանաստեղծության մեջ 7—11-րդ դարերում ըն-

լունված ոիթմիկ-յերաժշտական վոտանավորները, ինչպես
են՝ 4—4, 5—5, «Հայրենի կարգը» 2—3—2 —3—2—3 և
այլն (տես՝ «Գանգատ», «Ընդդեմ Փալաքին» և այլն),
կազմելով միաժամանակ լիահնչուն և բազմազան հանգեր։
Իրենց գունագեղությամբ և բազմազանությամբ Ֆրի-
կի գործածած տաղաչափական ձևերից յետ չեն մնում նաև
նրա բանաստեղծական պատկերներն ու համեմատություն-
ները։

Այսպես, մի տեղ խոսելով գեղի ուսումն ու զիտու-
թյունն ունեցած իր մեծ ձգտման մասին, Ֆրիկն իրեն
համեմատում է փոքր վորսի չհավանող բաղելի հետ։

«Այն բազային եմ նմանի,
Որ փոքր որսի ոչ հաւանի...»

(Ա. 79)

Մի այլ տեղ նա իր մեջ հուբհատող ուսման անշեջ
հուրը նմանեցնում է ջրի մեջ թռվուցող արևի շողին։

«Զի՞նչ արեւու շողն ի ջրին՝
Ի մեջ հոգոյո կու թռվեսայ...»

(Ա. 80)

Մի շարք այլ տեղերում նա իրեն համեմատում է
ծերու և աճելու հնարավորություններից զբկված աղնձած
սերմի։

«Ոչ ծլիմ, ոչ բուսանիմ,
Զերդ զաղընձած սերմ եմ դերիս...»

(Ա. 80)

Քամուց դողացող ուսենու՝

«Ուսկայ ի պարաւց յահուն՝
Կու դողամ զի՞նչ ուսն ի քամուն...»

(Ա. 81)

ալիքների վրա ծփացող նավի հետ.

«...Յաւել թէ զինի խմեմ,
նայ, ծըփամ զինչ նաւն ի յալուն...»

(Ա. 82)

Սակայն Ֆրիկի համեմատությունների առարկան միայն իր անձը չե, այլ նաև արտաքին աշխարհից վերցրած մի շաբաթ իրեր, չերեսութներ, գաղափարներ։

Այսպես, խոսելով մարդու և նրա գայթակղության պատճառ հինգ զգայարանների մասին, Ֆրիկն առաջինին (մարդուն) նմանեցնում ե անառիկ պարիսպներով շրջափակված քաղաքի, իսկ վերջինները (հինգ զգայարանները) այդ քաղաքի դռներին։

«Մարդն է ի քաղաք նման, պարսպած է անառական։

Հինգ դուռն է այս քաղաքին, զգայարանք որ բաց կու լինան...»:

(ՀԵ. 36)

Մի այլ տեղ նա, խոսելով անգետ և գիտուն մարդկանց մասին, առաջիններին համեմատում ե ամեն ինչ այլող վոչնչացնող կրակի, իսկ չերկրորդներին՝ ամեն ինչ դալարեցնող ջրի հետ։

«Անգետն է ի հուր նման,
Ուր ընկնի զտեղն կու էրէ,
Գիտուն է ի ջուր նման,
Ուր երթայ կանաչ բոււեր է...»:

(Ծ. 38)

Բանաստեղծական գեղեցիկ նմանություններով ու համեմատություններով ե համեմված նաև Ֆրիկի հետեյալ քառակը, վորի մեջ հեղինակն ակնարկում ե իրեն հուզող հոգեկան զգացմունքների մասին։

«Անկար ի հոգոց ծովը, երբ որ զայս բաներս ցիշեցի,
Զիմ աչուերը չափ արի, ու ծովու ջուրըն չափեցի,

Զիմ միտքըս լողնորդ արի, և ի «ծովու հատակն իջուցի,
Վասն այն մարգարտին համար, որ ծովու հատակն լինի»:
(Ա. 203)

Ֆրիկը յեզ ժողովրդական ստեղծագործությունը միավագույն տաղերը («Փանդաս», «Ընդդեմ Փալաքին» և այլն) թե իրենց բովանդակությամբ (գեղմոկրատական մոտիվներով) և թե արվեստով (արտահայտչական միջոցներ) առնչվում են ժողովրդական բանահյուսության դուլալ ակունքների հետ։ Յեվ այդ բնական ու հասկանալի իւ միանդամայն։ Լինելով աշխարհական և ընչազուրկ մարդ, Ֆրիկը չեր կարող անտեղյան մնալ աշխատավորական խավերի ծոցից դուրս յեկած ժողովրդականանանուն յերգիչ—զուսանների բանավոր ստեղծագործություններին։ Մինչեռ հայ հին կղերական գրողներից շատերը վոչ միայն չեն ոգտագործում ժողովրդական բանահյուսությունը, այլ աեղտեղ հիշատակելով ժողովրդական քնարական յերգերի մի քանի տեսակներ, բառ չեն խնայում պարսավելու վերջինները, իրեր՝ «հեթանոսական», «պիղծ», «ճիվազային», «արբեցութեան» ու «կտիութեան» յերգեր, Ֆրիկը միջնադարյան մեր մի քանի լավագույն բանաստեղծների (Կ. Յերզնկացի, Դր. Ախթանարցի, Մ. Նաղաշ և այլն) նման, վոչ միայն չի խորշում ժողովրդական ստեղծագործությունից, այլ սիրում և տեղին ոգտագործում ե վերջինս, համարելով այն «խելօֆնուն ասած մասալ» կամ «սելօննուն խառա»։

«Ետիկ յեռներուն արա,
Խելսնուն ասած մասպէ,
Այս զոր բարձր է, ձիւն ունի,
Այս որ ցածն, ինչ խոշ կանանչ է»:

LITERATURE

«Մարիկ յեռներուն արա.
տելովնուն խրաս ների է.
Աւը բարձր յես, հոն ձուն կայ,
Աւը ցած է, ինչպիս կանանչ է»:
(կ. 36)

Ժողովրդական բանահյուսության տարբեր տեսակներից Ֆրիկն ամենից ավելի ոգտագործել և առաջներն ու ասացվածքները՝ Վերջիններիս միջոցով նա ընդգծել և իր շրջապատում տիրող սոցիալական և ընչքային անհավասարությունները՝ արտահայտել իր վերաբերմունքը՝ հուզզերն ու մտորումները, հասարակական, բարոյական այլ և այլ խնդիրների առթիվ։

Ժողովրդական բառ ու բանին ծանոթ ընթերցողը, կարդալով Ֆրիկի հոչակավոր «Գանդատ»-ի հետևյալ տողերը՝

«Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի և ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի

Մէկին հազար գեկան ոսկի,
Մէկին ոչ փող մի պղնձի.
Մէկին հազար հատ մարդարտի,
Մէկին ոչ ուլնիկ մի ապիկի...հայն,
(Տ. 146)

չի կարող չմտարերել՝ «Ա՛խ, աստված, վախ աստված, վորին կուտաս սելով փետ, վորին չես տա ցախ, աստված» ժողովրդական հայոնի ասացվածքը կամ որա մի շարք տարբերակները («Վուրին» ավար, վուրին՝ խավար», «Վորին ունի Շաքի Շիրվան, վորը չունի խեղդվելու չվան», «Վորուն կուտա բերդ ու դիվան, վորուն չի տար չարուխին չվան», «Վորին կուտաս Նախչան, վորին չես տա շարիխ չվան» և այլն), վորոնց մեջ այնքան սեղմ ու պատկերավոր արտացոլված եւ հարստահարված, աշխատավոր ժողովրդի տրտունջն ու բողոքը՝ տիրող սոցիալական անհավասարություններից, վերջիններիս կարծեցյալ հեղինակ աստծու դեմ, թե Ֆրիկի ժամանակ կարող ելին լինել նման ասացվածքներ, վորոնցից ողտված լիներ մեր բանաստեղծը, ընավ անհավանական չե։ Զե վոր այդ նույն

գարաշը ջանին են վերաբերում՝ վ. Այգեկցու և Մ. Գոշի
անունով մեղ հասած զբքային և ժողովրդական ծագում
ունեցող միջնադարյան մեր առակները, վորոնց մեջ հաճա-
խակի խոսվում ե ընչքային անհավասարությունների,
ձնշող և ձնշված դասակարգերի և վերջիններիս ներսում
տեղի ունեցող խուլ պայքարի մասին:

Ժողովրդական ասացվածքի մի նմուշ գտնում ենք
Ֆրիկի «Ընդդեմ ֆալաքին» խորագրով հայտնի տաղի մեջ:
Բողոքելով ճակատազրի տնորեն ֆալաքի դեմ, սրա՝ մարդ-
կանց վերաբերմամբ ունեցած անհավասար և անարդար
վարմունքի համար, Ֆրիկը ի պաշտպանություն աղքատ-
խելոքների, գրում ե.

«Ամէնն ի քեզնէ կուգա,
Դու պատճառ, և աստուած դատավոր,
Աղքատ իմաստուն լաւ է,
Քան հազար անդէտ դանձաւոր»
(Հե. 40)

Վորը հիշեցնում ե՝ «Ալքատ իմաստունը անգետ
հարուստից հաղար անդամ լավ ե» ժողովրդական հայտնի
ասացվածքը:

Մի այլ նմուշ գտնում ենք Ֆրիկի «Վասն Արդուն
Ղանին և Բուղային» վերնագրով պատմական սյուժե ու-
նեցող ընդարձակ տաղի մեջ: Խոսելով իր համեմատաբար
մեղմ բարքերի համար աշխատավոր ժողովրդի կողմից
գերադասելի՝ թաթար հարկահան—իշխան Արդունի դեմ,
նրա ստորադաս՝ դաժան և չար հարկահավաք Բուղայի
կամ Ղարաբողալի կողմից նյութվող դավերի մասին,
Ֆրիկը տեղին ողտագործելով՝ «հոր փորողը ինքը կընկնի
հորատակ» ժողովրդական ասացվածքը, գրում ե.

«Ով անմեղաց հոր կու փորէ.
Ինչն անկանի ի մեջ գըբին...»:
(Ա. 172)

Ժողովրդական ասացվածքի մի յերբորդ նմուշ գտնում

Հնգ ֆրիկի «Ով կու սիրէ կուժ ու կթխա» տաղում, ուր
նա խրատում ե մարդկանց ազատ մնալ աշխարհային վա-
յելքներից և մարմնական հաճույքներից, վորովհետեւ, ինչ-
պես ասում ե ժողովուրդը՝ «Երկու տերանց (հոգուն և
մարմնին. Ա. Դ.) մի հետ ծառայել չի լինի».

«Զինչ ցանկութիւն որ ի քեզ կայ,
Զամէնն ձգէ ազատ մընա.
Երկու տէրանց Երբ կարենաս՝
Հանց ծառայել, որ պիտենայ»:

(Տ. 190)

Ժողովրդական նույն ասացվածքը այլ առթիվ ոգտա-
գործել ե նաև Սայաթ-Նովան իր հայտնի «Առանց քիզ
ինչ կոնիմ սոյրաթն ու սազն» տաղի մեջ.

«Մե գուգունըն երկու զաղին ինչ անե,
Մի նոհան երկու պղին ի՞նչ անե.
Մե բազգանչին երկու բաղին ինչ անե,
Փերյանդ կուղե թաղա տընկիրըն մե մեկ»¹⁾:

Նույն «Ով կու սիրե կուժ ու կթխա» տաղում ֆրիկն
ունի նաև մի այլ յերկտող՝

«Երբ զարթնի տղայն ու լայ,
Գէմ, ծըցցընէ իւր մայըն զնա»,

վորը շատ նման ե «մինչև վոր տղան չլա, մայըը
ձիծ չի տա» ժողովրդական հայտնի ասացվածքին:
Ժողովրդական առակներով ու ասացվածքներով ե հա-
մեմված նաև ֆրիկին վերագրվող «Կուզես որ ազիզ կե-
նաս» հայտնի տաղը: Վերջինիս մեջ մի տեղ ֆրիկը
պանդխտություն գնացողի հաջողության միակ նախապայց-
մանը խելքն ու խոնարհությունը համարելով գրում ե,

1) Տես՝ Սայաթ-Նովա, Հայերեն խաղերի լիակատար ժողովածու,
առաջարանով և բառարանով, խմբագրությամբ Գ. Լևոնյանի, Պետհրատ
1935 թ., հջ 18:

«Մարդն որ ի խարիբութիւն երթայ,
Քէմ նորա շատ խելք պիտենայ,
Քան զամենն ցած կենայ,
Հապա թէ իւր բանն կու լինայ,
Մարիկ զուն ծառին արա,
Թե քանի՞ հիւնէր կայ ինայ,
Ա,ն ճիւղ որ զպտուղն ունի,
Քան զզարտակն է՞ր ցած կու կենայ»,
(Ա. 33)

վոր հիշեցնում ե՞ «Ծառը քանի բար (պտուղ) շատ
ունենա, զլուխը կախ կզցի» ժողովրդական ասացվածքը,
Մի այլ տեղ խոսելով խելոք և անխելք մարդկանց
մասին, և այն գերադասության մասին, վոր ունեն առա-
ջնները վերջինների համեմատությամբ, Ֆրիկը գրում ե-

«Զանդեատ անդգամ մարդւոյն հետ
երթալն խիստ դժար է...»,
* * * * *
«Հետ անդետին մի դատիր,
Թէ հազար որ գքեղ կու սիրէ...»,
(Տ. 38)

վոր հիշեցնում ե՞ «Խելոք մարդու հիդ քար կրիլը՝
լավ ե, քան գժի հիդ փլավ ուտիլը», «Խելոք դուշմանը՝
լավ ե, քան խել բարեկամը», «Խմաստունի հետ քար կրի,՝
հիմարի հետ կեր ու խում մի անի» և այլն ժողովրդական-
տարածված ասացվածքները, կամ՝

«Խելոքն ի յանխելքի մոտ,
Միտք արա, թէ լինչի նման է.
Ճրադն ի կուրին առջի
կու վառի, ինք տեսնելու չէ...»
(Կ. 36)

վոր հիշեցնում ե «Քոռին լոնչ, թե մոմը թանգ ե»,՝
«Քոռի ինչ վեջն ե, թե մոմը թանգ ե» և այլն ժողովրդա-
կան հայտնի ասացվածքները,

Բացի զերոհիշյալ ժողովրդական բուն առածներից ու ասացվածքներից ֆրիկի տաղերի մեջ այստեղ՝ այնտեղ՝ գտնում հնաք նաև մի շարք ժողովրդի վոգուն հարազատ առածանման ասույթներ, անեծքներ ու որհնանքներ: Բերենք մի քանի նմուշ միայն:

1. «Ինչ անեմ յեղի խելաց, երբ առաջի անունս աւիրի», կ. 39 (տես՝ «Հայի հետի խելքն ե գովելի»), «Հայի վերջի խելքն ե գոված» և այլն ժողովրդական ասացվածքները):

2. «Զըլորդ մարդկանց ըզտունն քակես առանց բահավոր», չե. 39 (տես՝ «Ճունդ քանդվի առանց բա») կամ «Ճունդ առանց բահ ու փետատ քանդվի» և այլն ժող. ասացվածքը):

3. «Ե՛յ, չարի, ամ, հերիք արայ ու ձգէ զքակդ ե յոլոր», չե. 40 (տես՝ «Աշխարհս չարի ե, պտուտ ե գալի», «Զարիսը դարձավ» և այլն ժողովրդական արտահայտությունները):

4. «Զի ընկներ իմ ջուրն ի յառուն»... Ա. 82 (տես՝ «Զուրն առուն ընկավ», «Ես ջուրն իր առվով կերթա», «Ճուրս առուն չընկավ» և այլն ժողովրդական ասացվածքները):

Առածների ու ասացվածքների, անեծքների ու որհնանքների հետ, և վերջիններից ավելի, ֆրիկն իր տաղերում առատորին գործ ե ածում նաև բազմաթիվ ժողովըրդական դարձվածքներ, վոճեր ու բառեր: Բերենք դրանցից մի քանիսը:

1. Ժողովրդական վօներ ու դարձվածքներ: Սաղ ու պայծառ գիլ ւ'ի գլոր, թուղթ ու զալամ, լերդ ու լեղի, խելք ու բասար, յետի խելք և այլն:

2. Ժողովրդական բառեր, Խապար, հնցկուն, պարապար, չարի, նաքազ, ըզորդ, ծուռ, պացիուն, ֆալաք, կտոր (հացի), անդալատ, ազիզ, զընձիլ, չըպան կամ չուպան, զահլա, ճուռապ, շիշա, ճուհար, մասալ, խոշ, հյունե, անկյումեն, հղեղ, ճիկեր, միրաթ, բազա (բազե), աճապ, հմբ, թապդիր, հանցեղ, ինչվի, հասրաթ, ժուկ, դեմ, ալնոր, հանչանք, մուրատ....

Ժողովրդական ստեղծագործությունը Ֆրիկի համար չի յեղել լոկ բովանդակություն՝ ոխելոքնուն խրատ» կամ «խելոքնուն ասած մասարք, իբրև ճարտարք բանաստեղծնրա ուշադրությունից չելին կարող վրիպել ֆոլլորին հատուկ արտահայտչական միջոցները՝ առածների ու ասացվածքների հարուստ նմանահնչյունություններն ու ներքին հանգերը, անհծքների ու որհնանքների, վոճերի ու ասույթների հակիրճ ու պատկերավոր լեզուն, ժողովրդական յերգերի բաղմագան ու ոլթմիկ չափերը...։ Ցեթե առաջին խնդիրների (ժողովրդական առածների և այն արտահայտչական միջոցների ոգտագործման) վերաբերմամբ, մենք բավարպում ենք լոկ հավանական յենթաղբությամբ, ապա վերջին խնդրի (ժողովրդական յերգերի տաղաչափական ձևերի ոգտագործման) մասին ունենք Ֆրիկի անմիջական վկայությունները, իր տաղերի մեջ նա մի քանի տեղ իրեն համար գրում ե թե՝ «Հատ մի հայելեն բաներ» և հորինել, շատ «հայերէն մասալ ու առակ» ասել:

Ինչպես հալոնի յե «հայերենը»-ը կամ «հայրեն»-ը, յեղել ե մեր ժողովրդական յերգերի ամենահին չափը, վորը շատ հնուց սիրված ե յեղել մեր գուսանների ու ժողովը դական յերգիչների կողմից և վորը ոգտագործել են նաև միջնադարյան հայ աշխարհիկ բանաստեղծներից մի քանիսը (Գր. Ախթամարցի, Մ. Նաղաշ և այլն):

Ֆրիկի ուշադրությունը զբավել ե «հայերենների» ոիթմիկ—յերաժշտական վոտանավորը (վորը կազմվում ե յերկու կարճ, 7 և 8 վանկանի տողերից՝ նույնահանգ կամ տողընդմեջ նույնահանգ տներից), վորի հետևողությամբ և նա զբել ե իր լավագույն տաղերից մի քանիսը:

* * *

Ֆրիկը հայ միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության ականավոր ներկայացուցիչներից մեկն եւ իր կյան-

քով և լավագույն ստեղծագործություններով նա սերտորեն կապված ե ժողովրդական ընդերքի հետ:

Հակառակ հայ միջնադարյան բանաստեղծների մեծամասնության, նա մեր առաջին աշխարհական հեղինակներ, զոր կրթվել ու դաստիարակվել ե վոչ թե վանքում, այլ կյանքում և քաջ հմուտ ե յեղել իր դարաշրջանի գրականության ու գիտությանը:

Հանդես գալով միջնադարյան պայմաններում, յերբ հասարակական կյանքում և գրականության մեջ միահեծան տեր ու տնօրին իր կղերա-ֆեոդալական դասակարգը, ֆրիկն իր ձայնը չի միացնում հոգեոր և աշխարհիկ տերերի կյանքն ու կենցաղը պատկերող և գովերգող սքեմավոր գրողների ձայնին, այլ դառնում ե իր հարազատ սոցիալական ամբողջի, գեմոկրատիայի իդեալերի ու վողորումների արտահայտիչը, նրա բողոքի ու ցասման յերգիչը:

Գունեղ և կենդանի գեղարվեստական պատկերներով և ներդաշնակ հանկերով ու յերաժշտական ոիթմիկ վոտանավորներով նա խիզախ ու համարձակ քննադատության և յենթարկում տիրող կարգերը, իր շրջապատի՝ շահագործման, անհավասարության ու անարդարության վրա խարսխված հասարակական վողջ կյանքը:

Ի հակալշիռ տիրող պաշտոնական գրականության ներկայացուցիչների, ֆրիկին հարազատ ե յեղել ժողովուրդը, նա ճանաչել ու ոգտագործել ե վերջինիս ստեղծագործությունը և փոխադարձաբար վայելել ե նրա սերն ու հարգանքը:

Ժողովրդի հետ ունեցած վերոհիշյալ սերտ կապի և իր բողոքող վոգու պատճառով ֆրիկը կենդանության ժամանակ արհամարհվել ու հալածվել ե տիրող դասակարգերի (աշխարհիկ ու հոգեոր ազնվականության) կողմից: Նույն պատճառով նա մոռացության ե տրվել ու թերագնահատվել նաև մահվանից հետո, կղերա-ֆեոդալական բանասերների և բուրժուալական հստես գրականագետների կողմից:

Միայն բանվոր դասակարգը, անցյալի կուլտուրակի ու գրականության լավագույն, դեմոկրատական հուշարձանների այդ միակ ժառանգը, կարող եր մոռացության վոզիների տակից հանել ֆրիկին, տալով նրան իր արժանի տեղն ու գնահատականը:

Հայաստանի կառավարության հայտնի վորոշումը՝ ֆրիկի ստեղծագործությունների հրատարակման մասին, դրա փայլուն ապացույցն եւ:

ՀԱՄԱԾԱՇԽՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա.—«Արարատ» ամսագիր, Եջմիածին, 1918թ. Հ Ա.-Դ, հունվար-մարտ և Հ-ԴԲ, ապրիլ-դեկտեմբեր:
2. Կ.—Կոստանյան Կարապետ, Շնոր ժողովածու Միջնադարյան Հայոց տաղերի և վոստանավորների», Գ. պրակ, 1896թ.,
3. Կ.—«Կոչնակ Հայաստանի», 1923թ.:
4. ՀԵ—«Հայ Եջեր», Փարիզ, 1912թ.:
5. ՊԳԹ—Պետական գրական թանգարանի ձեռագրերից:
6. Տ—Տեղիկանց Արիստակես վրդ, «Հայերդ», 1882թ.:

ԹՐԻԿԻ ՏԱՂԵՐԸ

Այսաեղ տալիս ենք Ֆրիկի մինչև այժմս հայտաբերված 21 տաղերը, վորոնցից 11-ը տպագրված են տարբեր ժամանակ, տարբեր տեղերում, իսկ 10 տակավինանտիպ են յեղել: Վերջիններս հայտնաբերել և ինստիտուտիս գիտ. աշխատակից Յե. Թորոսյանը, Յերևանի Պետական Գրական թանգարանի և Վաղարշապատի Մատենադարանի հայկական հին ձեռագիր—տաղարաններից: Այդ տաղերից մեկը՝ «Բարսղի ումէմն մարդոյ կոիւ եղեալ ընդաստուծոյ կու մեղաղրէ...» վերնագրով, Ֆրիկի հռչակավոր «Գանգատ»-ի մի նոր տարբերակն ե, վոր զգալիորեն տարբերվում ե մինչ այժմս հրատարակվածից:

Ֆրիկի վերոհիշյալ 21 տաղերը, ինչպես տպագրված, նույնպես և անտիպ, ունեն մի շարք վարիանտներ, վորոնց բաղդատությունը թողնում ենք Ֆրիկի ստեղծագործությունների ակագեմիական հրատարակությանը:

Տեքստը հրատարակության համար պատրաստել են Ինստիտուտիս գիտ. աշխատակիցներ՝ Ա. Ղանալանյանը (տպագրված նյութերը) և Յե. Թորոսյանը (անտիպ նյութերը),

Գ. Ա. Ն. Գ. Ա. Տ

ԲԱՐ Ի ԹՐԻԿ ԳՐԲՈՒՅՑ

Ասված արդար և հիբավի,
Յեվ վողորմած համենալնի.
Հանդես ունիմ բան մի վիճի,
Թե դու լսես քո ծառալի:
Այս և զարմանք հիանալի,
Վոր կու լինի վերա յերկրի.
Յեվ հիացումն ազգի ազգի,
Զոր տեսանեմք ի հաշխարհի:
Գեմ մեկ Աղամ եր ի գըախտին,
Յեվ մեկ Յեվա յուր նմանին.
Յեվ մեկ բարրառ համազգալին,
Մինչև կերյալ պտղո ծառին:
Արդ այս բանս և հիանալի,
Յեվ առավել զարմանալի.
Թե մեկ Աղամ և հ'եվայե,
Վերքան ազգեր ծնան լերկրի:
Ուրիշ լեզու ամեն մեկի,
Վոր մեկ մեկի վհչ հավանի.
Վոր մեկն և Հայ, մեկն Վրացի,
Մեկն Տաճիկ, մեկն Ասորի:

Մեկն ե ծընուտ Յերբայեցի,
 Յեղ մինն Արար, Հագալացի.
 Մեկն ե Ալան Արևորդի,
 Մինս ե Թովիչ և Ափխազի:
 Մեկն ե Քուրդ Քանանացի,
 Մինս ե Թաթար Թորդոմացի-
 Մինս ե Մուզալ Խըթայեցի,
 Մինս վաղաթա Սըմըրզնդի-
 Մինս ե Ֆուանդ Լատինացի,
 Մեկն ե Վենետ և Զենեցի.
 Մեկն ե Հոռոմ Հունացի,
 Յեղ մյուսն Ուռուզ և Հոնացի:
 Մինս ե Դաղմատ Սպանացի,
 Ծընունդ սըրբո ավաղանի.
 Հավատացեալ հայր և Վորդի
 Ու լերկրպագու քո սուրբ խաչի-
 Յեղ դավանող սըրբ կուսին,
 Մարիամու աստվածածնին.
 Խոստովանող յերբյակ և մի,
 Հայր և Վորդի և սուրբ հոգի:
 Այլ կամք ի ձեռս անորինի,
 Վոր կու վարեն անդին գերի-
 Վորքան քակեն յեկեղեցի,
 Քանի շինեն պիղծ մըզկիթնի.
 Քանի կանայս առնեն այրի,
 Յեղ վորքան վորբ քրիստոնելի.
 Վորքան արյուն հեղան յերկրի;
 Քանի առնեն բան խոտելի:
 Վորքան տանջեն զմեղ հաշխարհի-
 Յեղ կեղեքեն դկյանս մեր հայտնի.
 Յեղ դու ներես համենայնի,
 Ու անտես առնես զմեղ ի վըշի-
 Տեր վահ խնդրես վըեթ հայտնի,
 Յեղ վոչ ցուցանես ակն ամենի.

Զարդանկար / Ա. աղարշապարի
 Պետ. Ձեռագրատան - Մատենադա-
 րանի նախական հին ձեռագրերից)

Դիտես մարմին եմք մըսեղի,
Գեմ արձան չեմք ինչ յերկաթի:
Յեղեղն չեմք, կամ խոտ վայրի,
Վոր խանձ արկյալ ես կրակի.
Քան զանդաստանս փըշաբերի,
Կամ մացառաց ինչ կրակի:
Վոր բարկացար Հայոց ազգի,
Վորպես Հրեյիցն իսրայելի.
Զինչ բարկություն ի քեն թափի,
Նա ի վերա մեր գա կուտի:
Արդ յեթե չենք ինչ պիտանի,
Յեկ կամ չունենք գործ ինչ բարի,
Կամ քո սրտիդ եմք ատելի;
Վոր չարաբաք ըստ հրամանի,
Նա դու ջընջն զմեղ մեկ հետի,
Վոր քո բարի սիրտ հանգչի.
Թե այս կամոքդ քո կու լինի,
Ամենակալ աստված բարի:
Նա մեք տանեմք վորչափ պիտի,
Յեկ համբերեմք ամենայնի,
Այլ վոր վատուժն ե թող կորի.
Յեկ զոր կամիս թող այն լինի:
Այս ամենայն թող գա անցնի,
Զոր ասացի վասն իմ ազգի.
Յեկ միս եր բան քո հրամանի,
Արդար իրավ դատավորի:
Վոր մեկն ապրի տասն տարի,
Մեկն հարյուր այլ ավելի.
Մեկն վոչ ի տասն հասանի,
Յերկու յերեք ամսոց մեռնի:
Մեկինն մեկ վորդի լինի,
Ան որ անժամ նա մեռանի.
Մեկն այլ ունի շատ մի վորդի,
Անտի վոչ մազ մի չպակասի:

Այն վոր ծառայն ե՞ շատ ապրի,
Հարյուր տարվո ծերն յերկարի.
Յերեսնամյա մանուկն անկնի,
Ի հողի մեջն թափալի:
Այն որ աղջիկն ե՞ մեռանի,
Ատամնաթափ պառափս ապրի.
Ով կյանք ուզե՞ կյանքն կարճի,
Ով շատ ապրի՝ իսկի չժվի:
Ապա այս եր վոր կու լինի,
Յեվ թե հումմէ կա և հայտնի,
Վոր մեկն ունի բաղում վորդի,
Մեկն ընավ չունի վորդի:
Մեկն ի պապանց պարոնորդի,
Մեկն ի հարանց մուրող լինի.
Մեկին հաղար ձի և ջորի,
Մեկին վոչ ուլ մի, վոչ մաքի:
Մեկին հաղար գեկան վոսկի,
Մեկին վոչ փող մի պըղնձի.
Մեկին հաղար հատ մարգարտի,
Մեկին վոչ ունիկ մի ապակի:
Մեկին հաղար գառնով մաքի,
Մեկին վոչ մեկ չորքոտանի.
Մեկին բեհեղ և ծիրանի,
Մեկին բբդե շալ մի չանկի:
Մեկին ատլաս և զըզմզի,
Մեկին շապիկ մի չի հասնի.
Մեկին հարամըն հաջողի,
Մեկին հալալն կորուսի:
Մեկն ի զրկանացն հարըստի,
Մեկն յուրայնոցն աղքատասցի.
Մեկն ե ուժով զարմանալի,
Մեկն ե վախկոտ սարսափելի:
Մեկին ըռախտ և զըրեհի,
Ճոխով նըստիի պէտավ ձի.

Մեկ պոկիկ և անվարտիկ
Հետևակին առաջ փախչի:
Նա բարկությամբ ի հետ հասնի,
Զվիզն կըտրե և չողորմի.
Զկին և ըզդղայքն առնու գերի,
Յեվ հանց տանի, վոր ալ չթափի:
Իշխան գըրեր ես մեկ մեկի,
Քան զքանասար գայլ վոչխարի.
Կամ զերդ վազան նապաստակի,
Կամ քաջ առյուծ ամեն հոտի:
Զայս հարցաներ տերն ամենի;
Վոր մեծ ու փոքրն ճանաչի.
Յեվ բաղդավորն — հայտնի լինի
Յեվ անբաղդի սիրտն պատոի:
Զտոլվաթն ասա թե ուր լինի,
Յեվ բաղդավորն ուր գտանի,
Վոր ի շուրջ գամ տասն տարի,
Յեթե կաթիլմ' ինձ հանդիպի:
Զի թե թագվոր ե ի թախթի,
Կամ քահանա ե ի ըեմբի.
Յեվ կամ իշխան ե արքունի,
Կամ վորդի մեծ թագավորի:
Յեվ նա տոլվաթ և բաղդ չունի,
Յեվ վճէ շնորհ խոսից կարգի.
Նա թող հեղեղն զնա տանի,
Քարե կարկուտն այլ ավելի:
Անբաղդն զա ամոթալի,
Հեղ և հանդարտ առաքինի.
Գա և կանգնի հետին տեղի,
Անշուք անշնորք և անհարգի.
Բաղդավորն զա ճոճկըտալի,
Գա և նստի հավագ բարձի.
Լուծն ի փորին ի շուրջ անցնի,
Յեվ ալելու մի չի դիպնի:

Բայց վասն մեկ ավուր տռնի,
Վոր թե զատիկ, այլ տռն լինի,
Նա խաչամբույր յուրն շատ անկնի,
Մորթ և հրի և զադանի:
Անբաղդն ճորտ և ավագի,
Յեվ անհաջող զերդ զգերի.
Քան զմոնն հառջեն ի վառ լինի,
Յեվ ծառալէ քան դքրիստոսի:
Ծառայելոցն զեմ չհավանի,
Յեվ վհչ անուշ առ նա խոսի.
Միշտ ի հերես զանբաղդն ունի,
Հույժ անհանգիստ և անհարկի:
Յեվ բաղդավորն մեծարի,
Բազում հարկիք նա ընդունի:
Վոր թե կույր է, միականի,
Կամ խեղ և ծուռ միոտանի:
Յեվ դինչ այխպ առ նա լինի,
Ամենելն այն չերեի.
Այլ համենից նա մեծարի,
Յեվ յուր հարկիքն շատ լինի:
Ամենն ի բաղդն զա կուտի,
Թե հաստուծո տվյալ լինի.
Մեկն յուր կերպիթ և գովելի:
Աղվոր տեսակ հանաչելի:
Լեզուն բարի, քաղցրիկ խոսի,
Յերբ մարդ ըսե նա հավանի.
Նա և պատված յամեն տեղի,
Համեն մարդո և գովելի:
Մեկն ե ձեռոք աննմանի,
Հասյալ ուսման և արհեստի.
Հիմն արկան հատակք ծովի,
Կամուրջ կապե վերա գետի:
Մեկն կերպիվ և տնաղելի,
Ե ախտերես և աղտեղի.

Մեկի ձեռվին ե զերդ գողի,
Վոր վոչ կարե կուրդնել ջորի:
Մեկն ե խիստ սև, վորպես Հընդի,
Պըոկոշ, զազիր և գարշելի.
Մեկն ե չաղար կապուտ աչվի,
Կարճահասակ և փանաքի,
Մեկն ե ճռնշող և անճոռնի,
Կոպիտ, փալիտ, յերկայն աքվի.
Մեկն նըման ե հրեշտակի,
Յեղ շատ ունի նա գործ բարի:
Մեկն նըման ե չուդայի,
Սպանող, զամազ, գործող չարի,
Տեղի յեղյալ սատանայի,
Յեղ բնակարան դիվաց գասի:
Յես քեզ մեղա յերկնավորի,
Տյառն աստուծո ահեղ մեծի.
Քո դադաստանն ե հիրավի,
Նեաթով կուտաս ամեն մեկի:
Տեր քո կամացն ե աշխարհս լի,
Այդպես լինել զոր ասացի,
Քեզ որհնություն ի մենց տացի,
Ամենազոր տեառնդ հիսուսի¹):

1) Տես՝ Աբեսուս. զրդ. Տեղկանց, «Հայերդ», Թիֆլիս, 1882 թ.,
աջ 143—150:

ԱԱՐՍՈՂԻ ԹԱՄԵՄՆ ՖԱՐԴՈ ԿՈՒՆԻ ՅԵԳՅԱԼ
ԶԵԴԻ ԱՍՅՈՒՆՈ, ԿԱԻ ՄԵԴԱԴՐԵ ՅԵՎ, ՀԵՏՈ...¹⁾

Աստված արդար և հիրավի
Յեկ վողորմած համենայնեն.
Առ քեզ հանգես կամ ի վիճի,
Թե դու լսես քո ծառալին
Այս և զարմանք և հրաշալի,
Վոր կու լինի ի հաշխարհ.
Յեկ հիացումն աղդի աղդի,
Զօր տեսանեմք վերա յերկրի,
Գեմ մեկ Ապամ եր ի դրախտի
Յեկ մեկ Յեկա յուր նմանի.
Յեկ մի բարբառ Յերբայեցի,
Մինչև կերել պտղոյ ծառին

1) Այս վոտանավորը Ֆրիկի հոչակավոր «Քանգատի» մի վարիանտն է: «Քանգատ» վերնագիրը, զոր առաջին անգամ Տեկանցն Եթիւել, քմահաճ վերնագիր և, վորովհետև Ֆրիկի մինչև այժմ իմ ձեռքը բերած վոչ մի ձեռագիր վերնագիր չունի, ինչպես և այս վարիանտը չունի: Ձեռագիր տաղերն հաճախ ունենում են՝ «Ասացեալ Ֆրիկանն», «Բանք Ֆրիկին և», «Ֆիրիկ ճարտար աշխարհականէ» և այլն: Ներկա վարիանտը, զոր կրում և «Բարսղի ումեմն մարդու կովի յեղալ ընդ աստուծու և հետո...» (թերի) վերնագիրը, արտադրված և վաղարշապատի մատենադարանի 15-րդ դարի մի հին գրչու

ԱՌ, այս ե բան հիմանալի,
 Յեվ առավել դարձանալի,
 Վոր մեկ Ադամա և Յեվալի,
 Թե քանի՞ ազգեր ծնան հերկըի:
 Հաղար լիզու ամեն մեկի,
 Վոր մին միոյն վոչ հնազանդի,
 Մեկն ե հայ, մեկն ասորի.
 Մեկն Զիուտ, մեկն Վրացի:
 Մեկն ե Քուրթ Քանանացի,
 Մեկն ե Սրապ, Ասորեցի,
 Մեկն ե Ալան՝ Արևեցի,
 Մեկն ե Ֆուանդ՝ Արևմտցի:
 Յեվ այլ հարյուր ազգաց յերկըի,
 Վոչ գիտեն զհայր և զորդի,
 Կամ թե աստված կա պաշտելի,
 Տեր և քննող ամենի,
 Ամեն մարդ զինքն իրավ խոսի,
 . . . ելի մեկն ի . . .
 Մեկն ասե, յես եմ առաջի,
 Մեկն թե չկա ինձ նմանի,
 Յեվ այս ազգերս վոր եմք յերկըի,
 Նույն այս կերպիվս եմք ի վիճի:

Պրությունից (№ 3595): Այս վարիանտը հիմնովին տարբերվում է թէ
 Տեկանցի հրատարակած վարիանտից և թէ Պետ. Թանգարանի № 408
 տաղարանից հանված վարիանտից:

Այս վարիանտն ուշագրալ ե, բացի խոշոր տարբերություններից,
 նաև նրանով, վոր կրում ե «Բարսեղ» հեղինակի անունը, Տաղարանի
 վերնադիրը զրված ե յեղել կարմիր ներկով, վորը յեղծված ե և ու
 թանաքով վերականգնված ե, Բարսեղը, վորպես հեղինակ, կարող եր
 կասկածելի լինել յեթե վոտանավորի 9-րդ տան մէջ չլինել՝
 «Ամ, ցույց թե, վորմ ե պիտանի, վոր Բարսեղս այլ գիտուն լինի»
 հիշատակությունը: Ուստի կարելի յե յեղբակացներ վոր ջնջված վեր-
 նագիրը վերակառուցված ե հիշյալ տողերի հիման վրա:

Դժվար ե ասել թե Ֆրիկը նույն ինքն Բարսեղն ե, լուրջ բանա-
 սիրության առարկա յե այդ, վոր անհրաժեշտ ե հետագայում ճշտել:

ԱՌ, յույց, թե վրբ մե պիտանի,
Վոր ԲԱՐՍԵՂՄ այլ գիտուն լինի:
Զերկիր տվել ես Մահմետի,
Յեղ զկես յերկրիս Սատանայի,
Յորեկն ճորտ եմք Մահմետի,
Գլշերն խաբած Սատանայի:
Վոչ ունիմք դաշտ փախըստի,
Վոչ քարանձավս ապավինի,
Զի պատյալ են շուրջանակի
Սպանող գաղանք և վայրենի:
Դու խաչեցար մեջ աշխարհի,
Յեղ խաչ ասաց (?) թողեր հերկրի,
Այս ի՞նչ պատեհ, վոր կու լինի
Յեղ դիպն ի քո սիրութ չընկնի:
Մենք քո ծառայք եմք ի հալոնի,
Ստեղծված ձեռացդ արարողի
Զմեզ էր անտես առնես հերկրի
Յեղ կամ նախատ ամեն ազգի:
Դեմ քո ծնունդ եմք ավազանի,
Ու յերկրպագուք՝ քո սուրբ խաչի,
Ու սգանք ի ձեռն անորինի,
Վոր կու վարեն անդին գերի:
Քանի՞ քակեն յեկեղեցի,
Քանի՞ շինեն մզկիթընի,
Քանի՞ կանայք թողուն այրի,
Յեղ վորբ քրիստոնեյի:
Քանի՞ արյուն հեղուն հերկրի,
Քանի՞ առնեն բան խոտելի,
Քանի՞ տանջեն զմեզ հաշխարհի,
Յեղ դու ներես ամենայնի:
Վոր վոչ խնդրես վրեժ հայտնի
Յեղ վոչ հայտնես հունկն ամենի,
Գիտես, մարմին եմք մսեղի,
Դեմ արձան չեմք ինչ պղընձի:

Յեղեգն չեմք, կամ խոս վայրի,
Վոր խանձ արկւալ ես ի կրակի,
Զերթ զանդաստան վշաբերի,
Վոր բարկացար հայոց ազգի:
Զինչ բարկություն ի քեն թափի,
Նա ի վերա մեր գա կուտի,
Ապա թե չեմք ինչ պիտանի,
Յել կամ չունեմք գործ ինչ բարի,
Կամ քո սըտիդ եմք ատելի,
Վոր չար արաք ըստ հրամանի,
Նա դու ջնջե մեզ, մեր վորդի,
Վոր քո բարի սիրտդ հանգչի:
Այս ամեն թող գա ու անցի,
Այս գոր ասացի ի վեաս իմ ազգի,
Այս եր բան քո հզորի,
Արդարադաս դատավորի:
Վոր մէկն ապրի հարյուր տարի,
Մեկն վոչ ի տասն չհասանի,
Մեկին մեկիկ վորդի լինի,
Ան որ ու անժամ ինք մեռանի:
Հարյուրամյա ծերն ճգնի,
Երեսնամյա մանուկն ընկնի:
Այն վոր աղջիկն ե՝ մեռանի,
Ատամնաթափ պառավն ժրի:
Վոր կյանք ուզե՝ կյանքըն կարճի,
Վոր մահ ուզե՝ մահն չի հ[ասնի].
Ամահու (?) թողենք արժանի,
Ապա այսինչ, վոր կու լինի:
Բայց այս յում կա ու հայտնի,
Վոր մեկն ունի և վայելի,
Մեկն վոչ ունի ու վոչ վայելի,
Յել և կարոտ դոն մի հացի:
Մեկին բերդեր և քաղքընի,
Մեկն հոթեան մի կարոտի:

Մեկն ի պապանց պապք արքոնի,
Մեկն ի պապանց պապքի մոլորի,
Մեկին հաղար՝ ձի և ջորի,
Մեկին վոչ այծ մի ու վոչ մաքի,
Մեկին հաղար կապիճ վոսկի,
Մեկին վոչ փող մի պըղնձի:
Մեկին հաղար հատ մարգարտի,
Մեկին վոչ հուլ մի ապիկի,
Մեկին բեհեղք և ծիրանի,
Մեկին չուխա ասլիք չընկնի:
Մեկին ատլաս մոլըպի,
Մեկին շապիկ մի շնառնի,
Մեկին հարամն հաջողի,
Մեկին հալալըն կորընչի:
Մեկն ճոշնի և զրեհի,
Ճահով նստի ի տաճիկ ձի,
Մեկն բոկիկ և անվարտի,
Հառջին հետեակի կու փախչի:
Նա բարկությամբ ի հետ հասնի,
Զդլուխըն կտրե և չողորմի:
Զկին և զորդիքն առնու գերի,
Հայնց կու տանի, վոր այ չթափիր
Իշխան դրել ես մեկ մեկի,
Զերդ քան ասար գայլն վոչխարի,
Կամ վազան քերծ լապաստակի,
Կամ քաջ արծիվ ամեն հավի:
Զայս հանց արեր տեր ամենի,
Վոր մեծն և փոքն ճանաշի,
Յեվ տովլաթ վորն հայտնի լինի,
Յեվ անբախտին լեղին պատոի:
Զտովլաթն համեր թե մւը լինի,
Յեվ զբախտըն ցույց թե մւը գտովի,
Վոր իշուրջ զամ տասըն տարի,
Միթէ շալակ մ' ինձ հանդի [պի]:

Վոր թե թագավոր ե հաթոռի,
Կամ քահանա յե ի բեմի,
Յել կամ իշխան ե արքունի,
Կամ դուստր մեծ թագավորի,
Ու ինք տովլաթ և բախտ չունի.
Յել վոչ շնորհ խոսակարգի,
Նա թող հեղեղն զնա տանի,
Կամ ալին զինքն վոչ ծնանի:
Անբախտն գա ամոթալի,
Հեղ և հանդարտ ու առաքինի,
Գա և կանգնի կըսեր դասի,
Յել ինքն վոչ ինչ պարգև չունի.
Բախտնվորն գա ճոճկըտալի,
Գա և նստի հավաք դասի,
Լուծն ի փորին թե շուրջ անցնի,
Ու զալելու մի չդիպի:
Բայց վասն մել ավուր տոնի,
Վոր թե զատիկ և ծնունդ լինի,
Նա խաչամբույր յուր շատ ընկնի.
Յել տնորնեք և գաղանի:
Անբախտն ճորտ ե ավագի,
Յել զարիպուկ զերթ զգերի,
Առաջին զնա զմոմ ի վառ լինի,
Կու ծառայե զերթ քրիստոսի:
Ծառայելուն գեմ չհավանի,
Պահ մի վարե, պահ մի հաշտի
Յել յերերուն զանբախտն ունի,
Նա յուրմե հոռք չունի.
Բախտավորն համեն տեղ մեծարի,
Բազում հարկիք նա ընդունի,
Վոր կույր ե, միականի.
Կամ խեղ ու ծուռ կամ մի վոտանի:
Այլ զինչ վոր հայպ հինքն լինի,
Նա ամենկին այն չերկի,

Յեվ յուր հարկիք այլ հավելի,
Զի ամենի բախտն գա և կուտի:
Մեկն յուր կերպովն ե գովելի,
Աղվոր տեսակ ճանաչելի,
Լեզուն բարի, քաղցր խոսի,
Յեվ մեծարած համեն տեղի:
Մեկն ձեռոքն աննմանի,
Հասյալ հուսման և արվեստի,
Հիմնարկ անե հատակ ծովի,
Կամուրճ կապե վերա գետի:
Մեկն կերպիվն ե տանջելի,
Ե գեշերես և աղտեղի,
Մեկի ձեռնվին ե զերթ գողի,
Որ չմարթե պաղնել ջորի:
Մեկն նման ե հրեշտակի
Յեվ շատ ունի նա դործք բարի,
Մեկն նման ե Հուդայի,
Վոր և մատնող և հավանի:
Յես քեզ մեղա յերկնավորի,
Տյառն աստուծոյդ ահեղ մեծի.
Բո դատաստանդ ե հիրավի,
Նիւթեն տաս ամեն մեկի:

ԱՆԴԻՆՄ ՖԱԼԱՎԻՆ

ԵՇ Փալաք, յերբ ծովիս մարդուն, զորն ի բուն փորեա
նորա հոր,
Հորժամ դու քակես ըզչարխն ու չթողուս վոր դառնա
վոլոր,
Սահուն վ' երերուն պահես հաստընվորս ի գիշ'վ ի գըլոր,
Կապիճ սի չարե ցուցնես թե զայդ լից ի հոգ'վ ի ցընոր (?):

ԵՇ չարխ, ըզվատին տունըն կու լցնես ակով դու
բոլոր,
Զաղեկն ի հերկիր ի վար վըտարես վոր ժողովե կըտոր.
Զայն վոր խողարած չվայելի՝ կու զուգես ահեղ ձիավոր,
Յեկ զըղորդ մարդկանց ըզտունըն քակես առանց բահավոր:

Յալաք, թէ քեզ վատ ասեմ նա կասես թէ մարդն ե
մոլոր.
Թե չե ի գիտուն մարդն ե՞ր նայիս հ'երակ դու խոլոր.
Զանգետ ու ըզնաքաս մարդն հաստընվորս առնես մեծավոր.
Զիմաստուն մարդկաց ըզհացն կու ձըգես ի սար կամ ի ձոր:

Ե՞յ Զարիս, յես քեզ վո՞նց ավտամ յերբ չունիս զոչ
վոք կարեվոր,
ունչ դավա՛վ վոչ յերդում ունիս վոչ վոչ հավատ, ով գու
նենգավոր.
Զով վոր կու սիրես այսոր՝ կու դընես ի հոսկի աթոռ.
Հաղիմն յերբ ձըգես հ'աչաց՝ հավասարես հողուն մոխրավոր:

Հորժամ վոր ի հ'ետ քակիս ու ձըգես ի հ'աչքըդ խոլոր,
Վոչ թուղթ վոչ դալամն ոդտե՛ վ վոչ հարյուր հազար
ձիավոր.
Տաս ի վիզն վ ի վայր ձըգես, չիմըռես զոչ վոք թազավոր,
Հընցգուն քարափով ածես՝ վոր չոգնե հազար սմբավոր:

Ե՞ր չես գու առներ ըղորդ դատաստան, այ ծուռ
դատավոր.
Ֆալք, դու ծըռին ընկեր վ ըղորդին ես խիստ նենգավոր.
Ե՞յ Զարիս, ամ քեզ ի՞նչ ասեմ, քան զամենն ես խիստ
գու մոլոր.
Զերկինք ու զերկիր և զծով կու պատես դուն հ'որ մի
բուռը:

Զհիմարքն ընտրեցիր աղեկ, վ իմաստնոց դըլուխն
ե ի կոր.
Ծուռ ե, զինչ վոր գու կ'առնես՝ մվ լինի հավան քեզ
այդոր.
Ֆարաքն պացիսուն կուտա՝ «Մի հաջեր, անգետ հալեվոր,
«Քանի ֆալաք եմ յեղեր, չեմ տեսեր քանց ըղքեզ մոլոր:

«Զարյունդ ի վըրաս ձըգես՝ թե ֆալաքն ե ծուռ
դատավոր,
«Զգիտես թե արարչեն լինի՝ զով կամի առնե մեծավոր:
«Դարձյալ կու ասե ֆալաքն ընդ աղքատ և ընդ մեծավոր,
«Հազար թե ֆալաք եմ յես, չեմ կարող վոր տամ քեզ
կըտոր:

«Հրամանն հ'աստուծու լինի՝ ես զուգեմ ըղքեղ
թագավոր,
«Յերբ վոր չաջողե աստված՝ ով կարող ե տալ քեզ կըտոր»:
Ֆալնք, քեզ մեղ ով դընէ, զինչ առնես ամենն ե աղվոր,
Բայց ի մեր մեղացն լինի, վոր հայի աստված մեղ խոլոր:

Գիտես ըստալոյ տեղին, զանարժանն ու զարժանավոր.
Բայց մեղ կու թըլի այսհանց, թե դու չես աղվոր
դատավոր,
Զամենն ե հաշվով զուգեր անդալատ աստված դատավոր,
Ե՞լ Զարիս, ամ հերիք արա, ու ձըգե ըղքակդ ի հ'ոլոր:

Դարձն զչաբությունս հիսնե ու փոխե զինչ հին
կա ի նոր.
Թե չար թե բարի, թե դուր թե դըժար, որ իհաստընվոր,
Ամենն ի քեղնե կուգա, դու պատճառ, 'վ աստված դատավոր,
Աղքատ իմաստուն լավ ե, քան հազար անգետ զանձավոր:

Աստենս նա չունի հոգի 'վ ի հ'անդենն ե դառն ու
մոլոր,
